

# Ավետարանի Ուսուցում և Ուսումնասիրություն

*Ձեռնարկ Սեմինարիաների և Կրոնի Ինստիտուտների Ուսուցիչների և Ղեկավարների համար*

# Ավետարանի Ուսուցում և Ուսումնասիրություն

*Ձեռնարկ Սեմինարիաների և Կրոնի Ինստիտուտների Ուսուցիչների և Ղեկավարների համար*

Հրատարակվել է Հիսուս Քրիստոսի Վերջին
Օրերի Սրբերի Եկեղեցու կողմից
Սոլթ Լեյք Սիթի, Յուտա

Ընդունվում են մեկնաբանություններ և ուղղումներ: Խնդրում ենք
ուղարկել դրանք, ներառյալ սխալները, հետևյալ հասցեյով.
Seminaries and Institutes of Religion Administration
50 E. North Temple Street, Floor 9
Salt Lake City, UT 84150-0009, USA
Էլ. հասցեն: ces-manuals@ldschurch.org

Խնդրում ենք, գրեք ձեր անունը, հասցեն, ծուխը և ցիցը: Չմոռանաք գրել ձեռնարկի
վերնագիրը: Այնուհետև առաջարկեք ձեր մեկնաբանությունները:
© 2012 by Intellectual Reserve, Inc.
Բոլոր իրավունքները պաշտպանված են:
Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում
Անգլերենի հաստատումը. 12/11
Թարգմանության հաստատումը. 12/11
Gospel Teaching and Learning-ի թարգմանությունը
Armenian
10581 201

# Բովանդակություն

Նախաբան . . . . . V
Ուսուցանել Փրկչի եղանակով . . . . . V

Նախաբան . . . . . IX
Եկեղեցու Կրթական Համակարգը . . . . . IX
Սեմինարիաներ և Կրոնի Ինստիտուտներ . . . . . IX

1. Նպատակը . . . . . 1
Մեր Նպատակը [1.1] . . . . . 1
Ապրել [1.2] . . . . . 2
Ուսուցանել [1.3] . . . . . 6
Կառավարել [1.4] . . . . . 9

2. Ավետարանի ուսուցման և ուսումնասիրության հիմունքները . . . . . 12
Ուսուցանել և սովորել Հոգու միջոցով [2.1] . . . . . 13
Զարգացնել սիրո, հարգանքի և նպատակով սովորելու մթնոլորտ [2.2] . . . . . 16
Ուսումնասիրել սուրբ գրությունները ամեն օր և կարդալ դասընթացի տեքստը [2.3] . . . . . 24
Հասկանալ սուրբ գրությունների և մարգարեների խոսքերի համատեքստը և բովանդակությունը [2.4] . . . . . 29
Գտնել, հասկանալ, զգալ ավետարանի վարդապետությունների ու սկզբունքների ճշմարտությունն ու կարևորությունը և կիրառել դրանք: [2.5] . . . . . 32
Բացատրել ավետարանի վարդապետությունները և սկզբունքները, կիսվել դրանցով և վկայել դրանց մասին [2.6] . . . . . 39
Սերտել սուրբ գրությունների կարևոր հատվածները և հիմնական վարդապետությունները [2.7] . . . . . 41

3. Ուսուցանել սուրբ գրությունները Սեմինարիաներում և Կրոնի Ինստիտուտներում . . . . . 46
Միացնել ավետարանը ուսուցանելու և ուսումնասիրելու հիմունքները [3.1] . . . . . 47
Ղուկաս Ե. Օրինակ [3.2] . . . . . 51

4. Նախապատրաստվել ուսուցանելուն . . . . . 57
Անձնական պատրաստվածություն [4.1] . . . . . 57
Ուսանողի պատրաստվածություն [4.2] . . . . . 60
Դասի նախապատրաստություն [4.3] . . . . . 61

5. Ուսուցման մեթոդներ, հմտություններ և մոտեցումներ . . . . . 71
Հարցեր [5.1] . . . . . 71
Դասարանային քննարկումներ [5.2] . . . . . 77
Միասին կարդացեք սուրբ գրությունները դասարանում [5.3] . . . . . 79
Ուսուցչի մատուցումը [5.4] . . . . . 80
Պատմություններ [5.5] . . . . . 81
Փոքր խմբերով քննարկումներ և հանձնարարություններ [5.6] . . . . . 83
Գրավոր վարժություններ [5.7] . . . . . 84
Գրատախտակ [5.8] . . . . . 85
Առարկաներ և նկարներ [5.9] . . . . . 86
Տեսալսողական և համակարգչային ներկայացումներ [5.10] . . . . . 87
Երաժշտություն [5.11] . . . . . 92
Ընդհանուր խորհուրդ և նախազգուշացում [5.12] . . . . . 93

6. Շարունակել զարգանալ որպես ուսուցիչ . . . . . 96
Տիրոջ խոստումը [6.1] . . . . . 97

Ցուցիչ . . . . . 99



# Նախաբան

«Երբ մենք սկսում ենք վերլուծել ինքներս մեզ և փնտրում ենք կատարելագործել մեզ որպես ուսուցիչներ, ի՞նչ ավելի լավ օրինակ մենք կարող ենք գտնել: Ի՞նչ ավելի լավ ուսումնասիրություն մենք կարող ենք կատարել, քան վերլուծել մեր գաղափարները, նպատակները և մեթոդները, և համեմատենք դրանք Հիսուս Քրիստոսի գաղափարների, նպատակների և մեթոդների հետ» (Բոյդ Ք. Փաքեր, *Teach Ye Diligently*, rev. ed. [1991], 22):

## Ուսուցանել Փրկչի եղանակով

Մի պահ խորհեք այն մասին, թե ինչ գիտեք Փրկչի մասին: Կարո՞ղ եք մտովի տեսնել Նրան՝ Իր աշակերտները հավաքված Իր շուրջը: Կարո՞ղ եք տեսնել Նրան բազմությանն ուսուցանելիս Գալիլեայի ծովի մոտակայքում կամ ջրհորի մոտ կնոջ հետ անձամբ խոսելիս: Ի՞նչ եք նկատում Նրա ուսուցանման և առաջնորդելու եղանակների հետ կապված: Ինչպե՞ս էր Նա օգնում ուրիշներին սովորել, աճել հոգևորապես և դարձի գալ Իր ավետարանի միջոցով:

Նա սիրում էր նրանց, աղոթում էր նրանց համար և անընդհատ ծառայում էր նրանց: Նա հարմար պահեր էր գտնում նրանց հետ լինելու համար և Իր սերը արտահայտելու համար: Նա գիտեր նրանց հետաքրքրությունները, հույսերը և ցանկությունները և թե ինչ էր կատարվում նրանց կյանքում:

Նա գիտեր, թե ովքեր էին նրանք և ով կարող էին դառնալ: Նա յուրահատուկ եղանակներ էր գտնում, որպեսզի օգներ նրանց սովորել և զարգանալ այնպիսի ճանապարհներով, որոնք հարմար էին հատկապես իրենց համար: Երբ նրանք դժվարանում էին ինչ-որ բան անել, Նա չէր հիասթափվում նրանցից, այլ շարունակում էր սիրել և ծառայել նրանց:

Նա նախապատրաստվում էր սովորեցնելու համար՝ ժամանակ անցկացնելով միայնության մեջ աղոթքով ու ծոմով: Ամենօրյա մեկուսի պահերին Նա փնտրում էր Իր Երկնային Հոր առաջնորդությունը:

Նա օգտագործում էր սուրբ գրությունները, որպեսզի ուսուցաներ և վկայեր Իր առաքելության մասին: Նա սովորեցնում էր մարդկանց ինքնուրույն մտածել սուրբ գրությունների վերաբերյալ և օգտագործել դրանք իրենց անհատական հարցերի պատասխանները գտնելու համար: Նրանք ջերմություն էին զգում իրենց սրտերում, մինչ Նա սովորեցնում էր Աստծո խոսքը զորությամբ և իշխանությամբ, և նրանք համոզվում էին իրենց մեջ, որ սուրբ գրությունները ճշմարիտ են:

Նա կիսվում էր հասարակ պատմություններով, առակներով և իրական կյանքի օրինակներով, որոնք հասկանալի էին նրանց համար: Նա օգնում էր նրանց բացահայտել ավետարանական դասեր իրենց իսկ փորձառություններում և իրենց շրջապատող աշխարհում: Նա խոսում էր ձկնորսության, մանկան լույս աշխարհ գալու և արտերում աշխատելու մասին: Իրար նկատմամբ ուշադիր լինելու մասին ուսուցանելու համար Նա պատմում էր կորած ոչխարին փրկելու պատմությունները: Իր աշակերտներին Երկնային Հոր հոգատարությանը վստահել սովորեցնելու համար Նա հորդորում էր նրանց «մտիկ տալ դաշտի շուշաններին»:



Նա հարցեր էր տալիս, որոնք ստիպում էին նրանց մտածել և խորությամբ զգալ: Նրան անկեղծորեն հետաքրքրում էին նրանց պատասխանները և Նա ուրախանում էր նրանց հավատքի արտահայտություններով: Նա նրանց հնարավորություն էր տալիս իրենց ունեցած հարցերը տալու և իրենց սրտի խորքում եղածով կիսվելու համար, և Նա պատասխանում էր նրանց հարցերին և լսում էր նրանց փորձառությունները: Նրա սիրո շնորհիվ նրանք ապահով էին զգում իրենց մտքերը և անձնական զգացմունքները կիսելիս:

Նա հրավիրում էր նրանց վկայել, և մինչ նրանք անում էին այդ, Հոգին դիպչում էր նրանց սրտերին: «Ո՞վ էք ասում ինձ համար, թե լինիմ», - հարցրեց Նա: Երբ Պետրոսը պատասխանեց, նրա վկայությունը ամրացավ. «Դու ես Քրիստոսը՝ կենդանի Աստծոյ Որդին»:

Նա վստահում էր նրանց, նախապատրաստում էր նրանց և տալիս էր նրանց կարևոր պարտականություններ՝ սովորեցնելու, օրհնելու և ծառայելու ուրիշներին: «Գնացէք բոլոր աշխարհք, ավետարանը քարոզեցէք ամեն արարածի», - պատվիրեց Նա նրանց: Նրա նպատակն էր օգնել նրանց դարձի գալ ուրիշներին ծառայելու միջոցով:

Նա հրավիրեց նրանց հավատքով գործել և ապրել Իր սովորեցրած ճշմարտություններով: Իր բոլոր ուսմունքներում Նա կենտրոնանում էր Իր հետևորդներին օգնելու վրա, որ ապրեին ավետարանով իրենց ողջ սրտով: Սա իրագործելու համար, Նա հնարավորություններ էր գտնում նրանց համար սովորելու զորեղ փորձառություն-



ների միջոցով: Երբ Նա հայտնվեց նեփիացիներին, Նա հրավիրեց նրանց մեկ առ մեկ գալ Իր մոտ, որպեսզի նրանք կարողանային անձամբ տեսնել, շոշափել և ճանաչել Իրեն: Երբ Նա զգաց, որ նրանք ամբողջությամբ չէին ընկալում իր ուղերձը, Նա հրավիրեց նրանց տուն գնալ և պատրաստվել, որ վերադառնային և ավելի շատ բան սովորեին:

Ամեն իրավիճակում Նա նրանց օրինակն ու ուսուցիչն էր: Նա նրանց աղոթել սովորեցրեց նրանց հետ աղոթելով: Նա նրանց սիրել ու ծառայել սովորեցրեց նրանց սիրելու ու ծառայելու միջոցով: Նա նրանց սովորեցրեց, թե ինչպես ուսուցանել Իր ավետարանը, այն ուսուցանելու միջոցով:

Պարզ ասած, Փրկչի սովորեցնելու եղանակը տարբերվում է աշխարհի սովորեցնելու եղանակից:

Այսպիսով, ձեր սրբազան կոչումն է սովորեցնել այնպես, ինչպես Փրկիչը սովորեցրեց: Մինչ դուք դա անեք, երիտասարդները իրենց սրտերում տեղ կտան, որպեսզի ավետարանի սերմը սերմանվի, ուռչի և աճի: Սա կառաջնորդի, որպեսզի դարձի գան, որն էլ ձեր ուսուցման գլխավոր նպատակն է: Մինչ դուք օգնեք երիտասարդներին դարձի գալ, դուք կօգնեք նրանց նախապատրաստվել հետևելու Փրկչին իրենց ողջ կյանքի ընթացքում` միսիա ծառայել, ստանալ տաճարային արարողություններ, արդարակյաց ընտանիքներ ունենալ և կառուցել Աստծո թագավորությունը ամբողջ աշխարհում:



# Նախաբան

## Եկեղեցու Կրթական Համակարգը

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին ունի Եկեղեցու Կրթական Համակարգ (ԵԿՀ), որը գործում է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Կրթության Վարչության և Հոգաբարձուների խորհրդի ղեկավարման ներքո։ Առաջին Նախագահության անդամները, Տասներկու Առաքյալների Քվորումի ընտրված անդամներ և այլ Բարձրագույն Իշխանություններ և Եկեղեցու բարձրագույն պաշտոնյաներ Կրթության Վարչության անդամներ են։

Եկեղեցու Կրթական Համակարգի առանձին մասեր են հանդիսանում Սեմինարիաները և Կրոնի Ինստիտուտները, Բրիգամ Յանգի Համալսարանը, Բրիգամ Յանգի Համալսարանը-Այդահո, Բրիգամ Յանգի Համալսարանը-Հավայան կղզիներ և ԼԴՍ Բիզնեսի Քոլեջը։

## Սեմինարիաներ և Կրոնի Ինստիտուտներ

Սեմինարիաները և Կրոնի Ինստիտուտները (ՍևԻ) աշխատանքային օրերին ապահովում են կրոնական կրթություն պատանիների և երիտասարդ ամուրիների համար։ Սեմինարիաները և Կրոնի Ինստիտուտները նաև ղեկավարում են տարրական և միջին դպրոցները Միացյալ Նահանգներից դուրս գտնվող որոշ տարածքներում։

Սեմինարիաներում և Կրոնի Ինստիտուտներում մեր խնդիրը միայն կրթությունը չէ, այն կրոնական կրթությունն է։ Կրոնական կրթությունը ունի հավերժական ակնկալիքներ և պահանջում է Տիրոջ Հոգու ազդեցությունը։ Խոսելով սեմինարիայի և ինստիտուտի ուսուցիչների հետ՝ Նախագահ Ջ. Ռուբեն Քլարկ Կրտսերը ուսուցանել է. «Դուք՝ ուսուցիչներ, ունեք մեծ առաքելություն։ Որպես ուսուցիչներ դուք կանգնած եք կրթության ամենաբարձր գագաթին, քանի որ ուսուցման ոչ մի տեսակ, իր արժեքավորությամբ ու հեռու հասնող ներգործությամբ, չի կարող համեմատվել նրան, ինչի հետ դուք գործ ունեք՝ մարդու երեկվա հավերժության, այսօրվա մահկանացության և վաղվա անվերջության հետ» (*The Charted Course of the Church in Education,* rev. ed. 1994, 9)։

Հազարավոր սեմինարիայի և ինստիտուտի ուսուցիչներ և ղեկավարներ աշխարհով մեկ օգնում են Եկեղեցու պատանիներին և երիտասարդներին սովորել Հիսուս Քրիստոսի ավետարանը և ապրել համաձայն դրա սկզբունքների։

Ուսուցիչներին իրենց ջանքերում աջակցելու համար է կազմվել *Ավետարանի ուսուցում և ուսումնասիրություն* այս ձեռնարկը։ Այն շատ հարուստ գիրք է։ Ուսուցիչները պետք է ծանոթ լինեն դրա բովանդակությանը և նորից ու նորից անդրադառնան դրան, կենտրոնանալով այն մասերի վրա, որոնք առավելագույնս կարող են օգնել իրենց։ Մինչ ուսուցիչները ուսումնասիրեն այս ձեռնարկը և առաջնորդություն փնտրեն Տիրոջից, Նա կոգեշնչի նրանց պատրաստվելիս, կամրացնի նրանց հարաբերությունները ուսանողների հետ, կօրհնի նրանց ուսուցումը և կօրհնի նրանց Հոգով, որպեսզի ավելի լիարժեք ձևով իրագործվի Իր աշխատանքը։

# Սեմինարիաների և Կրոնի ինստիտուտների նպատակը

Մեր նպատակն է օգնել երիտասարդներին և երիտասարդ չափահասներին հասկանալ Հիսուս Քրիստոսի ուսմունքները և Քավությունը և ապավինել դրանց, արժանի լինել տաճարի օրհնություններին և պատրաստել իրենց, իրենց ընտանիքներին և մյուսներին իրենց Երկնային Հոր հետ հավերժական կյանքին:

Մեր նպատակին հասնելու համար.

## Ապրել

Մենք ապրում ենք համաձայն Հիսուս Քրիստոսի ավետարանի և ձգտում ենք ունենալ Հոգու ընկերակցությունը: Մեր պահվածքը և հարաբերությունները օրինակելի են տանը, դասարանում և համայնքում: Մենք շարունակ ջանում ենք կատարելագործել մեր գործելակերպը, գիտելիքը, մոտեցումները և բնավորությունը:

## Ուսուցանել

Մենք ուսուցանում ենք ուսանողներին ավետարանի վարդապետությունները և սկզբունքները, ինչպես տրված են սուրբ գրություններում և մարգարեների խոսքերում:Այդ վարդապետությունները և սկզբունքները ուսուցանվում են այնպիսի եղանակով, որը տանում է դեպի ըմբռնում և վեհացում: Մենք օգնում ենք ուսանողներին իրականացնել իրենց դերը ուսումնական գործընթացում և պատրաստվել ուսուցանել ավետարանը մյուսներին:

## Կառավարել

Մենք պատշաճ ձևով ենք կառավարում մեր ծրագրերը և միջոցները: Մեր ջանքերը օգնում են ծնողներին կատարել ընտանիքներն ամրացնելու իրենց պարտականությունը: Մենք սերտորեն աշխատում ենք քահանայության ղեկավարների հետ, հրավիրելով ուսանողներին մասնակցել և ապահովելով հոգևոր միջավայր, որտեղ ուսանողները կարող են շփվել միմյանց հետ և սովորել միմյանցից:

# 1

# Նպատակը

Հիսուս Քրիստոսի ավետարանի ուսուցիչներին տրվում է սրբազան վստահություն: Նրանց նպատակը անցնում է պարզապես դաս սովորեցնելու սահմաններից: Երեց Դալլին Հ. Օուքսն ասել է. «Ավետարանի ուսուցիչը երբեք չի բավարարվի զուտ ուղերձ տալով կամ առակ քարոզելով: Ավետարանի իդեալական ուսուցիչը ուզում է աջակցել Տիրոջ աշխատանքին՝ իրականացնել Նրա զավակների հավերժական կյանքը» (“Gospel Teaching,” Ensign, Nov. 1999, 80):

Սեմինարիայի և Կրոնի Ինստիտուտի նպատակը պարզ ուղղվածություն է տալիս ուսուցիչներին և ղեկավարներին Տիրոջ աշխատանքին աջակցելու իրենց ջանքերի վերաբերյալ:

## Մեր Նպատակը [1.1]

**Մեր նպատակն է օգնել երիտասարդներին և երիտասարդ չափահասներին հասկանալ Հիսուս Քրիստոսի ուսմունքները և Քավությունը և ապավինել դրանց, արժանի լինել տաճարի օրհնություններին և պատրաստել իրենց, իրենց ընտանիքներին և մյուսներին իրենց Երկնային Հոր հետ հավերժական կյանքին:**

Երկնային Հայրը ցանկանում է, որ Իր զավակներից յուրաքանչյուրը ունենա հավերժական կյանք (տես Մովսես 1.39): Փրկիչն ուսուցանել է. «Սա է յաւիտենական կյանքը, որ ճանաչեն քեզ միայն ճշմարիտ Աստուած. եւ նորան որ ուղարկեցիր՝ Յիսուսին Քրիստոսին» (Հովհաննես ԺԷ.3): Ուստի, կրոնական կրթությունը կենտրոնանում է ուսանողներին օգնելու վրա, որպեսզի նրանք ճանաչեն և սիրեն իրենց Երկնային Հորն ու Նրա Որդուն՝ Հիսուս Քրիստոսին և օգնեն ուսանողներին հասկանալ Փրկչի ուսմունքները և Քավությունը և ապավինել դրանց:

Հիսուս Քրիստոսի Քավությունը առանցքային դեր ունի փրկության ծրագրում: Դա այն հիմնական ճշմարտությունն է, որի վրա հիմնված են ավետարանի վարդապետություններն ու սկզբունքները և պետք է լինի ավետարանի ողջ ուսուցման և ուսումնասիրության սրտում: Երեց Բոյդ Ք. Փաքերը վկայել է, որ Քավությունը «Քրիստոնեական վարդապետության հենց արմատն է: Դուք կարող եք շատ բան իմանալ ավետարանի մասին, որը ճյուղեր է զցում այդտեղից, սակայն եթե դուք միայն գիտեք ճյուղերը և այդ ճյուղերը կապված չեն այդ արմատի հետ, եթե դրանք կտրված են այդ ճշմարտությունից, այդտեղ չի լինի ոչ կյանք, ոչ իսկություն, ոչ էլ դրանցում կլինի փրկություն» (“The Mediator,” *Ensign*, May 1977, 56):

Երբ ուսանողները սովորում են Հիսուս Քրիստոսի մասին, հետևում են Նրա ուսմունքներին և օրինակին և կիրառում են Նրա Քավությունը իրենց կյանքում, նրանք կարող են ուժ ստանալ և ունենալ



*Ծանուցում*

ներման, ապաքինման և դարձի գալու փորձառությունը: Երեց Հենրի Բ. Այրինգը սովորեցրել է.

«Մենք պետք է մեծացնենք մեր տեսադաշտը: Մենք պետք է պահենք նպատակները, որոնք մենք միշտ ունեցել ենք. ցուցակագրումը կանոնավոր հաճախելիությունը, ավարտելը, սուրբ գրությունները իմանալը, Սուրբ Հոգու կողմից ճշմարտությունը հաստատելու զգացմունքի փորձառությունը: Ի հավելումն, մենք պետք է մեր նպատակներում ունենանք միսիան ու տաճարը: Սակայն ուսանողները ավելի շատ կարիքներ ունեն այն ժամանակահատվածում, երբ նրանք մեր ուսանողներն են: . . .

Հիսուս Քրիստոսի պարզ ավետարանը պետք է հասնի ուսանողների սրտերին Սուրբ Հոգու զորությամբ: . . . Նրանց հետ կապված մեր նպատակը պետք է լինի այն, որ նրանք ճշմարտապես դարձի գան առ Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանը, մինչ նրանք մեզ հետ են» (“We Must Raise Our Sights” [CES conference on the Book of Mormon, Aug. 14, 2001], 2):



**«Մինչ մենք սովորեցնում ենք մեր երիտասարդներին սիրել Փրկիչ Հիսուս Քրիստոսին, նրանք կդառնան Ուսուցչի ճշմարիտ հետևորդներ: Այս գործընթացը կնախապատրաստի նրանց դառնալ հավատարիմ, սիրող ամուսիններ ու հայրեր, կանայք ու մայրեր՝ հավերժական ընտանիքների ղեկավարներ: Տաճարները կդառնան նրանց կյանքի բնական ու կարևոր մասը: Նրանք կդառնան միսիոներներ, ովքեր ծառայում են Տիրոջը միսիաներում որպես երիտասարդներ և ավելի ուշ որպես հասուն զույգեր: . . . Երբ մենք ամրացնում ենք մեր երիտասարդներին, ուղղելով նրանց առ Քրիստոս, մենք նաև ամրացնում ենք ընտանիքներն ու Եկեղեցին»:**

(Dieter F. Uchtdorf, “A Teacher of God’s Children” [an evening with President Dieter F. Uchtdorf, Jan. 28, 2011], 3)

Ճշմարտապես դարձի գալը առաջնորդում է դեպի Հիսուս Քրիստոսի ավետարանի բարձրագույն օրհնությունները, որոնք հնարավոր են դարձվել տաճարային արարողությունների միջոցով: Եթե ուսանողները հավատարմորեն կապեն ու պահեն տաճարային ուխտեր, նրանք կարժանանան այդ օրհնություններին, որոնք ներառում են վեհացում և հավերժական ընտանիքներ: Նրանք կունենան հավելյալ հզոր ուժի, ավելի մեծ խաղաղության և լրացուցիչ անձնական հայտնության փորձառությունները:

Այն ուսանողները, ովքեր կենտրոնացնում են իրենց կյանքը Փրկչի և տաճարի վրա, կարող են ձեռք բերել ավելի լավ պաշտպանություն աշխարհի գայթակղությունների և խաբեությունների դեմ և լինել ավելի լավ պատրաստված իրագործելու այն ամենը, ինչ Երկնային Հայրը կարող է խնդրել նրանց: Նրանք կարող են ուժ ունենալ հաստատուն մնալու այն ճանապարհի վրա, որը տանում է դեպի հավերժական կյանք և կարող են ավելի լավ աջակցել իրենց ընտանիքներին և ուրիշներին գտնելու և հետևելու աշակերտության այս նույն արահետին:

## Ապրել [1.2]

### Մենք ապրում ենք համաձայն Հիսուս Քրիստոսի ավետարանի և ձգտում ենք ունենալ Հոգու ընկերակցությունը: [1.2.1]

Մեծագույն աջակցություններից մեկը, որ ուսուցիչը կարող է կատարել ուսանողներին օգնելու համար, որ իրագործեն Սեմինարիաների և Կրոնի Ինստիտուտների Նպատակները, Հիսուս Քրիստոսի ավետարանին շարունակաբար և հավատարմորեն հնազանդվելն է: Երբ ուսուցիչները ձգտում են զարգացնել քրիստոսանման հատկանիշներ և փնտրում են ճանաչել և գոհացնել Երկնային Հորը իրենց կյանքի բոլոր ոլորտներում, նրանք օրհնվում են որոշ աստվածային զորությամբ, որը

կարող է ներգործել իրենց ուսանողների կողմից ավետարանի ուղերձն ընդունելու և հասկանալու վրա:

*Ծանուցում*

Երբ ուսուցիչները հավատարմորեն ապրում են ավետարանով, նրանք արժանանում են Սուրբ Հոգու ընկերակցությանը: Այս ընկերակցությունը խիստ անհրաժեշտ է ուսուցիչների հաջողության համար սեմինարիաներում և ինստիտուտներում: Վարդապետություն և Ուխտերում Տերն ընդգծում է, որ «եթե դուք չստանաք Հոգին, դուք չպետք է ուսուցանեք» (ՎևՈՒ 42.14): Երեց Ռոբերտ Դ. Հեյլսը խորհուրդ է տվել. «Ուսուցիչների պարտականությունները սեմինարիայում և կրոնի ինստիտուտում բազմաթիվ են, սակայն այս պարտականությունները կատարելու համար ուսուցիչները նախ պետք է ձգտեն անձնական արդարության: Որպես ուսուցիչներ մենք պետք է այնպես ապրենք ավետարանով, որ մենք Հոգին միշտ ունենանք մեզ հետ» (“Teaching by Faith” [an evening with Elder Robert D. Hales, Feb. 1, 2002], 1):

## Մեր պահվածքը և հարաբերությունները օրինակելի են տանը, դասարանում և համայնքում: [1.2.2]

Ուսուցիչները պարտականություն ունեն վարել ազնիվ կյանք և լինել իրենց ուսուցանած վարդապետությունների և սկզբունքների արժանի օրինակները: Բոլոր պարագաներում ուսուցիչները պետք է խոսեն, ծառայեն և ապրեն այնպես, ինչպես հարիր է անձնավորությանը, ով սիրում է Տիրոջը և ունի Սուրբ Հոգու ընկերակցությունը:

Հիմնականում շատ կարևոր է, թե ինչ վարք ունեն ուսուցիչները իրենց իսկ տանը և թե ինչպես են վերաբերվում իրենց ամուսինների և երեխաների հետ: Այդ ամենակարևոր հարաբերությունները պետք է բնորոշվեն «համոզումով, երկայնամտությամբ, մեղմությամբ և հեզությամբ և անկեղծ սիրով» (ՎևՈՒ 121.41): Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնն արտահայտել է հետևյալը. «Մենք հուսով ենք, որ հոյակապ հարաբերություններ կան ձեր միջև որպես ամուսին և կին: Մենք հուսով ենք, որ ձեր տանը կա Փրկչի խաղաղության և սիրո հոգին, և որ դա ակնհայտ է բոլոր նրանց համար, ովքեր գալիս են ձեր տուն: Ձեր տներում դուք չպետք է ունենաք վիճաբանություն և տարաձայնություն: . . . Դուք որպես զույգ ներկայացնում եք Առաջին Նախագահությանը ձեր բոլոր գործերով և տեսքով» (“The Gospel Teacher and His Message” [address to CES religious educators, Sept. 17, 1976], 7):



«Ձեզանից յուրաքանչյուրը գիտակցում է, որ ընդհանուր առմամբ դուք ուսուցանում եք այն, ինչ դուք կաք: . . . Ձեր բնավորության գծերը ընդհանուր առմամբ ավելի շատ կհիշվեն, քան որոշակի դասի որոշակի ճշմարտությունը: . . . Քանզի եթե մեր աշակերտությունը լուրջ բնույթ է կրում, այն ի հայտ կգա և կհիշվի: Այսպիսի հեռանկարները, թե ինչպես ձեզ կհիշեն, գումարած ձեր անձնական արդարակեցությունը, թույլ կտան ձեզ հսկայական ավանդ ներդնել ձեր ուսանողների կյանքում»:

(Neal A. Maxwell, “But a Few Days” [address to CES religious educators, Sept. 10, 1982], 2)

Դասարանում ուսուցիչները հնարավորություն ունեն օրեցօր ցուցաբերել քրիստոսանման հատկանիշներ, ինչպես օրինակ՝ գթություն, համբերություն, բարություն, հարգանք և ակնածանք առ սուրբ բաները: Ուսուցիչները պետք է պահպանեն դրական և պատշաճ հարաբերություն ուսանողների հետ և խուսափեն ոչ տեղին ուշադրություն դարձնել որևէ մեկին այն ձևով, որը կարող է սխալ հասկացվել կամ սխալ մեկնաբանվել կամ պատճառ դառնալ ենթադրությունների կամ բամբասանքի:

Ուսուցիչները պետք է աշխատեն քրիստոսանման վարք ունենալ մինչ մասնակցում են դպրոցական, հասարակական և Եկեղեցական միջոցառումներին ու իրադարձություններին և հաճախում դրանց: Նրանք

*Ծանուցում*

պետք է զարգացնեն և պահպանեն պատշաճ և աջակցող հարաբերություններ ծնողների, գործընկերների, հոգևոր առաջնորդների և հասարակության անդամների հետ: Այս բաները հետևողականորեն կատարելիս ուսուցիչները ցուցաբերում են անկեղծ նվիրվածություն առ Հիսուս Քրիստոսի ավետարանի համաձայն ապրելուն, և նրանց զորությունը առ այն, որ լավ ազդեցություն ունենան կյանքերի վրա, կմեծանա:

### Մենք շարունակ ջանում ենք կատարելագործել մեր գործելակերպը, գիտելիքը, մոտեցումները և բնավորությունը: [1.2.3]

Որպես Աստծո զավակներ, ուսուցիչները իրենց մեջ ունեն աստվածության մի մաս, որը ցանկություն է առաջացնում բարելավվել, զարգանալ, դառնալ ավելի նման Երկնային Հորն ու Հիսուս Քրիստոսին: Ուսուցիչը պետք է շարունակաբար զարգացնի այս ցանկությունը և Տիրոջ և ուրիշների օգնությամբ գործի համաձայն այն ոգեշնչումների, որոնք դեպի զարգացում են տանում: Երեց Գորդոն Բ. Հինքլին ընդգծել է անձնական զարգացման շարունակվող կարիքը.

«Ես հավատում եմ կատարելագործմանը: Ես հավատում եմ զարգացմանը: . . .

Շարունակեք զարգանալ, իմ եղբայրներ և քույրեր, անկախ այն բանից, թե դուք երեսուն թե յոթանասուն տարեկան եք» (“Four Imperatives for Religious Educators” address to CES religious educators, Sept. 15, 1978, 2):

Կատարելագործման համար պահանջվում է ցանկություն, ջանասիրություն, համբերություն և Տիրոջ օգնությունը, որ պետք է փնտրել խորհելու և աղոթելու միջոցով: Երեց Հենրի Բ. Այրինգը ուսուցանել է կարևոր մի սկզբունք ինքնակատարելագործման վերաբերյալ. «Մեզանից շատերն են ինքնակատարելագործման հետ կապված փորձառություն ունեցել: Իմ փորձն ինձ սա է սովորեցրել այն մասին, թե ինչպես են մարդիկ և կազմակերպությունները կատարելագործվում. ամենալավն այն է, որ կարողանանք կատարել փոքր փոփոխություններ այն բաներում, որոնք մենք հաճախ ենք անում: Զորություն կա կայունության և կրկնության մեջ: Եվ եթե մենք կարող ենք ոգեշնչմամբ առաջնորդվելով ճիշտ փոքր բաներ ընտրել և փոխել, շարունակական հնազանդությունը մեծ կատարելագործում կբերի» (“The Lord Will Multiply the Harvest” an evening with Elder Henry B. Eyring, Feb. 6, 1998, 3):

Սեմինարիայում և ինստիտուտում ուսուցիչները պետք է շարունակ փնտրեն կատարելագործել իրենց ունակությունները, գիտելիքները, վերաբերմունքը և հատկանիշները:

**Ունակություն:** Ուսուցիչները պետք է մշտապես փնտրեն կատարելագործել իրենց ունակությունները ուսուցանելում և կառավարչական պարտականություններում: Նրանք սա կարող են անել հավասարակշռված, մշտական և փութաջան ջանքերի շնորհիվ, որպեսզի հասկանան և կիրառեն հիմնական սկզբունքներն ու հմտությունները: Օգնություն փնտրելը սեմինարիայի և ինստիտուտի համար նախատեսված նյութերում և ղեկավարներից, գործընկերներից, ուսանողներից, քահանայության ղեկավարներից և ուրիշներից կօգնի ուսուցիչներին և ղեկավարներին ավելի ճիշտ գնահատել իրենց ունակությունները, ինչպես նաև ձեռք բերել անհրաժեշտ առաջնորդություն,

որը կօգնի նրանց կատարելագործվել այն ոլորտներում, որտեղ ավելի շատ կարիք է զգացվում:

*Ծանուցում*

**Գիտելիք** Ուսուցիչները պետք է մշտապես աշխատեն ուսումնասիրել համատեքստը, բովանդակությունը և վարդապետություններն ու սկզբունքները, որոնք կան սուրբ գրություններում և մարգարեների խոսքերում: Մինչ նրանք անեն դա, Փրկչի ավետարանի և Քավության վերաբերյալ նրանց հասկացողությունը կմեծանա և ավելի լավ կկարողանան օրհնել իրենց ուսանողների կյանքը: Ուսուցիչները պետք է զարգացնեն սկզբունքների և ուսուցանման արդյունավետ մեթոդների վերաբերյալ իրենց գիտելիքները և հասկացողությունը, որոնք պարունակվում են ինչպես սուրբ գրություններում, այնպես էլ սեմինարիայի և ինստիտուտի համար նախատեսված նյութերում: Նրանք նաև պետք է ծանոթ լինեն պատշաճ կառավարման սկզբունքներին (տես բաժին 1.4, «Կառավարել», էջ 7) և հասկանան սեմինարիաների և ինստիտուտների քաղաքականությունն ու գործունեությունը:



«Իմ եղբայրներ և քույրեր, մեզանից ոչ ոք բավականաչափ գիտելիք չունի: Սովորելու գործընթացը անվերջանալի գործընթաց է: Մենք պետք է կարդանք, մենք պետք է կատարենք, մենք պետք է համատեղենք և մենք պետք է խորհենք այն ամենի մասին, ինչ բացվում է մեր մտքում»:

(Gordon B. Hinckley, “Four Imperatives for Religious Educators,” 2)

**Վերաբերմունք:** Ուսուցիչների ունեցած վերաբերմունքը մեծամասամբ որոշում է իրենց իսկ երջանկությունը և իրենց ունեցած ունակությունը ներգործելու իրենց ուսանողների վրա ի բարին: Այն ուսուցիչները, ովքեր շարունակաբար ձգտում են ուրախ լինել (տես ՎևՈՒ 68.6), ձգտում են ծառայել ուրիշներին, աշխատում են միասնության հասնել և դժվարին իրավիճակներին լավագույն լուծումներ տալ, կօրհնեն ուսանողների և աշխատակիցների կյանքը, ում հետ նրանք շփվում են:



«Եթե մարդիկ գան ինձ մոտ, ես նրանց ցույց կտամ իրենց թուլությունը: . . . Եվ իմ շնորհը բավական է բոլոր մարդկանց համար, ովքեր իրենց խոնարհեցնում են իմ առջև. քանզի, եթե նրանք խոնարհեցնեն իրենց իմ առջև, և հավատք ունենան ինձանում, այն ժամանակ, նրանց թույլ կողմերը ես կդարձնեմ ուժեղ»:

(Եթեր 12.27)

**Բնավորություն** Այն ուսուցիչները, ովքեր ձգտում են ապրել ավետարանով և ովքեր շարունակաբար և անկեղծորեն փորձում են կատարելագործել իրենց կարողությունները, գիտելիքները և վերաբերմունքը, բնականաբար կզարգացնեն Սեմինարիաների և Կրոնի Ինստիտուտների Նպատակը իրականացնելու համար անհրաժեշտ բնավորություն: Երեց Ռիչարդ Գ. Սքոթն ուսուցանել է. «Մենք *դառնում* ենք այն, ինչ ցանկանում ենք *լինել*, շարունակաբար *լինելով* այնպիսին, ինչպիսին ուզում ենք *դառնալ* ամեն օր: Արդար բնավորությունը արժեքավոր արտահայտումն է նրա, ինչ դուք դառնում եք: Արդար բնավորությունը ավելի արժեքավոր է, քան որևէ նյութական առարկա, որ ունեք, ցանկացած գիտելիք, որ ձեռք եք բերել, կամ նպատակներ, որոնց հասել եք . . . » («Հավատի և բնավորության վերափոխող զորությունը», *Ensign* կամ *Լիահոնա,* նոյ. 2010, 43):

Ի վերջո, երբ մենք փնտրում ենք կատարելագործել մեր ունակությունները, գիտելիքները, վերաբերմունքը և հատկանիշները, շատ կարևոր է հետևել Հիսուս Քրիստոսի օրինակին: Նախագահ Հովարդ Վ. Հանթերը ասել է. «Տեր Հիսուս Քրիստոսի ուսմունքն ու օրինակն է, որ ձևավորում է մեր վարքագիծն ու բնավորությունը մեր կյանքի բոլոր ոլորտներում՝ անձնական, տանը, մեր մասնագիտություններում և հասարակական կյանքում, ինչպես նաև մեր նվիրվածությունը Եկեղեցուն, որը կրում է նրա անունը» (“Standing as Witnesses of God,” *Ensign*, May 1990, 60):

*Ծանուցում*

# Ուսուցանել [1.3]

## Մենք ուսուցանում ենք ուսանողներին ավետարանի վարդապետությունները և սկզբունքները, ինչպես տրված են սուրբ գրություններում և մարգարեների խոսքերում: [1.3.1]

Հիսուս Քրիստոսի ավետարանի վարդապետությունների և սկզբունքների գիտելիքը, հասկացողությունը և վկայությունը ուսանողներին կտան առաջնորդություն և բավականաչափ ուժ կատարելու ընտրություններ, որոնք համատեղելի են Երկնային Հոր կամքի հետ:

Վարդապետությունը Հիսուս Քրիստոսի ավետարանի հիմնական, անփոփոխ ճշմարտութնունն է: Երեց Բոյդ Ք. Փաքերը ուսուցանել է.

«Ճշմարիտ վարդապետությունը, եթե հասկացվում է, փոխում է մտածելակերպը և վարքը:

Ավետարանի վարդապետությունների ուսումնասիրությունը ավելի արագ կբարելավի վարքը, քան վարքի ուսումնասիրությունը կփոխի վարքը» (“Little Children,” *Ensign*, Nov. 1986, 17):

Երեց Ռիչարդ Գ. Սքոթը շեշտել է. «Սկզբունքները խտացված ճշմարտություններ են, որոնք փաթեթավորված են բազմազան հանգամանքներում կիրառության համար: Ճշմարիտ սկզբունքը հստակ է դարձնում որոշումները, նույնիսկ ամենաշփոթեցնող և հարկադրական իրավիճակներում» (“Acquiring Spiritual Knowledge,” *Ensign*, Nov. 1993, 86):

Սուրբ գրությունները և մարգարեների խոսքերը պարունակում են ավետարանի վարդապետությունները և սկզբունքները, որոնք ուսուցիչները և ուսանողները պետք է փնտրեն հասկանալ, ուսուցանել և կիրառել: Նրանց, ովքեր ուսուցանում են ավետարանը վերջին օրերում, Տերը հրահանգել է. «Ուսուցանեք իմ ավետարանի սկզբունքները, որոնք Աստվածաշնչի մեջ են, և Մորմոնի Գրքի, որը պարունակում է ավետարանի լրիվությունը» (ՎևՈՒ 42.12): Տերը նաև հաստատել է վերջին օրերի մարգարեների ուսմունքները հասկանալու և դրանց հետևելու կարևորությունը: «Դու պիտի ուշք դարձնես նրա բոլոր խոսքերին ու պատվիրաններին, որոնք նա կտա քեզ, երբ նա ստանա դրանք: . . . Նրա խոսքը դուք պետք է ընդունեք, ինչպես որ իմ իսկ բերանից» (ՎևՈՒ 21.4–5):

1938թ. Նախագահ Ջ. Ռուբեն Քլարկ Կրտսերը, խոսելով Առաջին Նախագահության անունից, սեմինարիայի և ինստիտուտի ուսուցիչներին տվել է շրջադարձային ելույթ: Այդ ելույթում նա ասել է.

«Ձեր գլխավոր հետաքրքրությունը, ձեր հիմնական ու միակ պարտականությունը Տեր Հիսուս Քրիստոսի ավետարանն ուսուցանելն է, ինչպես այն բացահայտվել է այս վերջին օրերին: Դուք պետք է ուսուցանեք այս ավետարանը, որպես աղբյուր և հեղինակություն օգտագործելով եկեղեցու օրինակելի աշխատությունները և այն մարդկանց խոսքերը, ում Աստված կանչել է առաջնորդելու Իր ժողովրդին այս վերջին օրերին: . . .

«Անկախ ամեն ինչից, դուք չպետք է փոխեք եկեղեցու վարդապետությունները նվազագույն իսկ չափով կամ ձևափոխեք դրանք այն տեսքից, ինչպես ներկայացված են եկեղեցու օրինակելի աշխատություններում նրանց կողմից, ում հեղինակությունն է հասցնել Տիրոջ միտքն ու կամքը եկեղեցուն» (*The Charted Course of the Church in Education,* rev. ed. 1994, 10, տես նաև ՎևՈՒ 42.12–13):




### Այդ վարդապետությունները և սկզբունքները ուսուցանվում են այնպիսի եղանակով, որը տանում է դեպի ըմբռնում և շենացում: [1.3.2]

Երբ որոշում են, թե ինչպես ուսուցանեն ավետարանի վարդապետությունները և սկզբունքները, ուսուցիչները պետք է ընտրեն մեթոդներ, որոնք առաջնորդում են ուսանողներին հասկանալ այս կարևոր ճշմարտությունները և լինել շենացած և բարձրացված Սուրբ Հոգու կողմից: Ուսուցիչները և ուսանողները հասկանում են վարդապետություններն ու սկզբունքները, երբ նրանք ըմբռնում են դրանց իմաստը, տեսնում են դրանց կապը այլ սկզբունքների և վարդապետությունների հետ, և հասկանում են դրանց կարևորությունը փրկության ծրագրում, ինչպես նաև իրենց սեփական կյանքում: Հավերժական սկզբունքները և վարդապետությունները ճիշտ ձևով կարող են հասկացվել միայն այն ժամանակ, երբ անհատները ապրում են համաձայն ավետարանի սկզբունքների և երբ նրանց միտքը լուսավորվում է Սուրբ Հոգու կողմից:

Շենացումը պետք է ուղեկցվի սուրբ գրությունները հասկանալով: *Շենացում* բառը ծագում է լատիներեն *aedes* արմատից, որը նշանակում է տուն կամ տաճար և *facere* արմատից, որը նշանակում է կառուցել (տես *Collins English Dictionary—Complete and Unabridged* [2003], "edify"): Ուստի, *շենացումը* կապված է տաճար կառուցելու հետ և նշանակում է կառուցել կամ ամրացնել հոգևորապես: Ուրախությունը, խաղաղությունը, կրթվածությունը և արդար ապրելու ցանկությունը կապված են շենացման հետ: Սուրբ գրությունները խոստանում են, որ եթե ուսուցիչը և աշակերտը երկուսն էլ ուսուցանելու և սովորելու գործընթացում գործեն Հոգու առաջնորդությամբ, ապա «նա, ով քարոզում է, և նա, ով ստանում է, հասկանում են միմյանց, և երկուսն էլ շենանում են և միասին ցնծում» (ՎևՈՒ 50.22):

### Մենք օգնում ենք ուսանողներին իրականացնել իրենց դերը ուսումնական գործընթացում և պատրաստվել ուսուցանել ավետարանը մյուսներին: [1.3.3]

Ավետարանը ուսումնասիրելը, որը նպաստում է դարձի գալուն և օգնում է, որ ավետարանը խորը ընկղմվի ուսանողների սրտերում, պահանջում է ավելին, քան մեծ ջանքեր ուսուցչի կողմից: Հոգևոր ուսումնասիրությունը պահանջում է ջանքեր և ընտրելու իրավունքի գործածություն սովորողի կողմից: Երեց Հենրի Բ. Այրինգն ուսուցանել է. «Ճշմարտապես դարձի գալը կախված է ուսանողից, ով ազատորեն հավատքով փնտրում է մեծ ջանասիրությամբ» ("We Must Raise Our Sights," 4): Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը շեշտել է, որ ջանքերը, որոնք գործադրում են ուսանողները, հրավիրում են Սուրբ Հոգու ազդեցությունը նրանց սրտերի վրա.

*Ծանուցում*

«Ուսուցիչը կարող է բացատրել, ցուցադրել, հավաստիացնել և վկայել, և անել դա հոգևոր մեծ ուժով և արդյունավետությամբ: Վերջիվերջո, այնուամենայնիվ, ուղերձի բովանդակությունը և Սուրբ Հոգու վկայությունը ներթափանցում են սիրտ միայն այն ժամանակ, երբ ստացողը թույլ է տալիս դրանց ներս մտնել: . . .

**«Մեր հավատքով ոգեշնչված գործերի անկեղծությամբ և հետևողականությամբ է, որ մենք ցույց ենք տալիս մեր Երկնային Հորն ու Նրա Որդուն՝ Հիսուս Քրիստոսին, որ մենք կամենում ենք սովորել և ցուցումներ ստանալ Սուրբ Հոգուց»:**



**(David A. Bednar, "Seek Learning by Faith," 3)**

Ընտրելու իրավունքը գործածող սովորողը գործելով համաձայն ճիշտ սկզբունքների բացում է իր սիրտը Սուրբ Հոգու առջև և հրավիրում է Նրա ուսուցանող, վկայող զորությունը և հաստատող վկայությունը» ("Seek Learning by Faith" an evening with Elder David A. Bednar, Feb. 3, 2006, 1, 3):

Սուրբ գրություններն ուսուցանում են, որ նրանք, ովքեր փնտրում են հոգևոր ուսուցում, պետք է նախապատրաստեն իրենց մտքերն ու սրտերը հրահանգներ ստանալու համար. ջանասիրաբար փնտրեն գիտելիք և հասկացողություն ուսումնասիրության, մտորման և աղոթքի միջոցով. և հետևեն Սուրբ Հոգուց ստացած հուշումներին (տես Եզրաս Է.10, 1 Նեփի 10.17–19, ՎևՈՒ 138.1–11, Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.10–20): Շատ ուսանողների համար սուրբ գրություններից սովորելու համար նման ջանքեր գործադրելը կարող է անծանոթ և ինչ-որ դժվար բան թվալ: Այնուամենայնիվ, ուսուցիչները կարող են օգնել նրանց հասկանալ, ընդունել և իրականացնել իրենց դերը ավետարանը ուսումնասիրելում: Ուսուցիչները կարող են օգնել ուսանողներին սովորել, թե ինչպես ակտիվ դեր խաղալ իրենց հոգևոր ուսումնասիրություններում, խրախուսելով նրանց.

- Զարգացնել ամեն օր սուրբ գրություններն ուսումնասիրելու սովորություն:
- Պատրաստել իրենց սրտերն ու մտքերը Հոգու ներգործության համար:
- Հայտնաբերել և հայտնել վարդապետությունները և սկզբունքները, որոնք վերաբերվում են իրենց անձնական կյանքին:
- Խորացնել սուրբ գրությունների հասկացողությունը ջանասեր ուսումնասիրության, խորհրդածության և աղոթքի միջոցով:
- Հարցեր տալ և փնտրել պատասխաններ, որոնք օգնում են ավելի լավ հասկանալ ավետարանը և թե ինչպես է այն վերաբերում իրենց կյանքին:
- Կիսվել ներըմբռնումներով, փորձառություններով և զգացմունքներով:
- Բացատրել ավետարանի վարդապետությունները և սկզբունքները ուրիշներին և վկայել դրանց ճշմարտացիության վերաբերյալ:
- Զարգացնել սուրբ գրություններ ուսումնասիրելու հմտություններ, ինչպես օրինակ նշումներ անելը, խաչաձև հղումներ կատարելը և սուրբ գրություններն ուսումնասիրելու համար նախատեսված նյութերն օգտագործելը:

Հոգևոր ուսումնասիրության մեջ իրենց դերը կատարելով, ուսանողները ցույց են տալիս, որ հոժար են ուսուցանվել Սուրբ Հոգու կողմից: Նրանք հաճախ ավելի նվիրված են լինում սուրբ գրություններին և ոգևորվում դրանցով: Նրանք հասկանում և հիշում են փրկող վարդապետությունները և սկզբունքները ավելի պարզորեն և ավելի հավանական է կիրառել այն, ինչը նրանց սովորեցրել են: Երբ ուսանողները հայտնաբերում են ավետարանի վարդապետությունները և սկզբունքները, հարցեր են տալիս և կիսվում են պատասխաններով, նրանք նաև սովորում են արժեքավոր հմտություններ ինքնուրույն ուսումնասիրելու համար:

Նման մասնակցության միջոցով ուսանողները կկարողանան ավելի արդյունավետորեն ուսուցանել ավետարանը իրենց ընտանիքներին, ընկերներին և ուրիշներին: Նրանք նաև ավելի լավ պատրաստված կլինեն ապագայում ուսուցանել ավետարանի վարդապետությունները և սկզբունքները որպես միսիոներներ, ծնողներ, ուսուցիչներ և Եկեղեցու ղեկավարներ:



**«Ուսանողների մասնակցելու որոշումը ընտրելու իրավունքի գործածում է, որը թույլ է տալիս Սուրբ Հոգուն հաղորդել անձնական ուղերձ՝ իրենց անձնական կարիքներին համապատասխան: Մասնակցելու մթնոլորտ ստեղծելը մեծացնում է հավանականությունը, որ Հոգին կսովորեցնի ավելի կարևոր դասեր, քան դուք կարող եք հասկացնել:**

**Այդ մասնակցությունը նրանց կյանքում կբերի Հոգու առաջնորդությունը»:**

(Richard G. Scott, “To Learn and to Teach More Effectively,” in Brigham Young University 2007–2008 Speeches [2008], 4–5)

## Կառավարել [1.4]

### Մենք պատշաճ ձևով ենք կառավարում մեր ծրագրերը և միջոցները: [1.4.1]

*Կառավարելը* կարող է սահմանվել որպես առաջնորդել ու ծառայել մարդկանց, ինչպես նաև որպես ղեկավարել և կառավարել ծրագրեր և միջոցներ: Որպես բոլոր բաներում կատարյալ օրինակ, Հիսուս Քրիստոսը ցույց տվեց իսկական ղեկավարի աստվածային հատկանիշների օրինակը: Անկախ նրանից, թե ինչ հանձնարարություններ ունեն նրանք, սեմինարիայի և ինստիտուտի բոլոր ղեկավարները և ուսուցիչները հնարավորություն և պարտականություն ունեն առաջնորդելու և կառավարելու Քրիստոսի պես:

Գթության, տեսիլքի և խոնարհության հատկանիշները մեզ թույլ են տալիս իրականացնել Տիրոջ աշխատանքն Իր ուզած ձևով: *Գթությունը* կամ Քրիստոսի մաքուր սերը պետք է լինի ուսանողների, քահանայության ղեկավարների, ծնողների, աշխատակիցների և տնօրենների հետ ուսուցչի հարաբերությունների հիմքը: Գթությունը լոկ զգացմունք չէ, այլ գործելակերպ և էություն (տես Մորոնի 7.45): *Տեսիլք* ունեցող ղեկավարը ոգեշնչված առաջնորդություն է տալիս, նպատակասլացություն է ստեղծում և իր շուրջը եղողների մեջ խանդավառություն է առաջ բերում: Սուրբ գրություններն ուսուցանում են, որ «Առանց տեսիլքի ժողովուրդը կկորչի» (տես Առակաց ԻԹ.18): *Խոնարհությունը* ղեկավարներին և ուսուցիչներին թույլ է տալիս գիտակցել Տիրոջից իրենց կախվածությունը և խրախուսում է նրանց համագործակցել ուրիշների հետ Սեմինարիաների և Կրոնի Ինստիտուտների Նպատակն իրագործելու համար: Տերն ասել է. «Ոչ ոք չի կարող օգնել այս գործում, եթե նա չլինի խոնարհ և սիրով լի, ունենալով հավատք, հույս և գթություն, ժուժկալ լինելով բոլոր բաներում, ինչ էլ որ վստահված լինի նրա խնամքին» (ՎևՈՒ 12.8):



**«Եվ գթությունը երկայնամիտ է և բարի, չի նախանձում, փքված չէ, իրենը չի փնտրում, չի գրգռվում հեշտորեն, չարը չի մտածում և չի հրճվում անօրինությամբ, այլ հրճվում է ճշմարտությամբ, տանում է ամեն բան, հավատում է ամեն բանի, ամեն բանի հույս ունի, ամեն բանի համբերում է»:**

(Մորոնի 7.45)

Յուրաքանչյուր ուսուցիչ և ղեկավար հնարավորություն և պարտականություն ունի պատշաճ կերպով ղեկավարել և կառավարել ծրագրերը և միջոցները: Գործերը կառավարելու պարտականությունները ունեն անհատներին օրհնելու հոգևոր նպատակ: «Բյուջե նախապատրաստելը, տեղեկությունների թերթիկները լրացնելը, Եկեղեցու սեփականության և միջոցների համար հոգ տանելը, անվտանգություն ապահովելը, ծրագրերը վերահսկելը, . . . խորհուրդներին մասնակցելը և ուսանողների, ծնողների ու քահանայության ղեկավարների հետ հաղորդակցվելը բոլորը կառավարման շատ կարևոր պարտականություններ են (*Administering Appropriately: A Handbook for CES Leaders and Teachers* 2003, 2)»: Երեց Հենրի Բ. Այրինգն ուսուցանել է. «Երբեք, երբեք մի թերագնահատեք ժամանակավոր բաները լավ կատարելու հոգևոր արժեքը նրանց համար, ում դուք ծառայում եք» ("The Book of Mormon Will Change Your Life" CES symposium on the Book of Mormon, Aug. 17, 1990, 7):

### Մեր ջանքերը օգնում են ծնողներին կատարել ընտանիքներն ամրացնելու իրենց պարտականությունը: [1.4.2]

Ծնողների հիմնական պարտականությունն է սովորեցնել իրենց երեխաներին Հիսուս Քրիստոսի ավետարանը. վերահսկել նրանց զարգացումը հասարակության մեջ, միջանձնական հարաբերությունները և հագուստի ու մաքրության հետ կապված չափանիշները. և պատասխանել նրանց վարդապետական հարցերին: Եկեղեցու ղեկավարները աջակցում են ծնողներին այս պարտականությունը կատարելիս:

Սեմինարիայի և ինստիտուտի ղեկավարներն ու ուսուցիչները հիմնականում օգնում են ծնողներին սովորեցնելով ուսանողներին Հիսուս Քրիստոսի ավետարանը այնպես, ինչպես այն տրված է սուրբ գրություններում և մարգարեների խոսքերում, շեշտելով ընտանիքի վարդապետական կարևորությունը և բարձր առաջնահերթությունը, որին արժանի են ընտանիքի անդամներն ու ընտանեկան միջոցառումները (տես *Պատշաճորեն կառավարել,* 4): Ուսուցիչները պետք է խրախուսեն ուսանողներին պատվել իրենց ծնողներին և փնտրել իրենց ծնողների խորհուրդը և առաջնորդությունը: Ուսուցիչները կարող են նաև կիսվել ծնողների հետ, թե ինչ են սովորեցնում դասերի ժամանակ:

### Մենք սերտորեն աշխատում ենք քահանայության ղեկավարների հետ, հրավիրելով ուսանողներին մասնակցել և ապահովելով հոգևոր միջավայր, որտեղ ուսանողները կարող են շփվել միմյանց հետ և սովորել միմյանցից: [1.4.3]

Սեմինարիաների և Կրոնի Ինստիտուտների բոլոր ծրագրերը գործում են բարձրագույն և տարածքային ղեկավարների առաջնորդությամբ, ովքեր կրում են քահանայության համապատասխան բանալիները:

Պատանիներին և երիտասարդներին օրհնելու իրենց ջանքերում կարևոր է, որ սեմինարիայի և ինստիտուտի ղեկավարներն ու ուսուցիչները ավելի մոտիկից աշխատեն և համագործակցեն տարածքի քահանայության ղեկավարների հետ: Քահանայության ղեկավարների առաջնորդության ներքո նրանք խորհուրդ են տալիս և աշխատում են

միասին, որպեսզի համոզվեն, որ յուրաքանչյուր պատանի և երիտասարդ հրավիրված է և քաջալերված ցուցակագրվել, հաճախել և ավարտել ուսուցման համապատասխան կուրսեր: Ուսուցիչներն ու ղեկավարները պետք է ակտիվորեն ներգրավվեն քահանայության ղեկավարների հետ փնտրելով ցուցակագրել և պահպանել սեմինարիայի և ինստիտուտի ուսանողներին և չպետք է բավարարվեն միայն այն ուսանողներին ուսուցանելով, ովքեր գալիս են իրենց դասերին:

Հաստատված կանոնների և արարողակարգերի համաձայն սեմինարիայի և ինստիտուտի ղեկավարները և ուսուցիչները նաև համագործակցում են քահանայության ղեկավարների հետ, ստեղծելով դասերի համար հարմարություններ և պատշաճ հոգևոր և հաղորդակցական մթնոլորտ, որտեղ վկայությունները կարող են ամրանալ և ավետարանի վերաբերյալ գիտելիքը շատանալ: Ուսուցիչներն ու ղեկավարները պետք է հետևեն ներկայիս սեմինարիայի և ինստիտուտի կանոններին և պետք է խորհրդակցեն տարածքային քահանայության ղեկավարների հետ հասարակական և ծառայության հետ կապված միջոցառումների տիպի և հաճախակիության հարցերի շուրջ, որպեսզի նրանք աջակցեն, և ոչ թե խանգարեն միջոցառումներին,որոնք ծրագրված են և վարվում են քահանայության և օժանդակ կազմակերպությունների ղեկավարների կողմից:

Ուսուցիչներն ու ղեկավարները պետք է նաև համագործակցեն Երիտասարդ Տղամարդկանց և Երիտասարդ Կանանց ղեկավարների հետ և պատշաճորեն խրախուսեն երիտասարդներին մասնակցել Պարտականությունը Աստծո առաջ և Անձնական զարգացման ծրագրերին: Որտեղ հնարավոր է, սեմինարիայի ուսուցիչները պետք է խորհրդակցեն երիտասարդների այլ ուսուցիչների, խորհրդատուների և ղեկավարների հետ երիտասարդների կարիքների վերաբերյալ:

(Սեմինարիայի և ինստիտուտի կառավարման սկզբունքների և կանոնների վերաբերյալ լրացուցիչ մանրամասներ կարող եք գտնել *Պատշաճորեն կառավարել* ձեռնարկում):



*Ծանուցում*

# 2

# Ավետարանի ուսուցման և ուսումնասիրության հիմունքները

Սեմինարիաների և Կրոնի Ինստիտուտների Նպատակը խորհուրդ է տալիս երեք հիմնական ուսուցանման նպատակներ, որոնց ղեկավարները և ուսուցիչները ձգտում են հասնել, որպեսզի իրագործեն Սեմինարիայի և Կրոնի Ինստիտուտի նպատակը.

1. Մենք ուսուցանում ենք ուսանողներին ավետարանի վարդապետությունները և սկզբունքները, ինչպես դրանք տրված են սուրբ գրություններում և մարգարեների խոսքերում:
2. Այդ վարդապետությունները և սկզբունքները ուսուցանվում են այնպիսի եղանակով, որը տանում է դեպի ըմբռնում և շենացում:
3. Մենք օգնում ենք ուսանողներին իրականացնել իրենց դերը ուսումնական գործընթացում և պատրաստվել ուսուցանել ավետարանը մյուսներին:

Որպեսզի օգնեն հասնել այս նպատակներին, ուսուցիչներին և ուսանողներին սեմինարիայում և ինստիտուտում առանձնահատուկ ձևով խրախուսում են իրագործել Ավետարանի ուսուցանման և ուսումնասիրությանման հիմունքները:

## Ավետարանի ուսուցանման և ուսումնասիրության հիմունքները

Ուսուցիչները և ուսանողները պետք է.

- Ուսուցանեն և սովորեն Հոգու միջոցով:
- Զարգացնեն սիրո, հարգանքի և նպատակի սովորելու մթնոլորտ:
- Ուսումնասիրեն սուրբ գրությունները ամեն օր և կարդան դասընթացի տեքստը:
- Հասկանան սուրբ գրությունների և մարգարեների խոսքերի համատեքստը և բովանդակությունը:
- Գտնեն, հասկանան, զգան ավետարանի վարդապետությունների ու սկզբունքների ճշմարտությունն ու կարևորությունը և կիրառեն դրանք:
- Բացատրեն ավետարանի վարդապետությունները և սկզբունքները, կիսվեն դրանցով և վկայեն դրանց մասին:
- Սերտեն սուրբ գրությունների կարևոր հատվածները և հիմնական վարդապետությունները:

Այս սկզբունքները, կիրառումները և հետևանքները միահյուսված են իրար հետ: Երբ դրանք կիրառվում են իմաստությամբ և միմյանց հետ ներդաշնակությամբ, այս հիմունքները նպաստում են սուրբ գրությունները

և դրանց պարունակած վարդապետությունները և սկզբունքները հասկանալու ուսանողների ունակությանը: Դրանք նաև խրախուսում են ուսանողներին ակտիվ դեր խաղալ ավետարանի իրենց ուսումնասիրության մեջ և մեծացնել ավետարանով ապրելու և այն ուրիշներին ուսուցանելու ուսանողների կարողությունը:



## Ուսուցանել և սովորել Հոգու միջոցով [2.1]

Ավետարանի ուսուցանումն ու ուսումնասիրությունը կատարվում է Սուրբ Հոգու զորությամբ: Հոգով ուսուցանելն ու ուսումնասիրելը տեղի է ունենում, երբ Սուրբ Հոգին կատարում է Իր դերը կամ աշխատում է ուսուցչի հետ, ուսանողի հետ կամ երկուսի հետ: Միայն Հոգու կողմից ուսուցանելու և ուսումնասիրելու միջոցով ուսանողները կհասկանան և կապավինեն Հիսուս Քրիստոսի Քավությանը այնպես, որ նրանք կարողանան որակվել հավերժական կյանքի համար:

Նախագահ Հենրի Բ. Այրինգը շեշտել է հոգևոր ուսումնասիրության համար Սուրբ Հոգու վճռական դերի մասին. «Մեր ուսանողները չեն կարող ճանաչել Աստծուն և այնպես սիրել, ինչպես նրանք պետք է սիրեն, եթե նրանք չուսուցանվեն Սուրբ Հոգու կողմից: Միայն Հոգով նրանք կարող են իմանալ, որ Աստված մեզ այնքան սիրեց, որ ուղարկեց Իր Որդուն լինելու մեր մեղքերը քավողը և որ Հիսուսը Աստծո Որդին է և որ Քրիստոսը վճարել է իրենց մեղքերի համար: Միայն Հոգով նրանք կարող են իմանալ, որ Երկնային Հայրն ու նրա հարություն առած և փառավորված Որդին հայտնվել են Ջոզեֆ Սմիթին: Միայն Հոգով նրանք կարող են իմանալ, որ Մորմոնի Գիրքը Աստծո ճշմարիտ խոսքն է: Եվ միայն ոգեշնչմամբ նրանք կարող են զգալ Հոր և Որդու սերը իրենց հանդեպ առ այն, որ տվել են մեզ հավերժական կյանք ստանալու համար անհրաժեշտ արարողությունները: Միայն այդ վկայությունները ստանալով, որոնք Սուրբ Հոգին խորը կդնի նրանց սրտերում, նրանք կկարողանան արմատավորվել ճշմարիտ հիմքի վրա, որպեսզի կարողանան հաստատուն կանգնել իրենց կյանքի փորձությունների և դժվարությունների ժամանակ» (“To Know and to Love God” an evening with President Henry B. Eyring, Feb. 26, 2010, 2):

Հետևյալ ցուցակը ներառում է Սուրբ Հոգու որոշ գործառույթները, որոնք անմիջապես կապված են ավետարանը ուսուցանելիս և ուսումնասիրելիս Նրա դերի հետ.

- Նա վկայում է Հայր Աստծո և նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի մասին (տես Ա Կորնթացիս ԺԲ. 3, Եթեր 12.41):
- Նա շենացնում է (բարձրացնում կամ կառուցում է հոգևորապես) ուսուցչին և ուսանողին (տես Ա Կորնթացիս ԺԴ. 12, ՎևՈՒ 50.22–23, 84.106):
- Նա պարզևում է «Հոգու պտուղը», որը ներառում է այնպիսի բաներ, ինչպիսիք են ուրախությունը, սերը, խաղաղությունը, համբերությունը և հեզությունը (տես Գաղատացիս Ե.22–23, Հռովմայեցիս ԺԵ.13, ՎևՈՒ 6.23, 11.12–13):
- Նա զորություն է տալիս մարդուն խոսելու իշխանությամբ և համարձակությամբ (տես 1 Նեփի 10.22, Ալմա 18.35, Մորոնի 8.16):

*Ծանուցում*

- Նա վկայում է ավետարանի վարդապետությունների և սկզբունքների ճշմարտացիության մասին (տես Հովհաննես ԺԵ.26, ՎևՈՒ 21.9, 100.8):
- Նա հաղորդում է ճշմարտությունը, գիտելիք, խորաթափանցություն, հասկացողություն և ըմբռնողություն (տես Հովհաննես ԺԶ.13, Ա Կորնթացիս Բ.9–11, 14, ՎևՈՒ 6.14, 11.13–14, 76.5–10, 116):
- Նա օգնում է ուսուցիչներին և ուսանողներին հիշել մտքեր, գաղափարներ կամ սկզբունքներ (տես Հովհաննես ԺԴ.26):
- Նա ոգեշնչում է մարդուն, թե ինչ ասել կամ ինչ չասել (տես Ղուկաս ԺԲ.11–12, 2 Նեփի 32.7, ՎևՈՒ 84.85, 100.5–6):
- Նա ճշմարտությունները հասցնում է մարդկանց սրտերին (տես 2 Նեփի 33.1):
- Նա փափկացնում է մարդկանց սրտերը (տես 1 Նեփի 2.16, Ալմա 24.8):
- Նա մխիթարություն է տալիս (տես Հովհաննես ԺԴ. 26, ՎևՈՒ 88.3):
- Նա սրբացնում և փոխում է սրտերը (տես Մոսիա 5.2, 3 Նեփի 27.20, Մորոնի 6.4):

Հենց որ նրանք հասկանան Սուրբ Հոգու կատարած էական դերը հոգևոր ուսումնասիրության մեջ, ուսուցիչները կանեն այն ամենը, ինչ կարող են, որ հրավիրեն Հոգին այս գործառույթները իրագործելու համար: Սա անելու համար ուսուցիչները կձգտեն ունենալ անձնական արժանավորություն: Նրանք կասեն «հավատքի աղոթք» (ՎևՈՒ 42.14) և կձգտեն կատարելապես պատրաստ լինել յուրաքանչյուր դասին: Նրանք կձգտեն կենտրոնանալ իրենց ուսանողների սովորելու փորձառության վրա և խաղաղություն կունենան իրենց սրտերում այլ բաների վերաբերյալ հիասթափություն և մտահոգություն ունենալու փոխարեն: Նրանք կցուցաբերեն խոնարհաբար հարցեր տալու հոգի: Նրանք նաև կքաջալերեն իրենց ուսանողներին հրավիրել Սուրբ Հոգուն իրենց ուսումնասիրության փորձառությունում:

Ուսուցիչները և ուսանողները հետևյալ կերպ կարող են օգնել ստեղծել այնպիսի մթնոլորտ, որը նպաստավոր կլինի Սուրբ Հոգու համար.

- Իմաստալից հավաքներ ունենալ:
- Կարդալ և ուսուցանել սուրբ գրություններից և մարգարեների խոսքերից:
- Կենտրոնացնել օրինակները և քննարկումները Փրկչի վրա և վկայություն բերել Նրա մասին:
- Ավետարանի վարդապետություններն ու սկզբունքները հստակ ու պարզ ձևով ներկայացնել:
- Ոգեշնչված լռության պահերին ժամանակ տրամադրել մտքերով լի խորհրդածության համար:
- Կիսվել պատշաճ անձնական օրինակներով և վկայել վարդապետությունների և սկզբունքների մասին:
- Օգտագործել ոգեշնչող երաժշտություն:
- Սեր և երախտագիտություն արտահայտել իրար և Տիրոջ հանդեպ:

*Ծանուցում*

Հետևյալ հարցերի շուրջ խորհելու միջոցով ուսուցիչները կարող են զգալ՝ արդյոք Հոգու գործառույթներն իրականանում են իրենց դասերին, թե ոչ.

- Ուսանողները զգու՞մ են սիրո աճ առ Փրկիչը, ավետարանը և սուրբ գրությունները:
- Ոսանողները պարզ կերպով հասկանու՞մ են ուսուցանված սկզբունքները:
- Ուսանողները շենացվա՞ծ են և նրանք զգո՞ւմ են ոգեշնչում գործելու համաձայն այն սկզբունքների, որոնք նրանք սովորել են:
- Դասարանը դառնու՞մ է ավելի միասնական:
- Վկայությունները բերվում և ամրացվու՞մ են:
- Ուսանողները հետաքրքրված և ներգրավվա՞ծ են սովորելու գործընթացում:
- Դասարանում կա՞ «սեր, ուրախություն, խաղաղություն, երկայնամտություն, հեզություն, բարություն, հավատք» (Գաղատացիս Ե.22):

Կարևոր է հիշել, որ ոչ մի ուսուցիչ, անկախ այն բանից, թե որքան տաղանդավոր կամ հավատարիմ է, չի կարող կատարել հոգու գործառույթները: Ժամանակ առ ժամանակ ուսուցիչները կարող են փորձել պատրաստել հոգևոր փորձառություն: Երեց Բոյդ Ք. Փաքերը ուսուցանել է. «Դուք չեք կարող ստիպել Հոգուն պատասխանել, ինչպես որ չեք կարող ստիպել, որ լոբին ծլարձակի կամ ճուտը ժամանակից շուտ ձվից դուրս գա: Դուք կարող եք ստեղծել զարգացմանը նպաստող, հոգատար և ապահով մթնոլորտ, սակայն դուք չենք կարող ստիպել կամ պարտադրել. դուք պետք է սպասեք զարգացմանը» (“Candle of the Lord,” *Ensign*, Jan. 1983, 53):



**«Հանգիստ մթնոլորտը խիստ կարևոր է, եթե դուք ցանկանում եք ունենալ Տիրոջ Հոգու ներկայությունը ձեր դասի ժամանակ»:**

(Jeffrey R. Holland, “Teaching and Learning in the Church” [worldwide leadership training meeting, Feb. 10, 2007], *Ensign*, June 2007, 91)

Ուսուցիչները, ովքեր փնտրում են ուսուցանել Հոգով, չպետք է հույսը հիմնականում դնեն իրենց խելքի, սովորեցնելու մասնագիտական հմտությունների կամ անձնական հատկանիշների վրա, այլ Սուրբ Հոգու ազդեցության վրա (տես 2 Նեփի 4.34): Նրանք նաև պետք է խուսափեն ներգործող էմոցիաներից կամ միտումնավոր կերպով արցունքներ առաջացնելու փորձերից՝ որպես Հոգու ներկայության ապացույց: Նախագահ Հովարդ Վ. Հանթերը նախազգուշացրել է. «Ես կարծում եմ, որ եթե մենք զգույշ չենք որպես . . . ուսուցիչներ, ովքեր աշխատում են դասարանում ամեն օր, մենք կարող է փորձենք կեղծել Տիրոջ Հոգու ճշմարիտ ազդեցությունը անարժան և ներգործող միջոցներով: Ես մտահոգվում եմ, երբ կարծիք է ստեղծվում, թե ուժեղ զգացմունքները կամ ազատորեն հոսող արցունքները հավասար են Հոգու ներկայության հետ: Անշուշտ Տիրոջ Հոգին կարող է առջացնել ուժեղ էմոցիոնալ զգացմունքներ, ներառյալ արցունքներ, սակայն այդ արտաքին դրսևորումը չպետք է շփոթվի Հոգու ներկայության հետ» (“Eternal Investments” an evening with President Howard W. Hunter, Feb. 10, 1989, 4):

Ուսուցիչները պետք է զգույշ լինեն այնպիսի արտահայտություններ օգտագործելուց, ինչպիսիք են. «Հոգին ասաց ինձ. . .» կամ «Հոգին ասաց, որ ես պետք է. . .»: Կանխամտածված կամ ոչ կանխամտածված ձևով այս արտահայտությունները կարող են ընկալվել որպես ինքնագովազդ և կարող են ակնարկել հոգևոր լինելու շինծու մակարդակ և

*Ծանուցում*

կարող են հանդես գալ հոգևոր հարկադրանքի ձևով: Ընդհանուր առմամբ ուսուցիչների համար բավական է այն, որ գործեն Հոգու հուշումների համաձայն, առանց հայտարարելու, որ նրանք անում են դա:

Երեց Հենրի Բ. Այրինգը տվել է հետևյալ խորհուրդը. «Ուսանողներին հոգու հետ կապված փորձառություններ տալը շատ ավելի կարևոր է, քան դրա մասին խոսելը: Եվ պարզապես իմացեք, որ յուրաքանչյուր անհատ տարբեր ձևով է զգում Հոգին: . . . Ես կարծում եմ, որ դա այնքան անձնական է, որ ես մի քիչ զգույշ կլինեի հատկապես չափից ավելին ասելու փորձերում: Ես կարծում եմ փորձառություն ունենալը . . . կարող է ավելի լավ լինել, քան եթե մենք շարունակենք ասել. «Դու զգու՞մ ես Հոգին»: Ես կարծում եմ, որ դա կարող է հակառակ արդյունքի հանգեցնել» (“Elder Richard G. Scott and Elder Henry B. Eyring Discussion” CES satellite training broadcast, Aug. 2003, 8):

Ուսուցիչները պետք է հիշեն, որ Հոգով ուսուցանելը չի ազատում նրանց ջանասեր, հոգատար դասին պատրաստվելու պարտականությունից, ներառյալ նախատեսված ուսումնական ծրագրի օգտագործումը: Մյուս կողմից, Հոգով ուսուցանելը պահանջում է ավելին, քան զուտ ուսումնական ծրագրի յուրաքանչյուր խորհրդին հետևելը առանց աղոթքի, խորհելու կամ հնարավոր հարմարեցման: Բացի դրանից, ուսուցիչները չպետք է շատ կենտրոնանան իրենց դասի նախապատրաստած ծրագրին հետևելու վրա, որ չլինի թե նրանք պատրաստ չլինեն ընդունելու և հետևելու դասի ընթացքում ստացված Հոգու ոգեշնչումներին:

## Զարգացնել սիրո, հարգանքի և նպատակով սովորելու մթնոլորտ [2.2]

Երբ ուսուցիչները և ուսանողները սիրում և հարգում են Տիրոջը, միմյանց և Աստծո խոսքը, սովորելու հնարավորությունները մեծանում են: Նպատակներով կիսվելը կենտրոնացնում է ջանքերը և սպասումները, և ուղղություն է տալիս դասարանի փորձառության համար: Սիրո, հարգանքի և նպատակի նման մթնոլորտի հաստատումն ու զարգացումը ուսուցիչների և ուսանողների պարտականությունն է և հրավիրում է Սուրբ Հոգու շենացնող ազդեցությունը:

### Սեր և հարգանք [2.2.1]



Սերը փափկացնում է սրտերը և հրավիրում է Սուրբ Հոգու ազդեցությունը: Երբ ուսուցիչները սիրում են այնպես, ինչպես Փրկիչն է սիրում, նրանք տեսնում են ուրիշներին այնպիսին, ինչպիսին Նա է տեսնում նրանց: Քրիստոսի սերը ոգեշնչում է ուսուցչին երբեք չհուսալքվել յուրաքանչյուր երիտասարդ տղամարդու կամ կնոջը օգնելիս, որ ճշմարտապես դարձի գան: Երեց Դալլին Հ. Օուքսն ուսուցանել է. «Երբ մենք կանչվում ենք սովորեցնելու, մենք պետք է ընդունենք մեր կոչումը և սովորեցնենք, ելնելով Աստծո` Հավերժական Հոր և Նրա Որդու` Հիսուս Քրիստոսի հանդեպ մեր սիրուց: Բացի դրանից, ավետարանի ուսուցիչը պետք է միշտ սովորեցնի ուսանողների հանդեպ սիրով: . . . Աստծո հանդեպ սերը և Նրա զավակների հանդեպ սերը ծառայության ամենամեծ պատճառներն են:

Նրանք, ովքեր սովորեցնում են սիրուց ելնելով, կմեծարվեն որպես գործիքներ Նրա ձեռքում, ում նրանք ծառայում են» (“Gospel Teaching,” *Ensign*, Nov. 1999, 79):

Ուսուցիչները և ուսանողները, ովքեր սիրում են Տիրոջը և գիտեն իրենց հանդեպ Նրա սիրո մասին անկեղծորեն ցանկանում են մոտ լինել Նրան և դառնալ Նրան ավելի նման: Նրանք պատվում ու հարգում են Նրա խոսքը և Նրա մարգարեների խոսքերը այնպիսի եղանակներով, որոնք մղում են նրանց ջանասիրաբար ուսումնասիրել սուրբ գրությունները, կիրառել այն, ինչ նրանք սովորել են և ուրիշների հետ կիսվել նրանով, ինչ նրանք սովորում են:

Երբ ուսանողները գիտեն, որ իրենք սիրված և հարգված են իրենց ուսուցչի և մյուս ուսանողների կողմից, ավելի հավանական է, որ նրանք պատրաստված կգան դասարան սովորելու համար: Ուրիշների կողմից ընդունված և սիրված լինելու զգացողությունը կարող է փափկացնել նրանց սրտերը, հեռացնել վախը և նրանց մեջ ցանկություն և վստահություն առաջացնել, ինչը կարևոր է իրենց ուսուցչի և դասարանի մյուս անդամների հետ իրենց փորձառությունները և զգացմունքները կիսելու համար:

Ուսուցիչները կարող են մեծացնել ուսանողների սիրո և հարգանքի զգացողությունը առ Տերը, օգնելով նրանց հասկանալ Քավությունը, սովորեցնելով նրանց Երկնային Հոր և Նրա Որդու համար իրենց աստվածային էության և անսահման արժեքի մասին, և խոսելով ու վկայելով Նրանց մասին պատշաճ և ակնածալից եղանակով:

Ուսուցիչները պետք է զարգացնեն սերն ու հարգանքը, որն ունեն իրենց ուսանողների հանդեպ: Սա անելը կօգնի նրանց իրենց ուսանողներին տալ Քրիստոսի մաքուր սերը և կօգնի նրանց ուսուցանել համբերությամբ և կարեկցանքով: Ուսուցիչները կարող են սովորել ուսանողների անունները և աշխատեն իմանալ նրանց հետաքրքրությունները, տաղանդները, դժվարությունները և ունակությունները: Նրանք կարող են համատեղ և անհատապես աղոթել իրենց ուսանողների համար: Ուսուցիչները կարող են դասարան եկող յուրաքանչյուր ուսանողի անձամբ ողջունել և յուրաքանչյուր ուսանողի մասնակցելու հնարավորություն տալ: Նրանք պետք է ուշադիր լսեն, երբ ուսանողները հարցեր են տալիս, կամ կիսվում են իրենց մտքերով կամ զգացմունքներով: Բացի դրանից, ուսուցիչները պետք է հաճախեն ներկայացումներին, մարմնամարզական մրցումներին կամ այլ միջոցառումներին, որոնց մասնակցում են իրենց ուսանողները: Իրենց ուսանողներին սիրելու ջանքերի հետ մեկտեղ ուսուցիչները չպետք է փորձեն զրավել ծնողների կամ քահանայության ղեկավարների տեղը, կամ դառնալ ուսանողների անձնական խորհրդատուն:

Ուսուցիչների մեծ մասը իրենց դասարաններում կունենան ուսանողներ, ովքեր որոշ չափով ունեն սահմանափակ կարողություններ կամ ֆիզիկական կամ մտավոր անկարողություններ: Նրանք նույնպես Երկնային Հոր զավակներն են և պետք է սովորեն ավետարանը անկախ մահկանացության ժամանակաշրջանում ունեցած անձնական դժվարություններից կամ սահմանափակումներից: Մարգարե Ջոզեֆ Սմիթը

*Ծանուցում*



«Եթէ մարդկանց եւ հրեշտակների լեզուներով խօսիմ, բայց սէր չունիմ, ես եղայ ձայն հանող պղինձ, կամ հնչեցող ծնծղայ:

Եւ եթէ մարգարէութիւն ունենամ, եւ գիտենամ ամեն խորհուրդները եւ ամեն գիտութիւնը. եւ եթէ ամեն հաւատքն ունենամ, մինչեւ սարերն էլ տեղափոխելու, բայց սէր չունիմ, ոչինչ եմ»:

(Ա Կորնթացիս ժԳ.1–2)

*Ծանուցում*

ուսուցանել է. «Բոլոր մտքերն ու հոգիները, որոնց Աստված երբևէ ուղարկել է աշխարհ ընկալունակ են մեծանալու» (*Teachings of Presidents of the Church: Joseph Smith* 2007, 210)։ Ուսուցիչները պետք է զգայուն լինեն բոլոր ուսանողների հանդեպ և հաշվի առնեն նրանց անհատական կարիքները և ունակությունները, մինչ նրանք պատրաստվում են դասերին և ներկայացնում են դրանք։
Ամենաօգտակար բաներից մեկը, որ ուսուցիչները կարող են անել իրենց ուսանողների համար, անկեղծ սեր զարգացնելու համար, անկեղծ աղոթքի միջոցով գթության պարգևը փնտրելն է։ Մարգարե Մորմոնը ուսուցանել է. «Ուստի, իմ սիրելի եղբայրներ, աղոթեք Հորը, սրտի ողջ կորովով, որ դուք կարողանաք լցված լինել այդ սիրով, որը նա շնորհել է բոլոր նրանց, ովքեր նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի ճշմարիտ հետևորդներն են» (Մորոնի 7.48)։

## Նպատակի նշանակությունը [2.2.2]

Ուսուցչի և ուսանողի կողմից նպատակի նշանակությամբ կիսվելը կարող է մեծացնել հավատքը և ուղղություն ու իմաստ տալ դասարանի փորձառությանը։ Ուսանողները պետք է հասկանան, որ նրանք հաճախում են դասերին, որպեսզի ճանաչեն Երկնային Հորը և Նրա Որդուն՝ Հիսուս Քրիստոսին, և առաջ ընթանան դեպի հավերժական կյանքը՝ սուրբ գրությունները և մարգարեների խոսքերը ուսումնասիրելու միջոցով։ Նրանք պետք է հավատան, որ հարցերով և աղոթքով Տիրոջը դիմելու միջոցով նրանք կարող են ուսուցանվել և շենանալ Սուրբ Հոգով։ Երբ ուսուցիչները և ուսանողները սուրբ գրությունների ուսումնասիրությանը մոտենում են Հոգուց և միմյանցից սովորելու ակնկալիքով, նրանք ստեղծում են այնպիսի մթնոլորտ, որը հայտնություն է բերում։

Ուսուցիչները կարող են խրախուսել դասարանում նպատակի զգացում ունենալուն հետևյալն անելով.

- *Ակնկալեք ուսանողներից կատարել իրենց դերը որպես սովորողներ։* Նպատակի զգացողությունը գոյություն ունի այն դասարաններում, որտեղ ուսուցիչները ակնկալում են, որ ուսանողները կկատարեն իրենց դերը որպես սովորողներ և աջակցում են նրանց այդ անելիս, և այնտեղ, որտեղ ուսանողներին վստահում են օժանդակել նշանակալից եղանակներով։ Նպատակի զգացողություն ունեցող ուսուցիչները, ովքեր իսկապես սիրում են իրենց ուսանողներին, այնքան շատ կանհանգստանան նրանց զարգացման և հաջողության համար, որ զոհ կլինեն նույնիսկ փոքր ջանքերից։ Նման ուսուցիչները կքաջալերեն սիրով և կբարձրացնեն իրենց ուսանողներին, որ նրանք, որպես սովորողներ և Հիսուս Քրիստոսի հետևորդներ, հասնեն իրենց ներուժին։
- *Եղեք անկեղծ, ջերմ և եռանդուն սուրբ գրությունների և ավետարանի վերաբերյալ։* Ուսանողները հիմնականում նպատակով սովորելու մեծ ցանկություն են ունենում, երբ նրանք զգում են քննարկվող նյութի հետ կապված իրենց ուսուցչի խանդավառությունը և հավատքը։
- *Նախապատրաստեք շենացնող դասեր։* Երբ ուսուցիչները դասարան են գալիս լավ նախապատրաստված, շենացնող դասով և վստահ են զգում նպատակաուղղվածությունում, որը նրանց

առաջնորդել են ունենալ, նրանք հաղորդում են նպատակի զգացողություն, որը ուսանողները հեշտությամբ ճանաչում են:

- *Նախապատրաստեք անհրաժեշտ նյութերը և սարքավորումները:* Ուսուցիչները պետք է լինեն իրենց դասարաններում նախքան ուսանողների գալը, որպեսզի նախապատրաստեն ցանկացած անհրաժեշտ նյութերն ու սարքավորումները: Սա հնարավորություն է տալիս ուսուցչին ողջունել յուրաքանչյուր ուսանողի, երբ նրանք ներս են մտնում: Ուսանողները պետք է ձգտեն ժամանակին գալ դասարան և դասը սկսվելիս իրենց սեղանների վրա ունենալ սովորելու բոլոր համապատասխան նյութերը, ինչպես օրինակ՝ սուրբ գրությունները, նշումներ կատարելու համար նախատեսված մատիտ և օրագիր:
- *Խուսափեք ժամանակ կորցնելուց:* Երբ դասը ժամանակին է սկսվում և երբ ուսանողները գիտակցում են, որ ժամանակը չի կարելի կորցնել, նրանք կզգան նպատակի զգացողությունը:
- *Հաստատեք դասարանի ռեժիմը:* Դասարանի հաճախ կրկնվող միջոցառումների համար ռեժիմ հաստատելը բերում է կարգուկանոնի և նպատակի զգացողություն: Դասարանի ռեժիմը խրախուսում է յուրաքանչյուր ուսանողի մասնակցությունը և օգնում է ուսուցիչներին և ուսանողներին լինել ավելի արդյունավետ դասի թանկարժեք ժամանակը ծախսելիս: Ռեժիմ կարող է հաստատվել այնպիսի գործողությունների համար, ինչպիսիք են սուրբ գրություններն ու սովորելու նյութերը բաժանելն ու հավաքելը, հոգևորապես բարձրացնող հավաքներ կազմակերպելն ու անցկացնելը, և թերթիկներ և նյութեր բաժանելն ու հավաքելը: Հայտարարություններ անելը, ուսանողների հաճախելիությունը գրանցելը, հանձնարարությունները ստուգելը և այլ գործեր կատարելը լավագույնս կատարվում են նախքան հավաքը կամ դասը սկսելը:

## Լրացուցիչ խորհուրդներ սովորելու համապատասխան մթնոլորտ ստեղծելու համար [2.2.3]

Ի հավելումն սիրելուն, հարգելուն և նպատակ ունենալուն, ավետարանը ուսումնասիրելու լավագույն միջավայրում լինում է կարգուկանոն, ակնածանք և խաղաղության զգացողություն: Երեց Բոյդ Ք. Փաքերը ուսուցանել է, որ «ոգեշնչումը ավելի հեշտությամբ է գալիս խաղաղ տրամադրությունում» և որ «ակնածանքը հրավիրում է հայտնություն» ("Reverence Invites Revelation," *Ensign*, Nov. 1991, 21–22): Ահա որոշ լրացուցիչ խորհուրդներ, որ ուսուցիչները կարող են օգտագործել, որպեսզի հաստատեն և պահպանեն մթնոլորտ, որը նպաստում է ավետարանը ուսումնասիրելուն:

### *Ստեղծել ֆիզիկական պայմաններ սովորելու համար:*

Արտաքին միջավայրը կարող է ազդեցություն ունենալ այն բանի վրա, թե ինչ փորձառություն կունենան ուսանողները ավետարանը ուսումնասիրելիս: Ուսուցիչները պետք է անեն այն ամենը, ինչ կարող են, որպեսզի այնպես նախապատրաստեն դասարանը, որ հարմարավետ լինի ուսանողների համար և կարողանան կենտրոնանալ դասի վրա: Որոշ խորհրդածություններ կարող են ներառել.

Ծանուցում

*Ծանուցում*

**Նստատեղերի ընդհանուր քանակը** Բացառությամբ շատ անսովոր պայմաններից, յուրաքանչյուր ուսանող պետք է ունենա նստելու համար հարմարավետ տեղ, տեղ իրենց սուրբ գրությունների և ուսումնական նյութերի համար և գրելու տեղ: Նստատեղերի դասավորությունը ուսանողներին պետք է թույլ տա հեշտությամբ տեսնել ուսուցչին և ուսուցչի օգտագործած ցանկացած դիդակտիկ նյութ: Հնարավորության դեպքում նստատեղերի տարբեր դասավորություններ կարող են օգտագործվել՝ սովորելու համար նախատեսված տարբեր վարժությունների ժամանակ աջակցելու համար: Մշտական նստատեղեր ունենալը կարող է օգնել ուսուցիչներին շուտ սովորել ուսանողների անունները, դասարանում կազմակերպել փոքր խմբերով աշխատանքներ կամ սուրբ գրության սերտման վարժություններ և առանձնացնել ուսանողներին, ովքեր հակված են խոսել իրար հետ դասի ժամանակ: Ուսուցիչները պետք է ուշադիր լինեն այն ուսանողների նկատմամբ, ովքեր ունեն շարժողական կամ տեսողական խնդիրներ, ստեղծելով հարմարություններ, որոնք կաջակցեն դասի ժամանակ նրանց մասնակցությանը:

**Ուշադրությունը շեղող բաներ:** Ուսուցիչները պետք է փորձեն վերացնել ցանկացած ուշադրություն շեղող բաները, որորնք կարող են ընդհատել ուսուցանելու և ուսումնասիրելու գործընթացը: Երբ ուսուցումը կատարվում է տանը, կարող են լինել որոշ յուրահատուկ դժվարություններ, սակայն նույնիսկ այդ պայմաններում ուսուցիչը կարող է նվազեցնել շեղումները ուշադիր պլանավորելու արդյունքում:



**Դասարանի արտաքին տեսքը:** Ավետարանի վերաբերյալ նկարները, նկարազարդումները, ազդագրերը և այլ ցուցադրական նյութերը հաճախ կարող են լավացնել սովորելու պայմանները: Կոկիկ, մաքուր և կարգին դասասենյակը նույնպես խրախուսում է ակնածանք և օգնում է ստեղծել այնպիսի շրջապատող միջավայր, որը նպաստավոր է Հոգու ազդեցության համար:

**Ուսուցչի արտաքին տեսքը:** Ուսանողները ավելի մեծ պատրաստակամությամբ կճանաչեն սովորելու փորձառության կարևորությունը, երբ ուսուցչի հագուստը և արտաքին տեսքը համեստ է և համապատասխան, և արտացոլում է ավետարանի ուղերձի սուրբ էությունը:

### *Հրավիրել Հոգին արդյունավետ հոգևոր նախաբանի միջոցով:*

Դասը պետք է սկսել կարճ հոգևոր նախաբանով: Հոգևոր նախաբանը կարող է հրաշալի միջոց լինել ուսանողներին միավորելու համար, կենտրոնացնելով նրանց մտքերն ու սրտերը հոգևոր բաների վրա: Դա կարող է օգնել ուսուցիչներին և ուսանողներին զգալ Հոգին և պատրաստ լինել սովորելու համար: Հոգևոր միտքը հիմնականում բաղկացած է հիմնից, աղոթքից, և սուրբ գրություններից վերցրած մտքից: Այն ամենաարդյունավետն է լինում, երբ ուսանողները կիսվում են զգացմունքներով և ներըմբռնումներով, որոնք նրանք ունեցել են սուրբ գրությունները ինքնուրույն ուսումնասիրելիս և երբ նրանք վկայություն են բերում: Երկար կամ մանրամասնություններով լի նախաբանը ոչ միայն ժամանակ է խլում դասից, այլ կարող է նույնիսկ պատճառ դառնալ, որ Հոգին հեռանա: Նախաբանները, որոնք ներառում են թեթև ուտեստներ,

Ծանուցում

գրեթե անկասկած կնպաստեն անլուրջ և խաղային տրամադրություն ստեղծելուն, այլ ոչ թե հոգևոր: Ուսուցիչները պետք է ժամանակ տրամադրեն ուսանողների հետ նախաբանների նպատակի վերաբերյալ խոսելու համար, հատկապես դասարանի ղեկավարների հետ, թե ինչ կարող են նրանք անել դրանք ավելի լավը դարձնելու համար, և ինչպես կարող են խրախուսել յուրաքանչյուրին մասնակցել:

### *Քննարկել հոգևոր ուսումնասիրության սկզբունքները:*

Տարեսկզբին ուսուցիչները կարող են ներգրավել ուսանողներին քննարկման մեջ, թե որ պայմաններն են խրախուսում հոգևոր ուսումնասիրությանը (տես Ա Կորնթացիս Բ. 10–11, ՎևՈՒ 50.17–22, 88.121–26): Այս քննարկումները կարող են կենտրոնանալ այն վարքագծերի վրա, որոնք հրավիրում են Տիրոջ Հոգին լինելու իրենց հետ ավետարանի ուսումնասիրության ժամանակ, ինչպես նաև այն վարքագծերի վրա, որոնց պատճառով Հոգին հեռանում է: Ուսուցիչները և ուսանողները պետք է մշտապես քաջալերեն միմյանց կիրառել բաները, որոնք նրանց կարծիքով հրավիրում են Հոգին: Նման ջանքերը կարող են օգնել և ուսանողներին, և ուսուցիչներին հասկանալ և իրագործել դերը, որը նրանք են խաղում ուսումնական գործընթացում Հոգին հրավիրելում:

### *Զգուշությամբ ընտրել սովորելու համար նախատեսված վարժությունները:*

Ուսուցիչները պետք է տեղյակ լինեն, որ տարբեր սովորելու վարժությունները տարբեր տրամադրություններ և վերաբերմունք են առաջ բերում ուսանողների մոտ: Օրինակ, իր դասի սկզբում աղմկոտ խաղ կազմակերպած մի ուսուցիչ բարկացել էր, երբ նա չէր կարողացել ավելի հոգևոր ավարտի հասցնել դասը: Մեկ այլ ուսուցիչ դասի ժամանակ թեթև ուտեստներ բաժանելուց հետո կարգապահության հետ կապված խնդիրներ էր ունեցել:

### *Ուշադրություն դարձնել ուսանողների վարքագծին և պատշաճորեն արձագանքել դրանց:*

Ուսուցիչները պետք է տեղյակ լինեն, թե ինչ է կատարվում դասի ժամանակ և պատշաճորեն արձագանքեն: Եթե ուսանողները ձանձրացած կամ հոգնած են թվում, դա կարող է լինել այն պատճառով, որ նրանք ներգրավված չեն կամ նրանք չեն հասկանում այն, ինչ ուսուցանվում է, կամ թե ինչպես է դասը վերաբերվում իրենց: Որպեսզի օգնեն ուսանողներին կենտրոնանալ, ուսուցիչները միգուցե կարիք ունենան փոխելու որևէ բան դասը ներկայացնելում: Եթե ուսանողները ոչ պատշաճ վարք են ցուցաբերում և պատճառ են դառնում, որ Հոգին հեռանա դասից, ուսուցիչը պետք է ոգեշնչում փնտրի խնդիրը լուծելու համար, և ոչ թե անտեսի այն: Ուսուցիչները նաև պետք է ուշադիր լինեն այն ուսանողների հանդեպ, ովքեր չեն շփվում մյուս ուսանողների հետ կամ ովքեր միայնակ են թվում: Այս ուսանողները միգուցե կարիք ունեն որոշ լրացուցիչ անձնական ուշադրության ուսուցչի կողմից կամ դասարանի մյուս ուսանողների կողմից: Նման դեպքերում ուսուցիչները կարող են խոսել ծնողների հետ և քահանայության ղեկավարների հետ, որպեսզի պարզեն, եթե կան անհայտ պատճառներ կամ նախադրյալներ, որոնց մասին նրանք պետք է տեղյակ լինեն:

*Ծանուցում*

### *Ուղղել անկարգ կամ ոչ պատշաճ վարքագիծը:*

Պետք է հիշել որոշ ընդհանուր սկզբունքներ, որոնք կօգնեն ուսուցչին դասարան հրավիրել պատշաճ կարգ ու կանոն և հարգանք: Կարգ ու կանոն ունենալը միշտ չէ, որ նշանակում է պահպանել քար լռություն. ոչ էլ այն նշանակում է, որ դասը չի կարող հաճելի և ուրախ լինել: Սակայն անկարգապահ կամ անհարգալից ուսանողը կամ ուսանողների խումբը կարող են բացասաբար ազդել սովորելու գործընթացի վրա և խոչընդոտ հանդիսանալ Սուրբ Հոգու ազդեցության համար:

Երբ ուսանողը կամ ուսանողների մի խումբ իրենց լավ չեն պահում, դա կարող է զայրացնել ուսուցչին և մյուս ուսանողներին: Նման պահերին հատկապես կարևոր է ուսուցիչների համար տիրապետել իրենց զգացմունքներին և փնտրել Հոգու ազդեցությունը: Թե ինչպես են ուսուցիչները արձագանքում ցանկացած նմանատիպ միջադեպի ժամանակ կարող է ավելի կարևոր լինել, քան հենց միջադեպը ինքը և կարող է մեծացնել կամ նվազեցնել ուսանողների հարգանքն ու վստահությունը: Երբ ուսուցիչները ուղղում են անպատշաճ վարքը, նրանք պետք է լինեն հաստատուն, սակայն ընկերական, անաչառ և հոգատար և հետո արագ վերադառնան դասին: Բոլորի ներկայությամբ ուսանողին ծաղրելը կարող է ուղղել ուսանողի վարքը ժամանակավորապես, սակայն չի շենացնի ոչ ուսուցչին և ոչ էլ ուսանողին: Դա կարող է ազդել նաև մյուս ուսանողների վրա, ովքեր կվախենան կամ չեն վստահի ուսուցչին: Ուսուցիչները պետք է հիշեն համոզելու, երկայնամտության, մեղմության, հեզության, անկեղծ սիրո և բարության արդար ազդեցությունը (տես ՎևՈՒ 121.41–42):



**«Երբեք թույլ մի տվեք, որ այն խնդիրը, որը պետք է լուծվի, ավելի կարևոր դառնա, քան մարդը, որին պետք է սիրել»:**

(Թոմաս Ս. Մոնսոն, «Ուրախություն գտնենք ճանապարհին», *Ensign* կամ *Լիահոնա,* Նոյեմբեր 2008, 86)

Կան մի քանի առանձնահատուկ քայլեր, որոնք ուսուցիչները կարող են կատարել խնդիրները հարթելու համար, երբ դրանք հայտնվում են: Ահա հնարավոր մոտեցումներ խնդիրները կարգավորելու համար, որոնք կարող է նույն ազդեցությունը չունենան ամեն ուսանողի համար կամ ամեն իրադրությունում.

- *Հաղորդակցվեք աչքերով:* Հաճախ ուսանողները խոսում են իրար հետ ոչ ճիշտ պահերի, քանի որ նրանք կարծում են, որ ուսուցիչը չի նկատի: Ուսուցիչը կարող է նայել ուսանողներին և կարճ հաղորդակցվել նրանց հետ աչքերով, որպեսզի նրանք իմանան, որ ուսուցիչը տեղյակ է, թե ինչ է կատարվում:
- *Ընդհատեք ձեր խոսքը:* Երբ ուսանողները խոսում են այն ժամանակ, երբ նրանք պետք է լսեն, ուսուցիչը կարող է ընդհատել իր խոսքը, նույնիսկ նախադասության կեսից, եթե դրա կարիքը կա: Նրանցից բարձր խոսելը ընդհանուր առմամբ չի լուծի խնդիրը:
- *Մոտեցեք նրանց:* Մեկ այլ գործողություն, որ ուսուցիչները կարող են անել վարքը ուղղելու համար առանց ուղղակի ձևով ուսանողին նկատողություն անելու, տեղափոխվել և անկարգ ուսանողի կողքին կանգնելն է: Ուսուցիչը կարող է շարունակել դասը, սակայն ուսանողը սովորաբար կզգա ուսուցչի ներկայությունը և կդադարեցնի այն, ինչ անում է:

*Ծանուցում*

- *Հարց ուղղեք։* Առանց ոչ տեղին կատարված վարքի վրա ուշադրություն հրավիրելու ուսուցիչը կարող է տվյալ ուսանողին դասի հետ կապված հարց ուղղել։ Սա չի արվում ուսանողին ամաչեցնելու համար, այլ նրան կրկին քննարկման մեջ ներգրավելու համար։

Կլինեն պահեր, որ ուսանողները չեն արձագանքի այս անուղղակի ջանքերին և կշարունակեն խանգարել դասը։ Ահա մի քանի լրացուցիչ, ավելի նպատակին ուղղված քայլեր, որոնք ուսուցիչը կարող է կատարել կարգուկանոն պահպանելու համար.

- *Ուսանողների հետ առանձնազրույց ունեցեք։* Տերն ասել է, որ եթե մեկը վիրավորում է մյուսին, վիրավորված անձնավորությունը պետք է խոսի վիրավորողի հետ «միայն ինքը և դու» (ՎևՈՒ 42.88)։ Ուսուցիչը կարող է զրուցել ուսանողի հետ և պարզել, թե ինչու է նա իրեն վատ պահում և տեղեկացնի, որ վարքագիծը պետք է փոխվի կամ էլ լրացուցիչ քայլեր կձեռնարկվեն։ Ուսուցիչները պետք է համոզված լինեն, որ առանձնացնում են ուսանողի վարքագիծը նրանց անհատական արժեքից։ Ուսուցիչների համար կարևոր է հիշելը, որ «հոգիների արժեքը մեծ է Աստծո աչքում» (ՎևՈՒ 18.10)։ Նրանք պետք է հասկացնեն ուսանողին, որ մինչդեռ վատ արարքն անընդունելի է, նա արժեքավոր է։ Ուսուցիչները պետք է հիշեն հետևել Տիրոջ խորհրդին՝ «դրանից հետո, ավելի մեծ սեր ցույց տալով նրա հանդեպ, ում հանդիմանել ես» (ՎևՈՒ 121.43)։
- *Առանձնացրեք խանգարող ուսանողներին։*
- *Խորհրդակցեք ծնողների կամ քահանայության ղեկավարների հետ։* Երբ անընդունելի վարքագիծը շարունակվում է, հաճախ ուսուցչին օգնում է ուսանողի ծնողների հետ խորհրդակցելը։ Հաճախ ծնողները կարող են տալ լրացուցիչ գաղափարներ, որոնք կօգնեն շտկել մտահոգությունը։ Որոշ դեպքերում ուսանողի եպիսկոպոսը կարող է օգնել։
- *Ուսանողին դուրս հրավիրեք դասարանից։* Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյը հետևյալ խորհուրդն է տվել ուսուցիչներին. «Եթե ձեր ջանքերը հաջողության չեն հասնում, ապա դուք կարող եք դիմել ծնողներին և դուք կարող եք ասել. «Եթե այս անկարգությունը շարունակվի, մենք ստիպված կլինենք նրան հանել ցուցակներից։ Սա ծայրահեղ միջոց է։ Ցանկացած ուսուցիչ կարող է դուրս հրավիրել ուսանողին. դուք պետք է փորձեք հնարավոր բոլոր այլ միջոցները նախքան սրան հանգելը։ Սակայն կարգուկանոն մենք *պետք է* ունենանք. այն կարևոր է հոգու զարգացման համար, և եթե մի ուսանող մերժում է, կամ եթե երկու ուսանողներ են մերժում այդ տարրին հնազանդվելը, ապա նրանք պետք է հեռանան։ Ավելի լավ է մեկ ուսանող քաղցի մատնվի, քան ամբողջ դասարանը դանդաղ թունավորվի» (“Guidance of a Human Soul—The Teacher’s Greatest Responsibility,” *Instructor*, Sept. 1965, 343)։



**«Եթե այդ ուսանողները չեն արձագանքում այսօր, միգուցե դուք չեք կարող ուսուցանել նրանց առայժմ, սակայն կարող եք սիրել նրանց: Եվ եթե դուք սիրեք նրանց այսօր, միգուցե դուք կարող եք ուսուցանել նրանց վաղը»:**

(Jeffrey R. Holland, “Teaching and Learning in the Church,” 102)

Նախքան ուսանողին խնդրելը, որ դուրս գա դասարանից ցանկացած ժամանակահատվածով, ուսուցիչը պետք է խորհրդակցի ծնողների, սեմինարիայի և ինստիտուտի ղեկավարների և համապատասխան քահանայության ղեկավարների հետ: Նման պայմաններում կարևոր է, որ ուսուցիչը օգնի ուսանողներին և ծնողներին հասկանալ, որ ուսանողը ընտրում է հեռանալ սեմինարիայից չընտրելով իրեն պահել ընդունելի ձևով: Խանգարելն է, որ անընդունելի է, և ոչ թե ուսանողը: Երբ նա ընտրի հակառակը, ուսանողի վերադարձը դասարան ողջունելի կլինի:

## Ուսումնասիրել սուրբ գրությունները ամեն օր և կարդալ դասընթացի տեքստը [2.3]

### Ուսումնասիրել սուրբ գրություններն ամեն օր [2.3.1]

Սուրբ գրություններն ամեն օր անձամբ ուսումնասիրելը ավետարանը սովորելու, վկայություն զարգացնելու և Տիրոջ ձայնը լսելու մշտական հնարավորություն է ապահովում ուսուցիչների և ուսանողների համար: Վարդապետություն և Ուխտերում Տերն ասում է. «Սուրբ գրքերը տրվել են իմ կողմից՝ ձեզ ուսուցանելու համար» (ՎևՈՒ 33.16): Նեփի մարգարեն ուսուցանել է, որ եթե «առաջ մղվեք, սնվելով Քրիստոսի խոսքով, և համբերեք մինչև վերջ, կունենաք հավերժական կյանք» (2 Նեփի 31.20) և որ «Քրիստոսի խոսքերը կասեն ձեզ բոլոր բաները, որ դուք պետք է անեք» (2 Նեփի 32.3):

Վերջին օրերի մարգարեները շեշտել են սուրբ գրությունները ամեն օր ուսումնասիրելու կարևորությունը: Նախագահ Հարոլդ Բ. Լին նշել է. «Եթե մենք ամեն օր չենք կարդում սուրբ գրությունները, մեր վկայությունները նվազում են, մեր հոգևոր լինելը խորը զարգացում չի ապրում» (*Teachings of Presidents of the Church: Harold B. Lee* 2000, 66): Երեց Հովարդ Վ. Հանթերը նույնպես ուսուցանել է. «Նա, ով ուսումնասիրում է սուրբ գրությունները ամեն օր, միանշանակ ավելի շատ բան է իրականացնում, քան նա, ով պատշաճ ժամանակ է տրամադրում մեկ օր և այնուհետև թույլ է տալիս, որ օրեր անցնեն, մինչև կշարունակի» (“Reading the Scriptures,” *Ensign*, Nov. 1979, 64):

Երեց Ռիչարդ Գ. Սքոթը ասել է. «Խնդրում եմ, սուրբ գրությունների հանդեպ սերը բորբոքեք յուրաքանչյուր թանկագին երիտասարդի մտքում և սրտում: Օգնեք, որ յուրաքանչյուր երիտասարդի մեջ բոցավառվի այդ անմար կրակի բոցը, որը մղում է նրանց, ովքեր զգացել են այդ, ցանկություն ունենալ շատ ավելին իմանալ Տիրոջ խոսքի վերաբերյալ, հասկանալ նրա ուսմունքները, կիրառել դրանք և կիսվել դրանցով ուրիշների հետ: . . .

Առաջինը, քայլեք ձեր ուսանողների հետ քայլ առ քայլ Տիրոջ սուրբ խոսքի բազում հատվածներով: Օգնեք նրանց զգալ ձեր խանդավառությունը, հարգանքը և սերը սուրբ գրությունների հանդեպ:

Երկրորդը, օգնեք նրանց սովորել կարդալ, խորհել և աղոթել ինքնուրույն, որ հայտնաբերեն զորությունն ու խաղաղությունը, որ բխում են

սուրբ գրություններից» ("Four Fundamentals for Those Who Teach and Inspire Youth" CES symposium on the Old Testament, Aug. 14, 1987, 5):

*Ծանուցում*

Կան մի քանի բաներ, որոնք ուսուցիչները կարող են անել, որոնք ավելի հզոր և երկարատև ազդեցություն կունենան իրենց ուսանողների կյանքում ի բարին, քան նրանց օգնելը, որ սիրեն սուրբ գրությունները և ամեն օր ուսումնասիրեն դրանք: Սա հաճախ սկսվում է, երբ ուսուցիչները օրինակ են ծառայում իրենց սեփական կյանքում ամեն օր սուրբ գրությունները ուսումնասիրելով: Ամեն օր իմաստալից կերպով, սուրբ գրությունները ինքնուրույն ուսումնասիրելուն նվիրվելը որակում է ուսուցիչներին մատուցել անձնական վկայություն իրենց ուսանողներին իրենց սեփական կյանքում սուրբ գրությունների արժեքի մասին: Նման վկայությունը կարող է կարևոր խթան հանդիսանալ ուսանողներին օգնելում, որ ինքնուրույն ուսումնասիրեն սուրբ գրությունները կանոնավոր կերպով:



**«Նախքան դուք կկարողանաք ամրացնել ձեր ուսանողներին, կարևոր է, որ դուք ուսումնասիրեք արքայության վարդապետությունները և ուսումնասիրեք ավետարանը և ուսումնասիրությամբ, և հավատքով»:**

(Ezra Taft Benson, "The Gospel Teacher and His Message" [address to CES religious educators, Sept. 17, 1976], 3)

Ուսուցիչները կարող են նաև քաջալերել յուրաքանչյուր ուսանողի ամեն օր հատուկ ժամ ունենալ անձամբ սուրբ գրությունները ուսումնասիրելու համար. օգնեք ուսանողներին պատասխանատու լինել իրենց ամենօրյա ուսումնասիրությունների համար, օգտագործելով ստուգելու հարմար համակարգ, որը կորոշի, թե որքանով են նրանք կատարում դա. և ուսանողներին կանոնավորապես հնարավորություն տվեք դասի ժամանակ իրար հետ կիսվել որոշ բաներով, որ նրանք սովորում և զգում են սուրբ գրությունները ինքնուրույն ուսումնասիրելու ժամանակ: Մինչ ուսուցիչները խրախուսում են ամեն օր ուսումնասիրել սուրբ գրությունները, նրանք պետք է զգույշ լինեն, որ չամաչեցնեն կամ հուսալքեն որևէ ուսանողի, ով դժվարանում է ինքնուրույն ուսումնասիրել սուրբ գրությունները:

Կարդալու կամ այլ սովորելու խնդիրներ ունեցող ուսանողներին պետք է հնարավորություն տրվի ուսումնասիրել սուրբ գրություններն այն ձևով, որը ավելի նպատակահարմար կլինի նրանց կարիքներին, ինչպես օրինակ ձայնագրության, նշաններով խոսելու կամ բրայլյան այբուբենի միջոցով: Շատ ուսանողների համար, ովքեր ունեն կարդալու հետ կապված դժվարություններ, օգտակար է լինում գրքով հետևելը մեկին, ով բարձրաձայն կարդում է:



**«Շարունակ ձեր մտքում գանձեք կյանքի խոսքերը»:**

(Վարդապետություն և Ուխտեր 84.85)

## *Սուրբ գրություններն ուսումնասիրելու հմտություններ և մեթոդներ*

Որպեսզի օգնեն ուսանողներին հաջողության հասնել սուրբ գրություններն ինքնուրույն ուսումնասիրելում, ուսուցիչները կարող են աջակցել նրանց զարգացնել և կիրառել սուրբ գրությունները ուսումնասիրելու մի շարք հմտություններ և մեթոդներ: Բոլոր հետևյալ հմտություններն ու մեթոդները, ինչպես նաև ուրիշները, որոնք նշված չեն այս գրքույկում, պետք է ուղղված լինեն օգնելու ուսանողներին Հոգով սովորել, հասկանալ սուրբ գրությունները և հայտնաբերել ու կիրառել ավետարանի վարդապետությունները և սկզբունքները իրենց կյանքում:

**Օգտագործել սուրբ գրությունների ուսումնասիրության նյութերը:** Եկեղեցին պատրաստել է սուրբ գրությունների ուսումնասիրության բազմաթիվ նյութեր և որոշ լեզուներում ներառել է դրանք

*Ծանուցում*

կանոնիկ գրքերում: (Սուրբ Գրությունների Ուղեցույցը ուսումնասիրության նյութերի մի խումբ է, որ պատրաստված է այլ լեզուների համար:) Այս նյութերը պարունակում են այնպիսի բաներ, ինչպիսին են ծանոթագրությունները, գլուխների նախադրությունները, թեմատիկ ցուցիչները, Աստվածաշնչի բառարանը և քարտեզները: Դրանք ամենաարժեքավոր օգնություններից են, որոնք ուսուցիչները և ուսանողները կարող են օգտագործել սուրբ գրություններն ուսումնասիրելիս: Ուսուցիչները կարող են օգնել իրենց ուսանողներին ծանոթանալ այս ուսումնասիրության նյութերին և աղբյուրներին՝ դասի ժամանակ դրանք պատշաճորեն օգտագործելով: Եկեղեցին նաև ստեղծել է այլ օգտակար ուսումնասիրության աղբյուրներ, որոնք կարելի է գտնել համացանցում:



**Նշումներ և գրառումներ կատարել:** Ուսուցիչների և ուսանողների համար իրենց սովորածը մտապահելու և հիշելու համար ամենաօգտակար եղանակներից մեկը սուրբ գրություններում նշումներ կատարելն է և գրառումներ կատարելը: Նշումներ կատարել նշանակում է նկարագրել, տարբերել, առանձնացնել կամ ուշադրություն գրավել: Սա կարելի է անել սուրբ գրություններում ընդգծումներ կատարելով, երանգ տալով կամ գլխավոր բառերը կամ հատվածները ընդգծելու միջոցով: Գրառումներ կատարել նշանակում է ավելացնել բացատրություն տվող նշումներ կամ մեկնաբանություն: Սուրբ գրությունների հետ կապված գրառման օրինակները կարող են ներառել անձնական տպավորությունների, մարգարեական մեկնաբանության, խաչաձև հղումների, բառերի բացատրությունների կամ դասարանի անդամների մեկնաբանություններից ստացած տպավորությունների գրառումները սուրբ գրությունների առանձին հատվածների լուսանցքներում:

Սուրբ գրություններում նշումներ և գրառումներ կատարելը կարող է օգնել ուսանողներին և ուսուցիչներին.

- Ավելի հեշտ հիշել և գտնել կարևոր բառերը, արտահայտությունները, մտքերը, ճշմարտությունները, մարդկանց և իրադարձությունները:
- Սուրբ գրության տեքստի նշանակությունը պարզաբանելը և հայտնաբերելը:
- Պահպանել ստացված անձնական տպավորությունները և նրանք, որոնք ստացել են ուրիշներից:
- Նախապատրաստվել ավետարանը ուրիշներին ուսուցանելուն:

Ուսուցիչները կարող են քաջալերել ուսանողներին նշումներ կատարել իրենց սուրբ գրություններում ասելով նմանատիպ մի բան. «Մինչ դուք ուսումնասիրեք այս հատվածները, ես հրավիրում եմ ձեզ նշել կարևոր սկզբունքը, որը դուք կգտնեք» կամ «Սիա մի կարևոր հղում: Դուք գուցե ցանկանաք գրել այն ձեր սուրբ գրությունների լուսանցքում»: Ավելի լավ է սովորեցնել, ցուցադրել և փորձարկել սուրբ գրություններում նշումներ կատարելու հիմնական տարրերը ողջ տարվա ընթացքում, քան նշումներ կատարելու որոշակի համակարգ ուսուցանելը:

*Ծանուցում*

**Խորհել:** Խորհել նշանակում է ներանձնանալ կամ խորությամբ մտածել մի բանի վերաբերյալ և հաճախ ներառում է աղոթք։ Մինչ ուսանողները սովորում են խորհել սուրբ գրությունների վերաբերյալ ինքնուրույն ուսումնասիրելու ընթացքում, Հոգին հաճախ կհայտնի նրանց ճշմարտությունը և կօգնի նրանց իմանալ, թե ինչպես կարող են ավելի շատ նմանվել Հիսուս Քրիստոսին։

Նեփիացիներին ուսուցանելուց հետո Փրկիչն ասաց նրանց. «Խորհեք այն բաների վրա, որոնք ես ասացի» (3 Նեփի 17.3)։ Եղանակներից մեկը, որով կարող ենք օգնել ուսանողներին դասի ժամանակ հոգևոր առումով մասնակցել և քաջալերել նրանց կիրառել իրենց սովորածը և խորացնել իրենց հասկացողությունը դրանց վերաբերյալ, դասի ժամանակ նրանց ժամանակ տալն է, որպեսզի խորհեն այն ամենի շուրջ, ինչ սովորել են։ Նման պահերին ուսուցիչները պետք է խրախուսեն ուսանողներին օգնություն խնդրել Տիրոջից։

**Հարցեր տալ:** Սուրբ գրությունները ուսումնասիրելիս հարցեր տալ և պատասխաններ գտնել սովորելը սուրբ գրությունները ուսումնասիրելու ամենակարևոր հմտություններից մեկն է, որ ուսանողները կարող են զարգացնել։ Հարցեր տալով ուսանողները կարող են հասնել սուրբ գրությունների համատեքստն ու բովանդակությունը ավելի լավ հասկանալուն, ինչպես նաև ավետարանի կարևոր վարդապետություններ և սկզբունքներ հայտնաբերելուն և հասկանալուն։ Ուսանողները կարող են սովորել տալ հարցեր, որոնք կօգնեն նրանց զգալու իրենց սովորածի ճշմարտությունը և կարևորությունը և իմանալ, թե ինչպես կիրառել այն, ինչ իրենք սովորում են։



«Հրավիրեք ձեր ուսանողներին ավելի դանդաղ կարդալ և ավելի ուշադիր, և մտքում ավելի շատ հարցեր ունենալով: Օգնեք նրանց խորհել, քննել յուրաքանչյուր բառ, սուրբ գրքի յուրաքանչյուր մարգարիտ: Սովորեցրեք նրանց այն բարձր պահել լույսի մեջ և շրջել այն, նայել և տեսնել, թե ինչ է այնտեղ արտացոլվում և ինչ է այն արտացոլում: Ինչ-որ ուսանողի համար, տրված օրը տրված կարիքի համար, նման քննումը կարող է երևան հանել արտում թաքցված գանձը` թանկագին մարգարիտը`անգին մարգարիտը»:

(Jeffrey R. Holland, “Students Need Teachers to Guide Them” [CES satellite broadcast, June 20, 1992], 4)

**Տալ դժվար բառերի և արտահայտությունների սահմանումը:** Բառարանները, ուսանողների ծրագրերը, հղումները և սուրբ գրությունները ուսումնասիրելու համար օգտակար նյութերը հաճախ կարող են օգնել ուսանողներին հասկանալ դժվար բառերը կամ արտահայտությունները։

**Պատկերացնել:** Պատկերացումը ստեղծվում է, երբ ուսանողները իրենց մտքում պատկերում են այն, ինչ տեղի է ունենում սուրբ գրությունների պատմություններում։ Օրինակ, ուսանողները կարող են երևակայել ջրի վրայով դեպի Փրկիչը քայլող Պետրոսին (տես Մատթեոս ԺԴ.28–29), կրակի հնոցը գցվող Սեդրաքին, Միսաքին և Աբեդնագովին (տես Դանիել Գ.19–25)։ Պատկերացնելը կարող է օգնել սուրբ գրությունների պատմությունները ուսանողների համար դարձնել ավելի պարզ ու իրական։

**Սուրբ գրությունները նմանեցնել:** Սուրբ գրությունները նմանեցնել նշանակում է համեմատել դրանք մեկի անձնական կյանքի հետ։ Ուսանողները կարող են հարցնել. «Իմ կյանքի ո՞ր պայմաններն ու իրադրություններն են *նման* սուրբ գրության այս հատվածի պայմաններին ու իրադրություններին» կամ «Ինչո՞վ եմ ես *նման* հերոսներին, որոնց մասին մենք սովորում ենք սուրբ գրություններից»։ Երբ ուսանողները նմանություններ են գտնում իրենց փորձառությունների և սուրբ գրություններում եղածների միջև, նրանք ավելի լավ են կարողանում գտնել ավետարանի վարդապետությունները և սկզբունքները։ Նրանք կարող են նաև տեսնել,

*Ծանուցում*

թե ինչպես կարող են այս սկզբունքները կիրառվել իրենց կյանքի նմանատիպ իրավիճակներում:

**Խաչաձև հղում:** Խաչաձև հղումը լրացուցիչ սուրբ գրություն է, որը լրացուցիչ տեղեկություն և մտքեր է տալիս այն հատվածի վերաբերյալ, որն ուսումնասիրվում է: Խաչաձև հղումը կամ «փոխկապակցումը» միացնում է սուրբ գրությունների հատվածները, որն օգնում է ուսանողներին հասկանալ սուրբ գրության հատվածը կամ վարդապետությունը, կամ սկզբունքը: Օգտակար հղումներ կարելի է գտնել տողատակի ծանոթագրություններում և այլ ուսումնական նյութերում, ուսուցչի և աշակերտի ծրագրերում և գերագույն համաժողովի ելույթներում: Ուսուչիցներն ու ուսանողները կարող են նաև հայտնաբերել հարմար հղումներ իրենց ինքնուրույն ուսումնասիրության ժամանակ:

**Համեմատել և հակադրել:** Սուրբ գրության հատվածը, վարդապետությունը կամ սկզբունքը հաճախ ավելի պարզ է դառնում, երբ այն համեմատվում կամ հակադրվում է մեկ այլ բանի հետ: Ուսուցումների, մարդկանց կամ միջոցառումների միջև նմանություններն ու տարբերությունները նկատելը ավետարանի ճշմարտությունները կարող են ավելի մեծ ուշադրության արժանացնել: Օրինակ, հակադրելով Բենիամին Թագավորի թագավորությունը Նոյ Թագավորի թագավորության հետ թույլ է տալիս ուսանողներին շատ պարզ տեսնել, որ արդար ղեկավարի օրհնությունը հակադրվում է չարամիտի կործանող արդյունքների հետ: Հակոբի և Ալմայի կյանքը, ուսմունքները և վկայությունները Շերեմի և Կորիհորի փիլիսոփայությունների ու կյանքի հետ համեմատելը կարող է օգնել ուսանողներին ավելի հեշտությամբ ճանաչել այսօրվա աշխարհի կեղծ փիլիսոփայությունները և տեսնել, թե ինչպես կարելի է կասեցնել դրանք: Համեմատելն ու հակադրելը դեպի խոստումի երկիր Իսրայելի զավակների, Լեքիի ու նրա ընտանիքի և հարեդացիների մի շարք ճամփորդությունները կարող են ուսուցանել սկզբունքներ, որոնք կօգնեն ուսուցիչներին և ուսանողներին կյանքի իրենց սեփական ճամփորդության ընթացքում:

**Կազմել ցուցակներ:** Ցուցակը իրար հետ կապված մտքերի, գաղափարների կամ հրահանգների շարք է: Սուրբ գրություններում ցուցակներ փնտրելը կարող է օգնել ուսուցիչներին և ուսանողներին տեսնել գլխավոր կետերը, որոնք հեղինակը շեշտում է: Օրինակ, Տասը Պատվիրանները ցուցակ են (տես Ելից 20): Երանությունները կարելի է ընդունել որպես ցուցակ (տես Մատթեոս Ե.3–12, 3 Նեփի 12.3–11): Վարդապետություն և Ուխտեր 4 պարունակում է որակների ցուցակ նրանց համար, ովքեր կանչված են ծառայելու Տիրոջը:

**Փնտրել կապեր, օրինաչափություններ և թեմաներ:** Ուսանողներին կարելի է քաջալերել փնտրել կապեր, օրինաչափություններ և թեմաներ, մինչ նրանք ուսումնասիրում են սուրբ գրությունները: Երեց Դեյվիդ Ա. Բեդնարն ասել է. «Հայտնություններում կապեր, օրինաչափություններ և թեմաներ *փնտրելը* կառուցում և ավելացնում է մեր հոգևոր գիտելիքը: . . . Այն ընդարձակում է մեր մտածելակերպը և փրկության ծրագրի մեր հասկացողությունը» ("A Reservoir of Living Water" CES fireside for young adults, Feb. 4, 2007, 2):

Ուսուցիչները և ուսանողները տարվա ընթացքում դասի ժամանակ ընդհանուր առմամբ կօգտագործեն այս հմտություններից և մեթոդներից շատերը: Մինչ նրանք անեն դա, ուսուցիչները կարող են ժամանակ առ

ժամանակ կանգ առնել և հակիրճ ձևով քննարկել իրենց ուսանողների հետ օգտագործված մեթոդը կամ հմտությունը և խրախուսել նրանց օգտագործել այն իրենց անձնական ուսումնասիրության ժամանակ:

*Ծանուցում*

### Կարդալ դասընթացի նյութը [2.3.2]

Բոլոր կանոնիկ գրքերը՝ Հին և Նոր Կտակարանները, Մորմոնի Գիրքը, Վարդապետություն և Ուխտերը և Թանկագին Մարգարիտը, ոգեշնչված գրություններ են, որոնք պարունակում են ավետարանի վարդապետությունները և սկզբունքները: Դրանք լուսաբանում են Աստծո գործերը մարդու հետ և սովորեցնում են Հիսուս Քրիստոսի Քավության մասին: Դրանցից յուրաքանչյուրն էլ կարևոր են և միասին դրանք տալիս են ավելի մեծ հասկացողություն ավետարանի և փրկության ծրագրի վերաբերյալ, որ պատրաստվել է մեր Երկնային Հոր կողմից:

Ուսանողները և ուսուցիչները պետք է կարդան և ուսումնասիրեն բոլոր սուրբ գրքերը, որ համապատասխանում են ուսումնական յուրաքանչյուր ծրագրին (բացառությամբ Հին Կտակարանի ընտրված հատվածների, ինչպես նշված է ուսումնական ծրագրում):



**«Դարեր շարունակ Երկնային Հայրը ոգեշնչել է ընտրյալ տղամարդկանց և կանանց՝ Սուրբ Հոգու առաջնորդությամբ գտնել կյանքի առավել բարդ խնդիրների լուծումները: Այդ լիազորված ծառաներին նա ոգեշնչել է գրի առնել այդ լուծումները ուղեցույցի տեսքով Իր այն զավակների համար, ովքեր հավատում են երջանկության Իր ծրագրին և Իր Սիրելի Որդուն՝ Հիսուս Քրիստոսին: Մեզ մատչելի է այդ ուղեցույցը գանձերի շնորհիվ, որոնք մենք անվանում ենք կանոնիկ աշխատանքներ, դրանք են՝ Հին և Նոր Կտակարանները, Մորմոնի Գիրքը, Վարդապետություն և Ուխտերը և Թանկագին Մարգարիտը»:**

(Ռիչարդ Գ. Սքոթ, «Սուրբ գրությունների զորությունը», *Ensign* կամ *Լիահոնա*, Նոյեմբեր 2011, 6)

## Հասկանալ սուրբ գրությունների և մարգարեների խոսքերի համատեքստը և բովանդակությունը [2.4]

Սուրբ գրությունների և մարգարեների խոսքերի համատեքստը և բովանդակությունը հասկանալը նախապատրաստում է ուսուցիչներին և ուսանողներին հասկանալ ոգեշնչված հեղինակների ուղերձները: Համատեքստը և բովանդակությունը պարզաբանում և լուսաբանում են ավետարանի վարդապետություններն ու սկզբունքները, որոնք գրառված են ուրիշների փորձառություններում և ուսմունքներում: Չնայած այն ամենի մեծածավալությունը, ինչ ասվում է ներքևում, վերաբերվում է հատկապես սուրբ գրությունների համատեքստը և բովանդակությունը հասկանալուն, նույն սկզբունքների և գաղափարների մեծամասնությունը կարելի է կիրառել վերջին օրերի մարգարեների խոսքերի և ուղերձների ուսումնասիրության ժամանակ:

### Համատեքստ [2.4.1]

Համատեքստը (1) սուրբ գրության հատվածին կամ տներին նախորդող կամ հաջորդող հատվածների խումբն է կամ (2)հանգամանքներ են, որոնք ուղեկցում կամ պատկերացում են տալիս սուրբ գրության որոշակի հատվածի, իրադարձության կամ պատմության վերաբերյալ:

Համատեքստը սուրբ գրությունների բովանդակությունը հասկանալու միջոց է: Այն տալիս է նախնական տեղեկություններ, որոնք պարզաբանում և խորությամբ հասկանալի են դարձնում սուրբ գրության նյութի պատմությունները, ուսմունքները, վարդապետությունները և սկզբունքները: Սուրբ գրության յուրաքանչյուր հեղինակ գրել է այնպես, ինչպես նա առաջնորդվել է Սուրբ Հոգու կողմից, սակայն գրությունները պարուրվել

*Ծանուցում*

են հեղինակի պատկերավորման միջոցներով ու մշակութային առանձնահատկություններով: Նրանց գրածները հասկանալու համար ուսուցիչներն ու ուսանողները պետք է մտովի «մտնեն նրանց աշխարհը» և որքանով որ հնարավոր է տեսնեն բաները այնպես, ինչպես հեղինակն է դրանք տեսել: Ներքևում տրված են համատեքստի տարբեր տեսակների որոշ օրինակներ:

«Ծանոթացեք սուրբ գրություններում ուսուցանվող դասերին: Մանրամասն քննեք Վարդապետի առակների և մարգարեների հորդորների պատմությունը և միջավայրը: Ուսումնասիրեք դրանք այնպես, ասես նրանք խոսում են ձեզ հետ, քանի որ դա այդպես է»:



(Թոմաս Ս. Մոնսոն, «Լավագույնս դրսևորեք ձեզ», *Ensign* կամ *Լիահոնա,* Մայիս 2009, 68):

**Պատմական միջավայր:** Իմանալը, որ Ջոզեֆ Սմիթը Լիբերթիի բանտում էր Վարդապետություն և Ուխտեր 121, 122 և 123 բաժինները ստանալու և գրելու ժամանակ, ավելի շատ խորություն և զորություն է տալիս այդ բաժիններում ուսուցանված վարդապետություններին ու սկզբունքներին, ինչ վերաբերվում է այնպիսի բաներին, ինչպիսիք են թշնամին և զորության ու իշխանության օգտագործումը:

**Մշակութային միջավայր:** Հին Իսրայելի տոնական օրերի հետ կապված պատմական տեղեկությունները իմանալը կարող են պարզաբանել, թե ինչպես են դրանք խորհրդանշորեն կապվում Փրկչի և Նրա առաքելության հետ: Տեղյակ լինելով սամարացիների ծագմանը և թե ինչպես էին նրանց վերաբերվում հրեաները Քրիստոսի ժամանակներում, լուսաբանում են Բարի Սամարացու առակը և խորացնում են Սամարիայում ջրհորի մոտ կնոջ հետ Փրկչի ունեցած հանդիպման իմաստը:

**Հարցը կամ իրավիճակը, որ առաջ բերեցին առակը, միջադեպը, վարդապետությունը կամ սկզբունքը:** Հասկանալը, որ Վարդապետություն և Ուխտեր 9 եկավ որպես պատասխան Օլիվեր Քաուդերիի թարգմանելու անկարողությանը, պարզաբանում է հայտնությանը վերաբերվող սկզբունքները, որոնք ուսուցանվում են այդ բաժնում:

«Ես ունեմ բանալի, որով ես հասկանում եմ սուրբ գրությունները: Ես հարցնում եմ, թե որն էր հարցը, որ առաջ բերեց պատասխանը . . .»:



(Joseph Smith, in History of the Church, 5:261)

**Ով է խոսում ում հետ և ինչու:** Ալմայի ուսմունքները Քավության, Հարության, Դատաստանի, գթության և արդարադատության վերաբերյալ ավելի խորը իմաստ են ստանում, երբ մենք հասկանում ենք, որ այդ ուսմունքների համատեքստը այցելությունն էր նրա որդի Կորիանթոնին, ով մտահոգված էր իր գործած լուրջ մեղքերի հետևանքներով:

**Աշխարհագրական դիրքը:** Քանանի աշխարհագրական դիրքը իմանալը խորացնում է մեր հասկացողությունը, թե որտեղ էին հաստատվել Ղովտն ու Աբրահամը, ինչպես դա ազդեց նրանց կատարած ընտրությունների վրա և ինչպես այս ընտրությունները ազդեցին նրանց ընտանիքների վրա:

Սուրբ գրությունները, ուսումնական նյութերը, որոնք տրված են սուրբ գրքերում և ուսումնական ծրագրերում հիմնականում պարունակում են բավականաչափ համատեքստային տեղեկություններ, որոնք աջակցում են ուսուցիչներին և ուսանողներին սուրբ գրությունների բովանդակությունը հասկանալու համար:

**Բովանդակություն** [2.4.2]

*Ծանուցում*

Բովանդակությունը պատմությունների շարան է, մարդիկ, միջադեպեր, քարոզներ և ոգեշնչված բացատրություններ, որ կազմում են սուրբ գրությունների տեքստը: Սուրբ գրությունների բովանդակությունը կյանք ու պատշաճություն է տալիս վարդապետություններին ու սկզբունքներին, որոնք գտնվում են սուրբ գրությունների հատվածներում: Օրինակ՝ Նեփիի պատմությունը արույրե թիթեղները ձեռք բերելու վերաբերյալ սովորեցնում է այն սկզբունքը, որ *հավատքն առ Տերը և Հոգուն լսելը կարող են օգնել անհատներին հաղթահարել այն, ինչը թվում է անհաղթահարելի դժվարություն:* Ելիցի իրադարձությունները հասկանալը պարզ է դարձնում, որ *Տիրոջը վստահելը և մարգարեին հետևելը ժողովուրդներին և ազգերին կարող է առաջնորդել ստանալու Տիրոջ խոստացված օրհնությունները*, սակայն այդ *օրհնությունները հետ են պահվում, երբ ժողովուրդը տրտնջում են և անհնազանդ են:*

Սուրբ գրություններում նկարագրված մարդկանց ճանաչելը կարող է ոգեշնչել և քաջալերել ուսանողներին իրենց դժվարություններին հանդիպելիս և հավատքով ապրել: Ինչպես Երեց Ռիչարդ Գ. Սքոթն է խոստացել Մորմոնի Գրքի հետ կապված.

«Դրա կազմերի մեջ դուք կգտնեք Նեփիի, Հակոբի, Ենովսի, Բենիամինի, Ալմայի, Ամմոնի, Հելամանի, Մորմոնի, Մորոնիի և բազմաթիվ այլ մարդկանց ընկերակցությունն ու արժանավոր օրինակը: Նրանք քաջության զգացում կբորբոքեն ձեր մեջ և կնշեն հավտի ու հնազանդության ուղին: . . .

Ամենակարևորը, նրանք բոլորը, առանց բացառության, կմեծացնեն ձեր պատկերացումը կատարյալ ընկերոջ՝ մեր Փրկիչ ու Քավիչ Հիսուս Քրիստոսի վերաբերյալ» (“True Friends That Lift,” *Ensign*, Nov. 1988, 77):

Քարոզները, որոնք այնքան զգուշությամբ պահպանվել են սուրբ գրություններում, բովանդակության մեկ այլ շատ կարևոր մաս են: Ուսանողի համար, ով պայքարում է մեղքի դեմ, Պողոսի կամ Ալմա Կրտսերի քարոզները կարող են հույսի ու քաջալերման աղբյուրներ լինել: Իր ժողովրդին տրված Բենիամին Թագավորի վերջին ելույթը հմտորեն ուսուցանում է Փրկչի և Նրա Քավության զորության և կարևորության մասին և պարզաբանում է ծառայության իմաստը, հնազանդության օրհնությունները և կարիքավորներին օգնության հասնելու կարևորությունը: Ուսանողը, ով ձգտում է լինել Հիսուս Քրիստոսի աշակերտը, կարող է խորաթափանցություն ձեռք բերել ուսումնասիրելով և ձգտելով կիրառել Լեռան Քարոզի Փրկչի խոսքերը:



Բովանդակությունը հասկանալու մաս է կազմում բարդ բառերի և արտահայտությունների իմաստները սովորելը, ինչպես նաև առակների, խորհրդանիշների և նման բաների բացատրությունները: Օրինակ, *անհամանալ* (Մատթեոս Ե.13) կամ *հարել* (ՎևՈՒ 11.19, 45.48) բառերի կամ «գոտեպնդեք ձեր մեջքը» (ՎևՈՒ 75.22) և «ոչ քսակ , ոչ պարկ» (տես Ղուկաս Ժ.4) արտահայտությունների իմաստները հասկանալը օգնում է պարզաբանել սուրբ

*Ծանուցում*

գրությունների տեքստը: Փրկչի առակներում ուսուցանված սկզբունքները ավելի հեշտությամբ են հասկացվում, երբ մեկնաբանվում են թանկագին մարգարիտ (տես Մատթեոս ԺԳ.45–46), ցորեն և որոմ (տես Մատթեոս ԺԳ.24–30), կորած ոչխար (տես Ղուկաս ԺԵ.4–7) և այլ նմանատիպ արտահայտություններ:

Բոլոր տեղեկությունների հետ կապված, որոնք կարող են ուսումնասիրվել և ուսուցանվել,ուսուցիչները պետք է օգտագործեն իմաստություն, որոշելով թե որքան ժամանակ է տրամադրվում համատեքստին և բովանդակությանը և որքան ժամանակ ծախսել ավետարանի վարդապետությունները և սկզբունքները սովորելու վրա: Ուսուցիչները պետք է ներկայացնեն բավականաչափ համատեքստ և բովանդակություն, որ օգնեն ուսանողներին հասկանալ հավերժական ճշմարտությունները, որոնք գտնվում են սուրբ գրությունների տեքստում, սակայն չտան այնպիսի տեղեկություններ և մանրամասնություններ այնքան շատ, որ դրանք դառնան դասի խարիսխը:

## Գտնել, հասկանալ, զգալ ավետարանի վարդապետությունների և սկզբունքների ճշմարտությունն ու կարևորությունը և կիրառել դրանք [2.5]

Ավետարանի վարդապետություններն ու սկզբունքները գտնելն ու հասկանալը օգնում են ուսուցիչներին և ուսանողներին կիրառել սուրբ գրություններն ու մարգարեների խոսքերը իրենց իսկ կյանքում և առաջնորդում է նրանց որոշումներ կայացնելիս: Ավետարանի վարդապետությունների և սկզբունքների ճշմարտացիությունը, կարևորությունը և ծայրահեղ անհրաժեշտությունը զգալը հաճախ առաջ է բերում մեծ ցանկություն կիրառել այն, ինչ սովորել են: Ավետարանի սկզբունքները կիրառելը բերում է խոստացված օրհնությունները, խորացնում է հասկացողությունն ու դարձի գալը, և օգնում է ուսուցիչներին և ուսանողներին ավելի շատ նմանվել Քրիստոսին:

Վարդապետությունը Հիսուս Քրիստոսի ավետարանի հիմնական, անփոփոխ ճշմարտությունն է: Այնպիսի ճշմարտությունները, ինչպիսին են՝ *Երկնային Հայրը ունի ոսկորից ու մսից մարմին, մկրտությունը անհրաժեշտ է Սատոն արքայություն մտնելու համար* և *բոլոր մարդիկ հարություն կառնեն*, վարդապետության օրինակներ են:

Սկզբունքը հարատև ճշմարտություն կամ օրենք է, որը անդամները կարող են ընդունել, որ առաջնորդի նրանց որոշումներ կայացնելիս: Ավետարանի սկզբունքները համընդհանուր են և օգնում են մարդկանց կիրառել ավետարանի վարդապետությունները առօրյա կյանքում: Երեց Ռիչարդ Գ. Սքոթն ուսուցանել է. «Սկզբունքները խտացված ճշմարտություններ են՝ ծրագրված կիրառման համար» (“Acquiring Spiritual Knowledge,” *Ensign*, Nov. 1993, 86): Սա նշանակում է, որ ավետարանի սկզբունքը սովորաբար ենթադրում է գործողություն, ինչպես նաև դրան հետևող հետևանքներ: Օրինակ, *աղոթելը միշտ կարող է օգնել մեզ հաղթահարել գայթակղությունը* (տես ՎևՈՒ 10.5) և *եթե մենք հետևենք Սուրբ Հոգու հուշումներին, Նա կօգնի մեզ իրագործել այն, ինչ Տերն է պատվիրել* (տես 1 Նեփի 4):

Երբեմն վարդապետության և սկզբունքի միջև եղած տարբերությունը կարող է դժվար լինի հասկանալ: Երեց Հենրի Բ. Այրինգը կիսվել է հետևյալով. «Ի դեպ, ես շատ ժամանակ չեմ ծախսի, փորձելով տարբերել սկզբունքը և վարդապետությունը: Ես լսել եմ այդպիսի զրույցներ, որոնք այդքան էլ արդյունավետ չեն եղել» ("Training Guidelines and Resources: Elder Richard G. Scott and Elder Henry B. Eyring Discussion," Aug. 2003 CES satellite training broadcast, 10):

## Գտնել վարդապետություններն ու սկզբունքները [2.5.1]

Սուրբ գրությունների գլխավոր նպատակներից է ուսուցանել ավետարանի վարդապետությունները և սկզբունքները: Նախագահ Մարիոն Գ. Ռոմնին բացատրել է. «Մարդը չի կարող իսկապես ուսումնասիրել սուրբ գրությունները առանց ավետարանի սկզբունքներ սովորելու, քանի որ սուրբ գրությունները գրվել են սկզբունքները պահպանելու համար` ի օգուտ մեզ» ("The Message of the Old Testament" [CES symposium on the Old Testament, Aug. 17, 1979], 3): Երեց Բոյդ Ք. Փաքերն ուսուցանել է. «Սուրբ գրություններում կան [սկզբունքներ]: Դրանք հայտնությունների հիմքն են և նպատակը» ("Principles," *Ensign*, Mar. 1985, 8): Այս տնտեսությունում Տերը պատվիրել է Իր Եկեղեցու ղեկավարներին և ուսուցիչներին ուսուցանել ավետարանի սկզբունքներն այնպես, ինչպես տրված են սուրբ գրություններում. «Եվ բացի այդ, այս եկեղեցու երեցները, քահանաներն ու ուսուցիչները պետք է ուսուցանեն իմ ավետարանի սկզբունքները, որոնք Աստվածաշնչի մեջ են , և Մորմոնի Գրքի, որը պարունակում է ավետարանի լրիվությունը» (ՎևՈՒ 42.12):

Սովորելը, թե ինչպես գտնել ավետարանի վարդապետությունները և սկզբունքները, որոնք գտնվում են սուրբ գրություններում, պահանջում է մտածելու ջանքեր և փորձառություն: Խոսելով այս ջանքերի մասին Երեց Ռիչարդ Գ. Սքոթը ասել է. «Փնտրեք սկզբունքներ: Զգուշությամբ բաժանեք այն մանրամասներից, որոնք օգտագործվել են դրանք բացատրելու համար» ("Acquiring Spiritual Knowledge," 86):

Երբեմն դասի ժամանակ վարդապետություններն ու սկզբունքները կնշվեն ուսուցչի կողմից: Երբեմն էլ ուսուցիչը կառաջնորդի, կքաջալերի և թույլ կտա ուսանողներին ինքնուրույն գտնել դրանք: Ուսուցիչները պետք է ջանասիրաբար օգնեն ուսանողներին ձեռք բերել վարդապետությունները և սկզբունքները ինքնուրույն գտնելու ունակությունը:

Ավետարանի որոշ վարդապետություններ և սկզբունքներ ավելի հեշտ է գտնել, քանի որ դրանք բացահայտորեն են շարադրված: Այդպես *շարադրված սկզբունքները* հաճախ սկսվում են հետևյալ արտահայտություններով` «այսպիսով, մենք տեսնում ենք» «հետևաբար», «սրա համար» կամ «ահա», ցույց տալով, որ սուրբ գրության հեղինակը միջուցե ամփոփում է իր ուղերձը կամ եզրակացություն է անում:

Օրինակ, Հելաման 3.27 ասվում է. «*Այսպիսով, մենք կարող ենք տեսնել*, որ Տերը ողորմած է բոլորի հանդեպ, ովքեր իրենց սրտի անկեղծությամբ կկանչեն նրա սուրբ անունը»:

Ալմա 12.10 ասվում է. «*Հետևաբար*, ով կկարծրացնի իր սիրտը, նա կստանա խոսքի նվազագույն բաժինը. իսկ ով չի կարծրացնի իր սիրտը, նրան տրվում է խոսքի ավելի մեծ բաժինը»:

Ծանուցում

*Ծանուցում*

Եփեսացիս Զ.13 սովորեցնում է. «*Սորա համար* Աստուծոյ սպառազինութիւնն առէք, որ կարող լինիք հակառակ կենալ չարութեան օրումը, եւ ամենը կատարելով հաստատ կանգնել»:

Ալմա 41.10 ներառում է. «*Ահա,* ես ասում եմ քեզ, ամբարշտությունը երբեք երջանկություն չի եղել»:

Շատ սկզբունքներ սուրբ գրությունների հեղինակի կողմից ուղղակի ձևով չեն տրվում, այլ դրա փոխարեն ակնարկվում են: *Ակնարկվող սկզբունքները* կարող են առաջ գալ ամբողջական սուրբ գրքից, գլխից կամ մեկ հատվածից և կարող են նշմարվել սուրբ գրքի պատմության տողում, միջադեպերում կամ առակներում: Ակնարկվող սկզբունքները գտնելը ներառում է ճշմարտությունների ճանաչումը, որոնք պատկերված են սուրբ գրության պատմության մեջ և դրանք պարզ և հակիրճ ասելը: Սա հաճախ պահանջում է ժամանակ և ուշադիր մտածել: Երեց Ռիչարդ Գ. Սքոթը ուսուցանել է. «Մեծ ջանքեր են պահանջվում մեր հավաքած ճշմարտությունը ճիշտ կարգով պարզ սկզբունքներով արտահայտելու համար» ("Acquiring Spiritual Knowledge," 86):

Ակնարկվող սկզբունքները հաճախ կարող են բացահայտվել սուրբ գրության հատվածում պատճառ և հետևանք հարաբերություններ փնտրելու արդյունքում: Սուրբ գրության պատմության մեջ անհատների կամ խմբերի գործողությունները, վերաբերմունքները և վարքագծերը վերլուծելը և օրհնությունները կամ հետևանքները հասկանալը, որ գալիս են որպես արդյունք, ավետարանի սկզբունքները ավելի ակնհայտ են դառնում:

Ակնարկվող սկզբունքները կարող են նաև ներկայացվել նմանատիպ հարցեր տալու միջոցով.

- Ո՞րն է պատմության բարոյախրատական իմաստը կամ նպատակը:
- Ձեր կարծիքով, ինչու՞ է հեղինակը ընդգրկել այս իրադարձությունները կամ հատվածները:
- Ի՞նչ էր ուզում մեզ սովորեցնել հեղինակը:
- Որո՞նք են այս հատվածում ուսուցանված հիմնական ճշմարտությունները:

Ակնարկվող սկզբունքների որոշ օրինակներ ընդգրկում են.

Ալմա Կրտսերի կամ Պողոսի կյանքից միջադեպեր. *Անձը, ով ընդունում է ճշմարտությունը և ապաշխարում է իր մեղքերից կարող է առաջնորդել ուրիշներին դեպի ավետարանի օրհնությունները* (տես Ալմա 36.10–21, Գոր. Թ.4–20):

Տասը կույսերի առակից. *Եթե մենք հավատարմորեն նախապատրաստել ենք ինքներս մեզ հոգևորապես, մենք պատրաստ կլինենք, երբ Տերը գա.* կամ *նրանք, ովքեր անտեսում են իրենց հոգևոր պատրաստվածությունը չեն ընդունվի Տիրոջ կողմից Նրա գալստյան ժամանակ* (տես Մատթեոս ԻԵ.1–13) :

Դավիթի և Գողիաթի պատմությունից. *Երբ մենք գործում ենք քաջաբար և հավատքով առ Աստված, մենք կարող ենք հաղթահարել մեր կյանքի մեծ դժվարությունները* (տես Ա Թագավորաց ԺԷ.40–51):

Ծանուցում

Որոշ եղանակներ, որոնցով մենք կարող ենք օգնել ուսանողներին սովորել գտնել սկզբունքները և վարդապետությունները, հետևյալն են.

- Հրավիրեք ուսանողներին գրել գաղափարը, որը իրենք ուսումնասիրում են «եթե-ապա» հարաբերակցությամբ:
- Հանձնարարեք ուսանողներին գրել «Եվ այսպիսով մենք տեսնում ենք» մտքեր, իրենց սովորած ճշմարտությունները ամփոփելու համար:
- Թող ուսանողները գտնեն գործողությունները, որ կատարվել են սուրբ գրքի հատվածի անհատների կողմից և փնտրեն օրհնությունները կամ հետևանքները, որոնք դրանց արդյունքն են:
- Խրախուսեք ուսանողներին իրենց սուրբ գրություններում ընդգծել գլխավոր բառերը կամ արտահայտությունները, որոնք ներկայացնում են սկզբունքները և վարդապետական գաղափարները:
- Գրատախտակի վրա գրեք վարդապետություն կամ սկզբունք սուրբ գրության հատվածից: Խնդրեք ուսանողներին ուսումնասիրել հատվածը, փնտրելով այդ սկզբունքի հիմքերը:



Երբ սկզբունքները կամ վարդապետությունները գտնվում են, կարևոր է, որ դրանք հայտարարվեն պարզ և հասարակ ձևով. «Որպեսզի իմացվի, ճշմարտությունը պետք է հայտարարվի և որքանով որ պարզ ու ամբողջական է հայտարարությունը, այնքան ավելի լավ հնարավորություն կունենա Սուրբ Հոգին վկայելու մարդկանց հոգիներին, որ այս աշխատանքը ճշմարիտ է» [*New Witnesses for God*, 3 vols. (1909), 2:vii]: (B. H. Roberts, in James E. Faust, "What I Want My Son to Know before He Leaves on His Mission," *Ensign*, May 1996, 41; *Preach My Gospel* [2004], 182):

Գտնված սկզբունքը կամ վարդապետությունը գրատախտակին գրելը կամ ուսանողներին իրենց սուրբ գրություններում այն գրել կամ ընդգծել հրավիրելը մի եղանակ է, որով կարելի է օգնել այս ճշմարտությունները պարզ դարձնել դասարանի անդամների մտքում:

## Հասկանալ վարդապետություններն ու սկզբունքները [2.5.2]

Հասկանալ ավետարանի վարդապետությունը կամ սկզբունքը նշանակում է, որ ուսանողները ըմբռնում են ներկայացված ճշմարտությունները, դրանց հարաբերությունները Տիրոջ ծրագրի այլ սկզբունքների և վարդապետությունների հետ, և թե ինչ պայմաններում սկզբունքները կարող են կիրառվել իրենց կյանքում: Երբ ուսուցիչը կամ ուսանողը հասկանում է վարդապետությունը կամ սկզբունքը, նրանք ոչ միայն իմանում են, թե *ինչ են նշանակում բառերը,* այլ նաև, թե վարդապետությունը կամ սկզբունքը ինչ *ներգործություն կարող են ունենալ իրենց կյանքում:* Հենց որ վարդապետությունը կամ սկզբունքը ներկայացվում և հասկացվում է, այն կարող է ավելի պատրաստակամորեն կիրառվել:

Ուսուցիչներն ու ուսանողները կարող են մեծացնել ավետարանի վարդապետությունների և սկզբունքների իրենց հասկացողությունը սուրբ գրություններում նմանատիպ ուսմունքներ և լրացուցիչ ներըմբռնումներ որոնելով, վերջին օրերի մարգարեների և առաքյալների խոսքերին անդրադառնալով, ուրիշներին իրենց սովորած ավետարանի

*Ծանուցում*

ճշմարտությունները բացատրելով և Սուրբ Հոգու օգնության համար աղոթելով:Հասկացողությունը շարունակում է խորանալ, երբ սկզբունքները կիրառվում են:

Ուսուցիչները կարող են օգնել ուսանողներին հասկանալ վարդապետություններն ու սկզբունքները այնպիսի հարցեր տալով, որոնք կառաջնորդեն ուսանողներին վերլուծել դրանց իմաստը: Օրինակ, Մորմոնի Գրքի 2000 դեռահաս զինվորների պատմությունից մենք կարող ենք սովորել այն սկզբունքը, որ *եթե մենք չկասկածենք, Աստված կազատի մեզ* (տես Ալմա 56.47–48): Ավելի շատ հասկանալու համար, թե ինչ նշանակություն ունի այս սկզբունքը ուսուցիչներն ու ուսանողները կարող են խորհել հետևյալ հարցերի շուրջ.

- Ի՞նչն էր այն, որ դեռահաս զինվորները չէին կասկածում:
- Ի՞նչ ապացույցներ կան, որ այս դեռահաս զինվորները չէին կասկածում:
- Ինչպե՞ս Աստված ազատեց դեռահաս զինվորներին:
- Ի՞նչ «պատերազմների» են մասնակցում Եկեղեցու դեռահասներն այսօր:
- Ի՞նչ ճանապարհներով Աստված կարող է ազատել նրանց այդպիսի պատերազմներից:
- Ի՞նչ է մեզ սովորեցնում Աբինադիի, Ջոզեֆ Սմիթի կամ Սեդրաքի, Միսաքի և Աբեդնագովի օրինակը այն մասին, թե ինչ է նշանակում ազատված լինել:



Հին Կտակարանի Նեեմանի և Եղիսեի պատմությունից մենք կարող ենք սովորել այն սկզբունքը, որ *եթե մենք խոնարհ ենք և ցանկանում ենք հետևել մարգարեի խորհրդին,* մենք կարող ենք բժշկվել (տես Դ Թագավորաց Ե.1–14): Որպեսզի հասկանան, թե ինչ է նշանակում այս սկզբունքը, ուսուցիչներն ու ուսանողները կարող են խորհել այսպիսի հարցերի շուրջ.

- Ինչպե՞ս է խոնարհությունը օգնում մեզ հետևել մարգարեի խորհրդին:
- Ինչպե՞ս է վերջ ի վերջո «յոթ անգամ լվացվելու» Նեեմանի պատրաստակամությունը օգնում մեզ հասկանալ, թե ինչ է նշանակում *կատարելապես* հետևել մարգարեի խորհրդին:
- Բացի ֆիզիկական հիվանդությունից ուրիշ ինչո՞ւմ մենք բժշկության կարիք ունենք այսօր:
- Որո՞նք են որոշ այն բաները, որ մարգարեները խնդրել են մեզ անել, որոնք կբժշկեն մեզ հոգևորապես, սակայն կարող են անհասկանալի լինել աշխարհի համար:

## Զգալ վարդապետությունների և սկզբունքների ճշմարտությունն ու կարևորությունը [2.5.3]

Չնայած ուսանողները կարող է գտնեն և հասկանան ավետարանի սկզբունքներն ու վարդապետությունները, նրանք հաճախ չեն կիրառի դրանք, մինչև նրանք չզգան դրանց ճշմարտությունն ու կարևորությունը Հոգու միջոցով և որոշ չափով հրատապություն զգան, որ պետք է ներառեն սկզբունքը իրենց սեփական կյանք: Երեց Ռոբերտ Դ. Հեյլսը բացատրել է. «Իսկական ուսուցիչը ավետարանի փաստերը ուսուցանե-

լուց հետո . . . , ուսանողներին մեկ քայլ առաջ է տանում, որպեսզի հոգևոր վկայություն և հասկացողություն ձեռք բերեն իրենց սրտերում, որից էլ բխում են գործողությունն ու կատարումը» (“Teaching by Faith” an evening with Elder Robert D. Hales, Feb. 1, 2002, 5):

Սուրբ Հոգին կարող է ներշնչել ուսանողների մտքերին և սրտերին վարդապետության կամ սկզբունքի կարևորությունը և կարող է ուսանողներին ցանկություն տալ իրագործել սկզբունքը և ուժ տալ այն անելու համար: Ուսուցիչները պետք է կիրառեն բոլոր ջանքերը այս փորձառությունը իրենց դասարանի յուրաքանչյուր ուսանողի համար հասանելի դարձնելու նպատակով: Երեց Ռիչարդ Գ. Սքոթը քաջալերել է ուսուցիչներին. «Դուք կաղոթե՞ք առաջնորդության համար, թե ինչպես անել, որ ճշմարտությունը խորությամբ թափանցի ձեր ուսանողների մտքերն ու սրտերն այնպես, որ օգտագործվի ողջ կյանքի ընթացքում: Մինչ դուք աղոթքով ուղիներ փնտրեք դա անելու համար, ես գիտեմ, որ Տերը կառաջնորդի ձեզ» (“To Understand and Live Truth,” an evening with Elder Richard G. Scott, Feb. 4, 2005, 2):



**«Ավետարանի մեր ուսուցումը պետք է կարևորի Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի իսկությունը, պատշաճությունը և հրատապությունը այնպես, ինչպես դեռևս ոչ մի անգամ չի կարևորել նախկինում: Ուսուցման այս նպատակները խիստ կարևոր են, քանի որ դրանց ներգործությունը կարագացնի ամբողջությամբ դարձի գալը»:**

(Neal A. Maxwell, “Those Seedling Saints Who Sit before You” [CES symposium on the Old Testament, Aug. 19, 1983], 2)

Ամենաարդյունավետ միջոցներից մեկը, որով կարող ենք օգնել ուսանողներին հրավիրել Հոգու ազդեցությունը իրենց սրտերի վրա և պատրաստել նրանց գործելու համաձայն իրենց սովորած սկզբունքի այն է, որ խրախուսենք նրանց խորհել անձնական փորձառությունների շուրջ, որոնք կապված են այդ սկզբունքի հետ (տես մաս 5.1.3, «Հարցեր, որոնք *հրավիրում են զգացմունքներ և վկայություն*», էջ 61): Սա օգնում է ուսանողներին գիտակցել ազդեցությունը, որ սկզբունքը ունեցել է իրենց կյանքում կամ ուրիշների կյանքում: Օրինակ, տասանորդի օրենքի վերաբերյալ քննարկումից հետո ուսուցիչը կարող է հարցնել. «Ի՞նչ օրհնություն եք դուք տեսել ձեր կյանքում կամ ուրիշների կյանքում տասանորդի օրենքը պահելու արդյունքում»: Երբ ուսանողները խորհեն այսպիսի հարցերի շուրջ և կիսվեն համապատասխան անձնական փորձառություններով իրենց դասարանի հետ, Սուրբ Հոգին կարող է օգնել նրանց ավելի պարզ տեսնել օրհնությունները, որ նրանք և ուրիշները ստացել են ավետարանի վարդապետությունների և սկզբունքների համաձայն ապրելով: Հոգին նաև կօգնի ուսանողներին մեծ ցանկություն զգալ կիրառելու այս ճշմարտությունները իրենց կյանքում: Ուսուցիչները նաև կարող են կիսվել իրենց իսկ կյանքի կամ ուրիշների կյանքի իրական պատմություններով, որպեսզի օգնեն ուսանողներին զգալ քննարկված սկզբունքների համաձայն ապրելու ճշմարտությունը և կարևորությունը:

Ուսուցիչները կարող են հնարավորություններ ստեղծել ուսանողների համար վկայելու սկզբունքների և վարդապետությունների ճշմարտացիության վերաբերյալ: Ուսուցիչները նույնպես պետք է հնարավորություններ փնտրեն իրենց անձնական վկայությունը բերելու համար: Բացի դրանից, ուսուցիչները կարող են օգնել ուսանողներին զգալ վարդապետությունների և սկզբունքների ճշմարտացիությունը և կարևորությունը, հատուկ ուշադրություն հրավիրելով սուրբ գրությունների անհատների վկայությունների վրա և կարդալով կամ լսելով վերջին օրերի մարգարեների և առաքյալների վկայությունները:

*Ծանուցում*

*Ծանուցում*

## Կիրառել վարդապետություններն ու սկզբունքները [2.5.4]

Կիրառելը իրական է դառնում, երբ ուսանողները մտածում, խոսում և ապրում են համաձայն սկզբունքների, որոնք նրանք սովորել են: Երեց Ռիչարդ Գ. Սքոթը բացատրել է կիրառելու կարևորությունը, երբ նա ասել է. «Դասարանում տեղի ունեցածի արդյունավետության լավագույն չափանիշը տեսնելն է, որ ճշմարտությունները հասկացվում և կիրառվում են ուսանողների կյանքում» (“To Understand and Live Truth,” 3):



**«Ավետարանը ուսուցանելու նպատակը . . . դասարանի անդամների ուղեղներում «տեղեկություններ լցնելը» չէ: . . . Նպատակն է ոգեշնչել անհատին մտածել, զգալ և հետո ինչ-որ բան անել ավետարանի սկզբունքով ապրելու վերաբերյալ»:**

(Thomas S. Monson, in Conference Report, Oct. 1970, 107)

Երբ ուսանողները կիրառում են ավետարանի սկզբունքները իրենց կյանքում, նրանք կստանան խոստացված օրհնությունները: Նրանք նաև ավելի խորը հասկացողություն և վկայություն ձեռք կբերեն վարդապետության կամ սկզբունքի վերաբերյալ, որը նրանք կիրառել են: Օրինակ, ուսանողները, ովքեր սուրբ են պահում Հանգստյան օրը ավելի ամբողջական պատկերացում կունենեն, թե ինչ է դա նշանակում, քան ուսանողները, ովքեր չեն պահում: Ուսանողները, ովքեր իրենց բոլոր սրտով ապավինել են Տիրոջը (տես Առակաց Գ.5) և ամրացել ու մխիթարվել են փորձության կամ դժվարության պահին, ավելի պարզորեն կհասկանան այդ սկզբունքը, քան նրանք, ովքեր չեն ունեցել այդ փորձառությունը:



Ուսուցիչները պետք է դասարանում ժամանակ տրամադրեն ուսանողներին, որպեսզի ներանձնանան, խորհեն կամ գրեն այն ամենի մասին, որ նրանք հասկացել և զգացել են, մտածեն, թե ինչ յուրահատուկ գործողություններ նրանք պետք է կատարեն այն իրենց կյանքում կիրառելու համար: Այդպիսի պահերին ուսուցիչները պետք է խրախուսեն ուսանողներին առաջնորդություն և ուղղություն խնդրել Տիրոջից: Ուսուցիչները կարող են նաև քննարկել իրավիճակները, որոնցում կարող են հայտնվել ուսանողները և թող նրանք կիսեն մտքեր այն մասին, թե այդ իրավիճակներում ավետարանի սկզբունքները կիրառելը ինչպես կօրհնի նրանց կյանքը: Նրանք կարող են խորհուրդ տալ, որ ուսանողները նպատակ դնեն, որը կօգնի նրանց ապրել ուսուցանված սկզբունքի համաձայն: Ուսուցիչները կարող են պատրաստել սուրբ գրություն, հարց, բանաստեղծություն կամ հիմնի մի մաս, որը նրանք կարող են տուն տանել որպես սկզբունքի հիշեցում:

Կարող են լինել ժամանակներ, երբ ուսուցիչը կամ ուսանողները դասարանում առաջարկություններ անեն այն բանի վերաբերյալ, թե ինչպես կարող են կիրառվել ավետարանի սկզբունքները: Նման օրինակները կարող են օգտակար մտահղացումներ տալ ուսանողներին իրենց առօրյա կյանքում ավետարանի սկզբունքները կիրառելու վերաբերյալ: Այնուամենայնիվ, ուսուցիչները պետք է խուսափեն ուսանողներին որոշակի կոնկրետ հանձնարարություններ տալուց: Հիշեք, որ անձնական գործողությունների հետ կապված ամենանշանակալից առաջնորդությունը գալիս է Տիրոջից Սուրբ Հոգու շնորհիվ անհատապես ոգեշնչում կամ հայտնություն ստանալու միջոցով: Երեց Դալլին Հ. Օուքսն ուսուցանել է. «Ուսուցիչները, որոնց պատվիրված է ուսուցանել «ավետարանի սկզբունքները» և «արքայության վարդապետությունը» (ՎևՈՒ 88.77), պետք է հիմնականում չսովորեցնեն առանձնահատուկ օրենքներ կամ գործողություններ: . . . Երբ ուսուցիչը ուսուցանում է

վարդապետությունը և դրա հետ կապված սկզբունքները սուրբ գրություններից և ապրող մարգարեների խոսքերից, նման առանձնահատուկ գործողությունները կամ օրենքները հիմնականում անհատների կամ ընտանիքների պարտականություննն են» (“Gospel Teaching,” 79):

*Ծանուցում*

## Բացատրել ավետարանի վարդապետությունները և սկզբունքները, կիսվել դրանցով և վկայել դրանց մասին [2.6]

Վարդապետությունները և սկզբունքները բացատրելը, խորաթափանց մտքերով և պատշաճ փորձառություններով կիսվելը և աստվածային ճշմարտության վերաբերյալ վկայելը լուսավորում է անձի հասկացողությունը ավետարանի վարդապետությունները և սկզբունքները հասկանալու համար և մեծացնում է ուրիշներին ավետարանը ուսուցանելու նրանց ունակությունը: Մինչ ուսանողները բացատրում, կիսվում և վկայում են, հաճախ Սուրբ Հոգին ավելի խորը վկայություն է տալիս նրանց հենց այն բաների վերաբերյալ, ինչ նրանք արտահայտում էին: Սուրբ Հոգու զորությամբ նրանց բառերն ու արտահայտությունները կարող են նաև մեծ ազդեցություն ունենալ իրենց հասակակիցների կամ ուրիշների սրտերի և մտքերի վրա, ովքեր լսում են:

Ուսուցիչները, ովքեր հոգատարությամբ և աղոթքով ուսումնասիրում, պատրաստվում և դաս են ուսուցանում, շատ մեծ բան են սովորում: Այս նույն սկզբունքը ճշմարիտ է նաև ուսանողների համար: Մինչ նրանք ուսումնասիրում են վերականգնված ավետարանի վարդապետությունները և սկզբունքները և միմյանց սովորեցնում են դրանք, նրանք ձեռք կբերեն մեծ հասկացողություն և կամրացնեն իրենց վկայությունները:

### Բացատրել [2.6.1]

Սուրբ գրությունները հասկանալու ունակությունը մեծանում է, երբ ուսանողները և ուսուցիչները բացատրում են սուրբ գրությունները միմյանց: Նախապատրաստվելը պարզ կերպով և հասարակ ձևով ասելուն, թե ինչ նշանակություն ունի սուրբ գրության հատվածը կամ վարդապետությունը կամ սկզբունքը, խրախուսում է ուսուցիչներին և ուսանողներին խորհել հատվածների շուրջ, մտքեր կազմել դրանց շուրջ և հրավիրել Սուրբ Հոգուն նրանց ուսուցանելու համար:

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալը ուսուցանել է. «Մենք սովորում ենք գործել գործելով: Եթե մենք ուսումնասիրում ենք ավետարանը այն ուսուցանելու համար, մենք ձեռք ենք բերում գիտելիք, քանզի որտեղ մենք տանում ենք լապտերը ուրիշների ճանապարհը լուսավորելու համար, մենք լուսավորում ենք մեր իսկ ճանապարհը: Մինչ մենք վերլուծում և կարգավորում ենք սուրբ գրությունները ուրիշների համար ընդունելի դաս ներկայացնելու համար, մենք պարզաբանում ենք մեր սեփական մտքերը: Մինչ մենք բացատրում ենք այն, ինչ մենք արդեն իսկ գիտենք, թվում է, թե դեպի մեզ են հորդում բացահայտված լրացուցիչ ճշմարտություններ և մեր հասկացողությունը մեծանում է, առաջ են գալիս նոր կապեր և կիրառումներ» (*The Teachings of Spencer W. Kimball* 1982, 530) :

*Ծանուցում*

Ուսանողներին հնարավորություն տալը, որ մեկ ուրիշին բացատրեն վարդապետություն կամ սկզբունք խրախուսում է նրանց ավելի խորը մտածել և փնտրել ավելի մեծ հասկացողություն նախքան ուրիշներին կուսուցանեն այն, ինչ նրանք սովորել են: Ուսուցիչները կարող են խնդրել ուսանողներին բացատրել, թե ինչու է կարևոր հավատք ունենալը, մկրտվելը կամ տասանորդի օրենքին հնազանդվելը: Ուսանողներին կարելի է հրավիրել պատմել որևէ մեկին Արարման մասին, Անկման մասին կամ թե ինչու են իրենք հավատում, որ ընտանիքները առանցքային դեր ունեն Երկնային Հոր ծրագրում: Սա կարող է կատարվել զույգերով կամ փոքր խմբերով, դերակատարման միջոցով, ամբողջ դասարանով կամ գրելով: Ուսանողներին հաճախակի հրավիրելը, որ բացատրեն սուրբ գրության հատվածը կամ սովորեցնեն վարդապետություն կամ սկզբունք ծնողին, եղբորը կամ քրոջը, ընկերոջը կամ սենյակակցին նույնպես կարող է պատշաճ լինել:



## Կիսվել [2.6.2]

Ուսուցիչը և ուսանողը երկուսն էլ պետք է հնարավորություն ունենան կիսվելու իրենց մտքերով և հասկացողությամբ, ինչպես նաև անձնական փորձառություններով, որոնք նրանք ունեցել են վարդապետության կամ սկզբունքի հետ կապված: Նրանք կարող են նաև պատմել ուրիշների կյանքի այն փորձառությունները, որոնց ականատեսն են եղել իրենք:

Նախագահ Ջ. Ռուբեն Քլարք Կրտ. ասել է. «Գրեթե չկա մի պատանի, որ ներս մտնի ձեր սեմինարիայի կամ ինստիտուտի դռնից, ով չի եղել հոգևոր օրհնություններ զգացող ժառանգորդ կամ ով չի տեսել աղոթքի արդյունավետությունը, կամ ով վկա չի եղել հավատքի զորությանը հիվանդին բժշկելու համար, կամ ով չի ունեցել հոգևոր զեղումներ, ինչի մասին աշխարհին ընդհանուր առմամբ այսօր անտեղյակ է» (*The Charted Course of the Church in Education,* rev. ed. [1994], 9): Ուսանողներին պետք է հնարավորություն տրվի դասարանի հետ կիսվել նման փորձառություններով: (Ուսուցիչները պետք է օգնեն ուսանողներին հասկանալ, որ որոշ փորձառություններ չափազանց սուրբ կամ անձնական են դասարանում կիսելու համար. տես Ալմա 12.9, ՎևՈՒ 63.64:)

## Վկայել [2.6.3]

Երբ ուսանողները բացատրում են ավետարանի սկզբունքները և կիսվում են իրենց փորձառություններով, կիրառելով դրանք իրենց կյանքում, նրանք հաճախ ավելի լավ են պատրաստված վկայելու այն մասին, ինչին նրանք հավատում են:

Երեց Բոյդ Ք. Փաքերը բացատրել է վկայություն բերելու օրհնություններից մեկը. «Օh, եթե ես կարողանայի ուսուցանել ձեզ այս մեկ սկզբունքը: Վկայությունը պետք է *գտնել* այն *բերելում*: . . .

Մի բան է վկայություն ստանալ նրանից, ինչը կարդացել ես կամ մեկ ուրիշն է ասել. և դա անհրաժեշտ սկիզբն է: Լիովին այլ բան է, երբ Հոգին հաստատում է քեզ քո սրտում, որ այն, ինչը *դու* վկայեցիր ճշմարիտ է» ("The Candle of the Lord," 54–55):

Վկայությամբ կիսվելը ոչ միայն օրհնում է անձին, ով բերում է վկայությունը, այլ նաև կարող է ամրացնել ուրիշների հավատը և վկայությունները: Վկայելը Սուրբ Հոգուն հնարավորություն է տալիս վկայելու վերականգնված ավետարանի առանձնահատուկ վարդապետությունների և սկզբունքների վերաբերյալ: Վկայությունը միշտ չէ, որ սկսվում է «Ես կցանկանայի բերել իմ վկայությունը» արտահայտությամբ: Այն կարող է պարզապես լինել մի հայտարարություն այն բանի, ինչը անձը գիտի, որ ճիշտ է, խոսելով անկեղծությամբ և վստահությամբ: Դա կարող է լինել հասարակ հաստատում, թե ինչ է անձը զգում ավետարանի վարդապետության կամ սկզբունքի վերաբերյալ և թե ինչ փոփոխություն է այն բերել իր կյանքում: Ուսանողները ավելի պարզ կարող են հասկանալ, թե ինչպես կարող է կիրառվել ավետարանի սկզբունքը և զգալ ավելի ոգեշնչված կիրառելու դրանք իրենց կյանքում, երբ նրանք լսում են, թե ինչպես են ուսուցիչը կամ մյուս ուսանողները բերում իրենց վկայությունը այդ սկզբունքների արժեքի վերաբերյալ:



**«Վկայությունը՝ իսկական վկայությունը, ծնված Հոգուց և հաստատված Սուրբ Հոգու կողմից, փոխում է կյանքերը»:**

(Մ. Ռասսել Բալլարդ, «Մաքուր վկայություն», *Ensign* կամ *Լիահոնա*, Նոյեմբեր 2004, 40)

Ուսուցիչը կարող է ոգեշնչել ուսանողներին վկայել ավետարանի ճշմարտությունների մասին տալով հարցեր, որոնք կհրավիրեն նրանց կիսվել իրենց փորձառություններով և նրանցով, ինչին հավատում են (տես մաս 5.1.3, «Հարցեր, որոնք *հրավիրում են զգացմունքներ և վկայություն*», էջ 61): Դրանք կարող են նաև իրենց հասակակիցներին վկայելու այլ հնրավորություններ ստեղծել ուսանողների համար: Ուսուցիչները պետք է զգայուն լինեն անձնական և սրբազան էություն ունեցող վկայության հետ և կարող են հրավիրել, սակայն երբեք չպետք է պահանջեն, որ ուսանողները կիսվեն իրենց վկայություններով: Ուսուցիչները պետք է հաճախ օգտվեն Երկնային Հոր և Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի հանդեպ իրենց իսկ սիրով և ավետարանի վարդապետությունների և սկզբունքների ճշմարտացիության և արժեքի վերաբերյալ վկայություն բերելու հնարավորությունից: Ուսուցիչները պետք է տեղյակ լինեն և անդրադառնան Փրկչի, ինչպես նաև նրանց կողմից արտահայտված վկայություններին, որոնք ծնունդ են առել վերջին օրերի մարգարեների և առաքյալների կողմից:



**«Ուսուցանման ժամանակ հավատք առաջ բերող միջադեպեր են պատահում, երբ ուսանողները իրենց հասակակիցներին սովորեցնելու և վկայելու դեր են վերցնում իրենց վրա»:**

(Robert D. Hales, "Teaching by Faith," 4)

## Սերտել սուրբ գրությունների կարևոր հատվածները և հիմնական վարդապետությունները [2.7]

Երբ անհատները հավերժական ճշմարտություններ են զանձում իրենց մտքերում և սրտերում, Սուրբ Հոգին կհիշեցնի նրանց այս ճշմարտությունները անհրաժեշտության դեպքում և նրանց քաջություն կտա հավատքով գործել: Նախագահ Հովարդ Վ. Հանթերը ուսուցանել է.

«Ես խստությամբ քաջալերում եմ ձեզ օգտագործել սուրբ գրությունները ձեր ուսուցանելու ժամանակ և անել ամեն հնարավոր բան ուսանողներին օգնելու համար, որ օգտագործեն դրանք և հարմարվեն

*Ծանուցում*

դրանց։ Ես կցանկանայի, որ մեր երիտասարդները վստահությամբ մոտենային սուրբ գրություններին։ . . .

Առաջինը, մենք ցանկանում ենք, որ ուսանողները հավատան սուրբ գրությունների ուժին և ճշմարտացիությանը, վստահ լինեն, որ իրենց Երկնային Հայրը իրոք խոսում է նրանց հետ սուրբ գրությունների միջոցով, և վստահություն, որ նրանք կարող են դառնալ դեպի սուրբ գրությունները և գտնել պատասխաններ իրենց խնդիրներին և իրենց աղոթքներին։ . . .

. . . Մենք հուսով ենք, որ ձեր ուսանողներից և ոչ մեկը դուրս չի գա դասարանից վախեցած կամ ամոթով, որ նրանք չեն կարող գտնել իրենց անհրաժեշտ օգնությունը, քանի որ նրանք բավականաչափ լավ չգիտեն սուրբ գրությունները անհրաժեշտ հատվածները գտնելու համար» ("Eternal Investments," 2)։

Որպեսզի օգնենք ուսանողներին բարձր գնահատել հավերժական ճշմարտությունները և մեծացնեն իրենց վստահությունը սուրբ գրությունների հանդեպ, ՍևԻ ընտրել են մի շարք սերտման սուրբ գրությունների հատվածներ և նախապատրաստել են Հիմնական Վարդապետությունների ցուցակ։ Սերտման սուրբ գրությունների հատվածների և այս վարդապետությունների ուսումնասիրությունը պետք է միասին կատարվի, որպեսզի ուսանողները սովորեն արտահայտել այս վարդապետություններն իրենց սեփական բառերով և օգտագործեն սուրբ գրությունների հատվածները, որ օգնեն իրենց բացատրել այս ճշմարտությունները և վկայել դրանց մասին։

## Սերտման սուրբ գրություն [2.7.1]

Սեմինարիաները և Կրոնի Ինստիտուտները ընտրել են 25 սերտման սուրբ գրությունների հատվածներ սեմինարիայի յուրաքանչյուր չորս դասընթացների համար։ Այս հատվածները տալիս են սուրբ գրությունների կարևոր հիմք ավետարանը հասկանալու և դրանով կիսվելու համար և հավատքը ամրացնելու համար։ Սեմինարիայի ուսանողներին խրախուսում են «սերտել» այս հատվածները ինչպես նկարագրված է ներքևում։ Ինստիտուտի ուսանողներին պետք է խրախուսել կառուցել այս 100 սուրբ գրությունների կարևոր հատվածների հիմքի վրա և զարգացնել խորը հասկացողություն սուրբ գրության այլ կարևոր հատվածների վերաբերյալ։

Սուրբ գրությունների հատվածները սերտելը ներառում է.

- **Գտնել** հատվածները՝ իմանալով դրանց հետ կապված սուրբ գրությունների հղումները։
- **Հասկանալ** սուրբ գրությունների հատվածների համատեքստը և բովանդակությունը։
- **Կիրառել** սուրբ գրությունների հատվածներում ուսուցանվող ավետարանի սկզբունքները և վարդապետությունները։
- **Մտապահել** հատվածները։

Մտապահելը կարող է հրաշալի գործիք լինեն ուսանողներին օգնելու համար, որ իմանան և սիրեն սուրբ գրությունների ընտրված հատվածները։ Ինչպես բացատրել է Երեց Ռիչարդ Գ. Սքոթը. «Երբ սուրբ գրությունները օգտագործում են այնպես, ինչպես Տերը պատվիրել է, որ դրանք արձանագրվեն, դրանք ունենում են ներհատուկ զորություն, որը չի հաղորդվում, երբ սեփական բառերով է ասվում» (“He Lives,” *Ensign*, Nov. 1999, 88)։ Այնուամենայնիվ պետք է հոգատար վերաբերմունք ցուցբերել, հարմարեցնելով ակնկալիքները յուրաքանչյուր ուսանողի ունակությունների և հանգամանքների հետ։ Չպետք է թույլ տալ, որ ուսանողները ամաչեն կամ ճնշված զգան, եթե նրանք ի վիճակի չեն մտապահել։



**«Մեծ զորություն է պարունակվում սուրբ գրությունները մտապահելու մեջ: Մտապահել սուրբ գրությունը նման է նոր ընկերություն ստեղծելուն: Այն նման է նոր անձի հայտնաբերելուն, որը կարող է օգնել կարիքի ժամանակ, ոգեշնչում և սփոփանք պարգևել և լինել անհրաժեշտ փոփոխության համար լիցքի աղբյուր»:**

(Ռիչարդ Գ. Սքոթ, «Սուրբ գրության զորությունը», 6)

Ուսուցիչները ավելի լավ կկարողանան օգնել իրենց ուսանողներին, եթե իրենք էլ սերտեն այս հատվածները։ Երբ ուսուցիչները հետևողականորեն անդրադառնում են սերտելու համար նախատեսված սուրբ գրությունների հատվածներին, պահպանում են պատշաճ ակնկալիքներ և օգտագործում են սովորելու տարբեր մեթոդներ, նրանք ավելի շատ հաջողությունների կհասնեն ուսանողներին օգնելիս, որպեսզի սերտեն այս կարևոր հատվածները։ Դասերի ընթացքում սերտելու համար նախատեսված սուրբ գրությունների հատվածները պետք է օգտագործվեն, որ պարզաբանվեն դրանց հետ կապված վարդապետությունները և սկզբունքները։ Դրանք կարող են օգտագործվել որպես հավաքների թեմա կամ ցուցադրվեն դասարանի մի մասում։ Ուսանողներին նաև պետք է խրախուսել սովորել և կիրառել դրանք դասից դուրս։

Այն տարածքներում, որտեղ բազմաթիվ ուսուցիչներ միասին ծառայում են ֆակուլտետում, ուսանողների սովորելու մակարդակը կբարձրանա, երբ ֆակուլտետի անդամները միասնականորեն անդրադառնան սուրբ գրությունները սերտելուն։ Ուսուցիչները պարբերաբար կարող են ընտրել կրկնել նախորդ տարիներում սերտած սուրբ գրությունների հատվածները, որպեսզի ուսանողները կարողանան պահպանել բոլոր ընտրված հատվածները, որոնք սերտել են։

Մինչդեռ սուրբ գրությունները սերտելը ուսումնական ծրագրի կարևոր մասն է, այն պետք է լրացնի, ոչ թե ստվերում թողնի սուրբ գրությունների ամենօրյա հաջորդական ուսումնասիրությունը։ Ուսուցիչները պետք է իմաստությամբ ժամանակ տրամադրեն սուրբ գրությունները սերտելուն։ Տնային ուսումնասիրության սեմինարիայի ուսուցիչները հատկապես պետք է զգույշ լինեն, որ շաբաթական դասերը չվերածվեն շաբաթական սուրբ գրությունների սերտման միջոցառման։ Ուսուցիչները պետք է ընտրեն մեթոդներ, վարժություններ և երաժշտություն, որոնք պահպանում են սուրբ գրությունների արժանապատվությունը, նպատակը և հոգին, և որ խուսափում են անհամաձայնություններից։



*Ծանուցում*

## Հիմնական վարդապետություններ [2.7.2]

Հիմնական Վարդապետությունները ներկայացվել են, որպեսզի ընդգծվեն և սեմինարիայի, և ինստիտուտի դասերի ժամանակ։ Ուսուցիչները պետք է օգնեն ուսանողներին գտնել, հասկանալ, հավատալ, բացատրել և կիրառել ավետարանի այս հիմնական վարդապետությունները։ Դա կօգնի ուսանողներին ամրացնել իրենց վկայությունները և մեծացնել իրենց երախտագիտությունը Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի նկատմամբ։ Այս վարդապետությունների ուսումնասիրությունները նաև կօգնեն նրանց լինել ավելի լավ նախապատրաստված ուրիշներին այս կարևոր ճշմարտություններն ուսուցանելու համար։

Կարևոր է հիշել, որ ավետարանի այլ նշանակալից վարդապետություններ նույնպես կուսուցանվեն, չնայած որ դրանք ընդգրկված չեն Հիմնական Վարդապետությունների շարքում։

Սեմինարիաների և Կրոնի Ինստիտուտների կողմից ընտրված Հիմնական Վարդապետություններն են.

- Աստվածագլուխ
- Փրկության ծրագիր
- Հիսուս Քրիստոսի Քավությունը
- Տնտեսություններ, Ուխտադրժություն և Վերականգնում
- Մարգարեներ և հայտնություն
- Քահանայություն և քահանայության բանալիներ
- Արարողություններ և ուխտեր
- Ամուսնություն և ընտանիք
- Պատվիրաններ

Երբ ուսուցիչները անձամբ ուսումնասիրեն և հասկանան այս վարդապետությունները, նրանք ավելի բնականորեն կանդրադառնան և կվկայեն դրանց մասին, երբ նրանք ուսուցանեն։ Այնուամենայնիվ, նրանք չպետք է շեղվեն սուրբ գրությունները հերթականությամբ ուսուցանելուց՝ միայն այս վարդապետությունների վրա կենտրոնանալով։ Այլ ուսուցիչները պետք է մշտապես ուշադրություն դարձնեն այս վարդապետություններին, երբ դրանք բնականորեն հայտնվում են սուրբ գրությունների տեքստում և ուսումնական ծրագրերում։ Այսպիսով, Հիմնական Վարդապետությունների ցուցակը ծառայում է որպես հիշեցում, որ կենտրոնանան այդ հավերժական ճշմարտությունների վրա, որ կլինեն ամենաարժեքավորը ուսանողների համար, և հատուկ ուշադրություն դարձնեն դրանց վրա ողջ ուսուցման ընթացքում։ Այս Հիմնական Վարդապետությունները կարող են օգտագործվել նաև որպես ելույթների թեմաներ։

Իմաստուն ուսուցիչը նաև կհիշի, որ համբերությունը և հետևողականությունը կարևոր են, որ օգնեն ուսանողներին հասկանալ այս վարդապետությունները։ Չի ակնկալվում, որ ուսանողը ամեն ինչ միանգամից կհասկանա։ Տերն ուսուցանում է Իր զավակներին «տող առ տող, ցուցում առ ցուցում» (ՎևՈՒ 98.12)։ Ուսուցիչները և ուսանողները պետք է նայեն այս վարդապետությունները հասկանալուն որպես մի գործընթաց, որն առաջ կգա սեմինարիայի չորս տարիների ընթացքում և կշարունակվի ինստիտուտի տարիներին։



*Ծանուցում*

# 3

# Ուսուցանել սուրբ գրությունները Սեմինարիաներում և Կրոնի Ինստիտուտներում

Որպեսզի օգնեն պատանիներին և երիտասարդ ամուրիներին հասկանալ և ապավինել Հիսուս Քրիստոսի ուսմունքներին և Քավությանը, սեմինարիայի և Ինստիտուտի ուսուցիչներին հանձնարարված է ուսանողներին ուսուցանել ավետարանի վարդապետությունները և սկզբունքները, ինչպես դրանք տրված են սուրբ գրություններում: Սա իրականացնելու համար ՍևՒ ղեկավարությունը վճռել է, որ սեմինարիայում և ինստիտուտում սուրբ գրությունների գրքերը և գլուխները պետք է ուսուցանվեն այն հերթականությամբ, ինչպես դրանք տրված են կանոնիկ գրքերում: Մինչդեռ սա չի նշանակում, որ յուրաքանչյուր հատված պետք է ուսուցանվի ճիշտ հերթականությամբ, յուրաքանչյուր դաս հիմնականում կհետևի պատմության ընթացքին կամ հատվածների բնական ընթացքին: Այս եղանակով սուրբ գրություններն ուսումնասիրելը հիմքեր է ապահովում հասկանալու ուղերձի ողջ բովանդակությունը, որը փորձել է հաղորդել ոգեշնչված հեղինակը, և թույլ է տալիս, որ ավետարանի սկզբունքները և վարդապետությունները ուսումնասիրվեն այնպես, ինչպես դրանք տրված են և ներկայացված են սուրբ գրության տեքստում:

Սուրբ գրությունները հերթականությամբ ուսումնասիրելը.

- Թույլ է տալիս ուսուցիչներին և ուսանողներին ուսումնասիրել ավետարանի ճշմարտությունները իրար հետ, ինչպես նաև սուրբ գրությունների այլ բովանդակությունների հետ ներդաշնակության մեջ: Սա թույլ է տալիս ուսուցիչներին և ուսանողներին պարզությամբ և զորությամբ տեսնել և հասկանալ սուրբ գրությունների ոգեշնչող ուղերձները:
- Ապահովում է ավետարանի վարդապետությունները և սկզբունքները պատշաճորեն կարևորելը և կրկնելը, ինչպես դրանք տրված են սուրբ գրություններում:
- Օգնում է ուսանողներին և ուսուցիչներին գտնել «պատճառահետևանքային» կապերը ավելի հեշտությամբ:



- Աջակցում է ուսանողներին հայտնաբերել և հասկանալ բազմաթիվ ավետարանի սկզբունքներ, նույնիսկ երբ դրանք միգուցե մանրամասնորեն չեն քննարկվել դասի ժամանակ: Յուրաքանչյուր ուսանողների համար անձնապես այս ճշմարտությունները հասկանալի կդառնան Սուրբ Հոգու միջոցով և ապա կիարմարեցվեն նրանց իսկ առանձնահատուկ պայմանների համաձայն:
- Թույլ է տալիս ուսուցիչներին և ուսանողներին ուսումնասիրել և քննարկել ավետարանի վարդապետությունները և սկզբունքները նրանց կյանքի ու փորձառությոնների համատեքստում, ովքեր ապրել են նախկինում: Սա օգնում է ուսանողներին ավելի հեշտությամբ տեսնել այս սկզբունքներն ու վարդապետությունները իրենց սեփական կյանքի համատեքստում:
- Օգնում է ամբողջությամբ ծանոթ լինել կանոնիկ գրքերից յուրաքանչյուրին:

Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը ուսուցանել է, որ սուրբ գրության գիրքը «սկզբից մինչև վերջ կարդալը սկիզբ է դնում կենդանի ջրի հոսքին դեպի մեր կյանք, ծանոթացնելով մեզ կարևոր պատմությունների, ավետարանի վարդապետությունների և հավերժական սկզբունքների հետ: Այս մոտեցումը նաև հնարավորություն է տալիս մեզ սովորել սուրբ գրությունների մեծ հերոսների մասին և իրադարձությունների և ուսմունքների հաջորդականության, ժամանակների և համատեքստի մասին: Այս ձևով գրվածը կարդալը բացահայտում է մեզ համար սուրբ գրությունների մեծ պաշարը: Սա առաջին և ամենահիմնական ձևն է կենդանի ջուր ունենալու համար» (“A Reservoir of Living Water” CES fireside for young adults, Feb. 4, 2007, 2):

*Ծանուցում*

## Միացնել ավետարանը ուսուցանելու և ուսումնասիրելու հիմունքները [3.1]

Սուրբ գրությունների վրա հիմնված սեմինարիայի կամ ինստիտուտի յուրաքանչյուր դաս կենտրոնանում է սուրբ գրության հատվածի վրա, և ոչ թե որոշակի գաղափարի, վարդապետության կամ սկզբունքի վրա: Ուսումնական ծրագիրը բաժանում է սուրբ գրությունները այս սուրբ գրության հատվածներին, որոնք կարող են այնքան փոքր լինել, որ մեկ գլուխ (կամ բաժին) ներառեն կամ այնքան մեծ, որ սուրբ գրության ամբողջ գիրքը ներառեն: Սուրբ գրությունների հատվածների մեծամասնությունը պարունակում են բնական ընդհատումներ, որտեղ ի հայտ են գալիս գործողությունների կամ թեմաների փոփոխություններ: Այս փոփոխությունների վրա հիմնված, սուրբ գրության հատվածը բաժանվում է ավելի փոքր մասերի կամ հատվածների խմբերի: Սուրբ գրության ողջ հատվածի ուսումնասիրությունը այս ավելի փոքր հատվածների բաժանելը տալիս է ընդհանուր ուրվագիծ ոգեշնչված հեղինակի ուղերձը հասկանալու և ուսուցանելու համար:



Երբ ուսուցիչներն ու ուսանողները ուսումնասիրում են սուրբ գրության հատվածի այս մասերը հերթականությամբ, նրանք միացնում են Ավետարանի Ուսուցանման և Ուսումնասիրության Հիմունքներից շատերը: Ավետարանի Ուսուցանման և Ուսումնասիրության Հիմունքները, ինչպիսին են համատեքստը և բովանդակությունը հասկանալը, ավետարանի վարդապետությունները և սկզբունքները ներկայացնելը,

*Ծանուցում*

հասկանալը, ճշմարտացիությունը և կարևորությունը զգալը և կիրառելը մեթոդներ չեն, այլ արդյունքներ, որոնց պետք է հասնել: Այս հիմունքները իրար հետ ներդաշնակությամբ են գործում և հաստատում են հիմնական օրինաչափություն, որին ուսուցիչներն ու ուսանողները կարող են հետևել, որպեսզի սերմանեն ավետարանը իրենց մտքերում և սրտերում: Այս օրինաչափությունը նկարագրվում է հետևյալ կերպ.

**1. Հասկանալ համատեքստը և բովանդակությունը:** Օգնելը, որ ուսանողները հասկանան սուրբ գրքի հատվածի համատեքստը և բովանդակությունը, սուրբ գրությունները ուսուցանելու գործընթացի հիմնական քայլն է: Այնպիսի տեղեկություն հասկանալը, ինչպիսին է համատեքստը և պատմական անցքերը, հիմք է ստեղծում ավետարանի սկզբունքները և վարդապետությունները բացահայտելու համար, ինչպես նաև պատկերացում է տալիս և պարզաբանումներ է կատարում այն ճշմարտությունների վերաբերյալ, որոնք գտնվում են սուրբ գրության հատվածում: Հասկացողության պարզությունը և խորությունը, որ տալիս է այս հիմքը, հաճախ պակասում է կամ կորում, երբ ուսուցանվում է սուրբ գրության մասից միայն մեկ կամ երկու հատված:

**2. Գտնել վարդապետությունները և սկզբունքները:** Սուրբ գրությունների բովանդակությունը հասկանալը նախապատրաստում է ուսանողներին և ուսուցիչներին գտնել սկզբունքները և վարդապետությունները, որոնք գտնվում են սուրբ գրության հատվածում: Երբեմն սուրբ գրության հեղինակը ուղղակի ձևով շարադրում է սկզբունքը կամ վարդապետությունը, որը ցանկանում է տալ: Այլ դեպքերում այդ ճշմարտությունները պարզապես ակնարկվում են, երբ դրանք նկարագրվում են սուրբ գրության պատմության մեջ, կարիք առաջացնելով արտահայտել ավետարանի ուսուցումը ճշմարտության պարզ արտահայտությամբ:

**3. Հասկանալ այդ վարդապետությունների և սկզբունքների նշանակությունը:** Սկզբունքները և վարդապետությունները ներկայացնելուց անմիջապես հետո ուսանողները և ուսուցիչները փնտրում են ավելի լավ հասկանալ այդ ճշմարտությունները՝ վերլուծելով և քննարկելով դրանց նշանակությունը: Հաճախ սուրբ գրության հատվածը պարունակում է պարզաբանող մեկնաբանություն, որը կարող է օգնել ուսանողներին հասկանալ վարդապետության կամ սկզբունքի իմաստը: Բացի դրանից, նմանեցնելով սուրբ գրությունները ժամանակակից համատեքստին օգնում է ուսանողներին ավելի լավ հասկանալ, թե ինչ նշանակություն ունեն սկզբունքները և վարդապետությունները իրենց կյանքում: Երբ ուսանողների հասկացողությունը վարդապետության կամ սկզբունքի վերաբերյալ զարգանում է, ուրիշներին ավետարանի ճշմարտությունը բացատրելու հնարավորություն ունենալը օգնում է ամրացնել և էլ ավելի դյուրըմբռնելի դարձնել իրենց սեփական հասկացողությունը:

**4. Զգալ սկզբունքի կամ վարդապետության կարևորությունը Հոգու ազդեցության միջոցով:** Սկզբունքը կամ վարդապետությունը պարզ հասկանալը նախապատրաստում է ուսանողներին զգալ դրա ճշմարտությունը և կարևորությունը: Երբ ուսանողները Հոգու ազդեցության միջոցով զգում են սկզբունքի կամ վարդապետության ճշմարտությունը, կարևորությունը և ծայրահեղ անհրաժեշտությունը, այդ ճշմարտությունը իրենց կյանքում կիրառելու

ցանկությունը մեծանում է: Ուսուցիչները կարող են օգնել ուսանողներին հրավիրել և մեծացնել Հոգու այս զգացողությունները, նրանց հնարավորություն տալով կիսվել փորձառություններով, որոնք նրանք ունեցել են ավետարանի սկզբունքով ապրելով և վկայեն դրա ճշմարտության մասին: Ուսուցիչները կարող են նաև կիսվել իրենց վկայությամբ և փորձառությամբ: Շատ դեպքերում սուրբ գրության հեղինակը նույնպես վկայություն է բերում ուսուցանված սկզբունքի կամ վարդապետության վերաբերյալ: Ուսուցիչները և ուսանողները պետք է փնտրեն այս հաստատող վկայությունները սուրբ գրության մասի հատվածներում:

*Ծանուցում*

**5. Կիրառել վարդապետությունները և սկզբունքները:** Վարդապետության կամ սկզբունքի ճշմարտությունը և կարևորությունը զգալը ուսանողի համար բացում է այն իր կյանքում կիրառելու դուռը: Չնայած ավետարանի սկզբունքի անձնական կիրառումը շատ հաճախ տեղ է գտնում դասարանից դուրս, կան կարևոր բաներ, որոնք կարող են պատահել դասի ընթացքում, որ օգնում են մեծացնել ուսանողի պատասխանատվությունը և կարողությունը կիրառելու այն, ինչը նրանք սովորում են իմաստալից ձևով: Ուսուցիչները ուսանողներին կարող են հնարավորություններ տալ խորհելու իրենց սեփական իրավիճակի մասին և մտածել յուրահատուկ ուղիներ, որոնցով նրանք կարող են կիրառել սկզբունքը կամ վարդապետությունը: Երբ ուսանողներին ժամանակ է տրվում անդրադառնալ և խորհել, թե ինչպես անհատականացնել սկզբունքը իրենց սեփական կյանքի համար, Հոգին կարող է բերել անհատական ուղղություն նրանց մտքում: Երբ հարմար լինի, ուսուցիչները կարող են հրավիրել ուսանողներին կիսվել մտքերով, թե ինչպես կարող են նրանք կիրառել սկզբունքները ապագայում:



Այս հիմնական օրինաչափությունը ամբողջությամբ կամ կիսով չափ կրկնվում է դասի ողջ ընթացքում, երբ ուսուցիչները և ուսանողները ուսումնասիրում են հատվածների յուրաքանչյուր խումբը սուրբ գրության մասում:

Սուրբ գրության հատվածի որոշ մասերի վրա հատուկ ուշադրություն կդարձվի դասի ընթացքում, մինչ մնացածներին ավելի քիչ ուշադրություն կդարձվի, քանի որ դրանք ընդհանուր առմամբ ավելի քիչ էական են ոգեշնչված հեղի-

*Ծանուցում*

նակի ուղերձի կամ ուսանողների առանձնակի կարիքների համար: Որոշ հատվածների համար շատ ժամանակ և եռանդ կտրամադրվի, որպեսզի հասկացվի համատեքստը և բովանդակությունը, բացահայտվեն ավետարանի սկզբունքները և վարդապետությունները, և որպեսզի ուսուցիչները շարունակեն առաջնորդել ուսանողներին սկզբունքը հասկանալու, դրանց ճշմարտությունը և կարևորությունը զգալու և կիրառել փորձելու ողջ գործընթացում:

Այլ դեպքերում համատեքստն ու բովանդակությունը բավականաչափ կուսումնասիրվեն և կհասկացվեն, որպեսզի սկզբունքը կամ վարդապետությունը ներկայացվեն նախքան սուրբ գրության հատվածի հաջորդ մասին անցնելը: Երբ ուսուցիչները կամ ուսանողները հակիրճ ձևով նշում են մի վարդապետություն կամ սկզբունք, երբ այն ակնհայտ է դառնում տեքստում, այն հնարավորություններ է տալիս Սուրբ Հոգուն սովորեցնել և անհատականացնել ավետարանի ճշմարտությունները, որոնց կարիքը ուսանողները անհատականապես ունեն, չնայած որ այս ճշմարտությունները միգուցե ամբողջությամբ չքննարկվեն որպես դասի մաս:

Ինչ վերաբերվում է այլ մասերին, ուսուցիչները և ուսանողները կարող են ուսումնասիրել միայն համատեքստը և բովանդակությունը, կամ ուսուցիչները կարող են պարզապես ամփոփել պատմության իմաստը կամ բովանդակությունը նախքան հատվածների հաջորդ խմբին անցնելը: *Ամփոփել* նշանակում է հակիրճ ձևով ասել, թե ինչ է տեղի ունենում գլուխներում կամ հատվածներում, որոնց վրա ուշադրություն չեն դարձվել դասարանում: Ամփոփելը թույլ է տալիս ուսուցչին արագ առաջ անցնել սուրբ գրության հատվածի մասերով: Սուրբ գրության մասերի հատվածները ամփոփելով, և ոչ թե դրանք բաց թողնելով, ուսուցիչները օգնում են ուսանողներին իրենց մտքում հասկանալի պահել պատմության ընթացքը և համատեքստը և հիմք են ստեղծում սկզբունքները կամ վարդապետությունները հասկանալու համար, որոնք առաջ կգան հետագա հատվածներում: Ամփոփելը նաև օգնում է պահպանել ոգեշնչված հեղինակի ուղերձի պարզությունը և բնական ընթացքը:

Երբ ուսուցիչները և ուսանողները այս ձևով հերթականությամբ առաջ են ընթանում սուրբ գրության հատվածի յուրաքանչյուր մասում, նրանք կարող են ավելի լավ հասկանալ, թե ինչպես են հատվածների մի խումբը կապված մյուսների հետ: Սուրբ գրության հատվածների բազմաթիվ մասերի միջև կապը տեսնելը օգնում է ուսուցիչներին և ուսանողներին ոչ միայն հասկանալ առանձին վարդապետություններ և սկզբունքներ ավելի խորությամբ, այլ նաև օգնում է նրանց ավելի լայն պատկերացում կազմել այն մասին, թե ինչ են ուսուցանում սուրբ գրությունները:

## Ղուկաս Ե. Օրինակ [3.2]

*Ծանուցում*

Հետևյալ օրինակը ցույց է տալիս, թե ինչպես ուսուցիչը կարող է ուսուցանել սուրբ գրության մասը միավորելով ավետարանը ուսուցանելու և ուսումնասիրելու հիմունքները:

Սուրբ գրության մասը այս օրինակում՝ Ղուկաս 5-ում, կարող է բաժանվել հատվածների փոքր խմբերի կամ մասերի, հիմնվելով պատմության նյութի կամ թեմայի փոփոխության վրա.

| | |
|---|---|
| Ղուկաս Ե.1–11 | Հրաշքով բազմաթիվ ձկներ որսալուց հետո Պետրոսը, Հակոբոսը և հովհաննեսը կանչվում են Տիրոջ կողմից լինելու մարդկանց որսորդներ: |
| Ղուկաս Ե.12–26 | Հիսուսը բժշկում է ֆիզիկկան արատներ ունեցող մի շարք անհատների և ներում մեղքեր: |
| Ղուկաս Ե.27–35 | Հիսուսը ուտում է մաքսավորների և մեղաորների հետ, պատճառ տալով, որ դպիրներն ու Փարիսեցիները կասկածեն Իրեն: |
| Ղուկաս Ե.36–39 | Հիսուսը տալիս է նոր գինու առակը հին տիկերի մեջ: |

Հետևյալ ցանկը կօգտագործվի ցուցադրելու համար այս օրինակ դասի զարգացումը այս յուրաքանչյուր մասի ընթացքում: Այն նաև կներկայացնի յուրաքանչյուր հատվածների խմբում Ավետարանի Ուսուցանման և Ուսումնասիրության Հիմունքների միավորման աստիճանը, որը ծրագրված էր ուսուցչի կողմից:



*Ծանուցում*

## Հատվածներ 1–11

### Հրաշքի միջոցով բազմաթիվ ձկներ որսալուց հետո Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեսը կանչվում են Տիրոջ կողմից լինելու մարդկանց որսորդներ:

Ուսուցիչը նախ կօգնի ուսանողներին **հասկանալ** Ղուկաս Ե.1–11 **ենթատեքստը և բովանդակությունը** ։ Երբ նրանք ուսումնասիրեն այս հատվածները, ուսանողները կսովորեն, որ Հիսուսը խնդրեց Պետրոսին, ասելով. «նավը դեպի խորը տար և քո ուռկանները գցիր որսի» (հատված 4): Նրանք կտեսնեն, որ չնայած ամբողջ գիշեր աշխատել էին և ոչինչ չէին բռնել (հատված 5), Պետրոսը հնազանդվեց Տիրոջը և ի զարմանս իրեն շատ ձուկ որսաց: Պետրոսի փորձառությունից ուսանողները կարող են **գտնել սկզբունքը.** *Եթե մենք անում ենք այն, ինչ Տերն է խնդրում, նույնիսկ երբ մենք չենք հասկանում, թե ինչու, Նա կարող է տալ ավելի մեծ օրհնություններ, քան մենք ակնկալում ենք:* Ուսուցիչը այնուհետև կարող է օգնել ուսանողներին ավելի լավ **հասկանալ այս սկզբունքը** և թե ինչ նշանակություն ունի այն իրենց համար, նրանց հետ քննարկելով, թե ինչպես կարող է Պետրոսի փորձառությունը նման լինել իրենց սեփական կյանքի պայմաններին կամ կիսելով սրա հետ կապված հայտարարություն վերջին օրերի մարգարեի կամ առաքյալի կողմից:

Այս հատվածների հետ կապված ուսուցչի ցանկությունն է ոչ միայն օգնել ուսանողներին գտնել և հասկանալ այս կարևոր սկզբունքը, այլ նաև օգնել նրանց **զգալ դրա ճշմարտությունը և կարևորությունը** Հոգու ազդեցության միջոցով: Սա անելու համար ուսուցիչը կարող է խնդրել ուսանողներին կիսվել, թե ինչպես են նրանք օրհնվել արձա-



*Ծանուցում*

գանքելով Տիրոջ առաջնորդությանը, նույնիսկ երբ նրանք ամբողջությամբ չեն տեսել դրա պատճառները: Երբ ուսանողները և ուսուցիչը վկայեն, թե ինչպես են նրանք իրենց կյանքում տեսել այս սկզբունքի ապացույցները, Հոգին կարող է վկայել դրա ճշմարտության վերաբերյալ և ոգեշնչել նրանց գործել: Ուսուցիչը այնուհետև կարող է նրանց տալ մի քանի րոպե խորհելու և գրելու համար, թե ինչպես նրանք կարող են **կիրառել** այս սկզբունքը:

Ցանկը այժմ արտացոլում է, թե Ավետարանը Ուսուցանելու և Ուսումնասիրելու Հիմունքներից որոնք են միավորվել հատվածների այս մասում:

## Հատվածներ 12–26

### Հիսուսը բժշկեց ֆիզիկական արատներ ունեցող մի շարք անհատների և մեղքեր ներեց:

Ուսանողներին օգնելու համար **հասկանալ այս հատվածների բովանդակությունը** ուսուցիչը պետք է օգնի նրանց նախ ծանոթանալ Տիրոջ կողմից բորոտի և անդամալույծի բժշկման պատմությանը: Որպեսզի խորացնի բովանդակության նրանց հասկացողությունը, ուսուցիչը կարող է օգնել ուսանողներին վերլուծել, թե ինչով են այս երկու բժշկումները նման իրար և ինչով են տարբեր: Որպեսզի օգնի նրանց անել սա, ուսուցիչը պետք է օգնի նրանց մտածել, թե ինչ դեր խաղաց հավատքը երկու բժշկություններում էլ: Բացահայտելուց հետո, որ երկու դեպքերում էլ հավատքը անհրաժեշտ էր, ուսանողները կարող են **գտնել սկզբունքը.** *Երբ մենք հավատք ենք ցուցաբերում և գալիս ենք Փրկչի մոտ, Նա կարող է բժշկել մեզ:* Վերլուծելով երկու դեպքերի



*Ծանուցում*

տարբերությունները, ուսանողները կնկատեն, որ մինչդեռ բորոտը ինքն էր եկել Տիրոջ մոտ, անդամալույծ մարդը ուներ ուրիշների օգնության կարիքը: Սրանից ուսանողները կարող են գտնել մեկ այլ սկզբունք ևս. *Մենք կարող ենք օգնել ուրիշներին գալ դեպի Փրկիչը, որպեսզի նրանք կարողանան բժշկվել:*

Ուսուցիչը կարող է օգնել ուսանողներին **հասկանալ այս սկզբունքները,** խնդրելով նրանց բացի ֆիզիկական արատներից նկարագրել բաներ, որորցից մարդիկ կարող են բժշկվել: Քննարկումը կարող է օգնել ուսանողներին հասկանալ, որ այս հատվածների ֆիզիկական բժշկումը կարող է խորհրդանշել մեզ հոգևորապես բժշկելու Տիրոջ կարողությունը: Սա կարող է ներառել այնպիսի բաներ ,ինչպես մեր մեղքերը ներելը, վշտի մեջ մեզ մխիթարելը կամ մեր վախը կամ տագնապները հանգստացնելը:

Որպեսզի ուսանողներին օգնի **զգալ այս սկզբունքների ճշմարտությունը և կարևորությունը,** ուսուցիչը կարող է խնդրել ուսանողներին կիսվել փորձառությամբ, երբ նրանք, կամ մեկը, ում նրանք ճանաչում են, բժշկված լինեն հոգեպես կամ ֆիզիկապես: Ուսանողներին կարելի է նաև խնդրել կիսվել օրինակներով, երբ նրանք տեսել են անհատի, ով մեկ ուրիշին բերում է Տիրոջ մոտ՝ Փրկչի բժշկող ազդեցությունը ստանալու համար: (Երբ ուսանողները կիսվում են նման օրինակներով, նրանց պետք է հիշեցնել, որ չտան այն մարդկանց անունները, ովքեր ներգրավված են այդ պատմության մեջ): Ուսուցիչը կարող է հրավիրել ուսանողներին վկայել Փրկչի սիրո և մեզ բժշկելու Նրա զորության մասին:

Որպեսզի խրախուսեն **գործել,** ուսուցիչը պետք է այնուհետև հրավիրի ուսանողներին մտածել մի որոշակի բան, որ նրանք կարող են անել, որ ցուցաբերեն հավատք բժշկվելու, ներվելու կամ մխիթարվելու համար, կամ եղանակներ, որոնցով նրանք կարող են ընկերոջ կամ որևէ մեկի բերել Փրկչի մոտ:

Նախքան 27–35 հատվածներին անցնելը ուսուցիչը կարող է խնդրել ուսանողներին կիսվել, թե ինչ նրանք սովորեցին Փրկչի մասին այս հատվածներից: Այս հրավերի արձագանքները կարող են երախտագիտության և Փրկչի կարեկցանքի զգացողություններ առաջացնել:

## Հատվածներ 27–35

### Հիսուսը կերավ մաքսավորների և մեղավորների հետ, պատճառ տալով դպիրներին ու Փարիսեցիներին կասկածել Իրեն:

Այս մասում ուսուցիչը ծրագրում է միայն օգնել ուսանողներին **հասկանալ համատեքստը և բովանդակությունը:** Այս հատվածներն ուսումնասիրելիս ուսանողները կսովորեն մաքսավոր Ղևիի կամ Մատթեոսի կանչվելու մասին և այն մասին, որ Հիսուսը կերավ մաքսավորների և մեղավորների հետ (բովանդակություն): Ուսուցիչը պետք է օգնի ուսանողներին հասկանալ, որ մաքսավորները հրեաների կողմից դիտվում էին որպես հասարակությունից մերժված և մեղավոր մարդիկ (համատեքստ): Այս ենթատեքստը կօգնի ուսանողներին հասկանալ

Տիրոջ աշակերտը դառնալու Մատթեոսի հետագա կոչման նշանակությունը: Այն նաև լրացուցիչ նշանակություն կտա այն երկխոսությանը, որը տեղ է գտել այս հատվածներում փարիսեցիների և Տիրոջ միջև այն բանի վերաբերյալ, որ Նա «ուտում և խմում էր մաքսավորների և մեղավորների հետ» և Նրա առաքելության վերաբերյալ, որ օգներ մեղավորներին ապաշխարել (տես հատվածներ 30–32):

*Ծանուցում*




## Հատվածներ 36–39

### Հիսուսը տվեց նոր գինին հին տիկերի մեջ լցնելու առակը:

Որպեսզի օգնի ուսանողներին **հասկանալ այս առակի ենթատեքստը և բովանդակությունը,** ուսուցիչը կարող է նրանց ուշադրությունը հրավիրել 37 հատվածի տողատակի հղմանը (որը բացատրում է, որ տկերը կաշվե պարկեր են կամ գինու կաշվե պարկեր) և քննարկել նոր կաշվի, որը փափուկ է և ճկուն, և այն կաշվի միջև, որը կոշտացել է և դարձել դյուրաբեկ: Ուսուցիչը այնուհետև կարող է բացատրել,

*Ծանուցում*

որ Հիսուսը խոսում էր փորիսեցիների մասին (համատեքստ), և որ այս առակի «հին հանդերձը» և «հին տկերը» ներկայացնում են փարիսեցիներին, ովքեր չէին կամենում փոխվել և ընդունել Քրիստոսի վարդապետությունը: Ուսուցիչը կարող է նաև նշել, որ «նոր հանդերձը» և «նոր տկերը» ներկայացնում են այն մարդկանց, ովքեր կամենում էին փոխվել և ընդունել Փրկչին և Նրա ուսմունքները:

Ուսուցիչը այնուհետև կարող է խնդրել ուսանողներին **գտնել սկզբունքը,** որը հիմնված է այս առակի վրա: Մի հնարավոր ճշմարտություն, որ ուսանողները կարող են գտնել, հետևյալն է. *Փրկչին և Նրա ավետարանը ընդունելու համար մենք պետք է հեզ լինենք և կամենանք փոխվել:* Ուսուցիչը այնուհետև կարող է օգնել ուսանողներին վերանայել այդ գլուխը, փնտրելով օրինակներ, որտեղ անհատները անզգա էին դարձել և իրենց ինքնավստահ կեցվածքով ուշադրություն չէին դարձնում Փրկչին և Նրա ուսմունքներին, ինչպես նաև օրինակներ, որտեղ անհատները խոնարհ էին և ցանկանում էին փոխվել: Այս վարժությունը կօգնի ուսանողներին ավելի լավ **հասկանալ այս սկզբունքը:**

Ուսուցիչը կարող է ավարտել դասը, հրավիրելով ուսանողներին կիսվել ցանկացած լրացուցիչ մտքերով կամ զգացողություններով, որոնք ձեռք են բերել Ղուկաս Ե գլխի իրենց այս ուսումնասիրության միջոցով: Ուսուցիչը կարող է նև վկայել ուսուցանված ճշմարտությունների վերաբերյալ և խրախուսել ուսանողներին գործել համաձայն այն սկզբունքների և վարդապետությունների, որոնք նրանք բացահայտել են:



# Նախապատրաստվել ուսուցանելուն

# 4

## Անձնական պատրաստվածություն [4.1]

Երեց Բոյդ Ք. Փաքերը ասել է. «Զորություն է գալիս, երբ ուսուցիչը անում է այն ամենը, ինչ նա կարող է անել նախապատրաստվելու համար, խոսքը չի վերաբերվում միայն հենց դասին, այլ իր կյանքը Հոգու հետ ներդաշնակության մեջ պահելուն: Եթե նա սովորի ապավինել Հոգուն ոգեշնչում ստանալու համար, նա կարող է գնալ իր դասին . . . ապահովությամբ իմանալով, որ նա կարող է սովորեցնել ոգեշնչմամբ» (*Teach Ye Diligently,* rev. ed. 1991, 358–59):

Ավետարանի ուսուցչի նախապատրաստության ամենակարևոր մասը իր անձը հոգևորապես նախապատրաստելն է: Այդ նախապատրաստության որոշ կարևոր նկատառումներն են ավետարանի համաձայն ապրելը, օգնության և առաջնորդության համար աղոթելը, հավատք գործածելը և վերապատրաստման դասընթացներին մասնակցելը:

### Ապրել ավետարանին համաձայն[4.1.1]

Որքան հավատարմորեն են ուսուցիչները ապրում ավետարանով, դա ազդում է նրանց ուսուցանման յուրաքանչյուր ոլորտի վրա: Ավելի մեծ նախապատրաստություն չի կարող լինել, քան Սուրբ Հոգու առաջնորդության և ընկերակցության համար արժանի կյանքով ապրելը (տես բաժին 1.2, «Ապրել», էջ 2):

### Աղոթել օգնության և առաջնորդության համար [4.1.2]

Աղոթքը ուսուցանմանը պատրաստվելու էական մասն է կազմում (տես ՎևՈՒ 42.14, 104.79, 82): Ուսուցիչը կարող է աղոթել Հոգու օգնության համար, որ հասկանա սուրբ գրությունները և ավետարանի սկզբունքները, իմաստության համար, որ որոշի, թե ինչպես լավագույնս ուսուցանի այդ սկզբունքները Հոգով, օգնության և առաջնորդության համար նախքան յուրաքանչյուր դասի սկսվելը և ուսանողների ցանկության համար, որ զգան Հոգին և ուսուցանվեն Նրա կողմից: Ուսուցիչները կարող են խնդրել Տիրոջը խորաթափանցության համար, որ ավելի լավ հասկանան յուրաքանչյուր ուսանողի, օգնության համար, որ կարողանան անհատապես օգնել այն ուսանողներին, ովքեր խնդիրներ ունեն, և գթության պարգևի համար, որ սիրեն այն ուսանողներին, որոնց ամենադժվարն է սիրել (տես Մորոնի 7.48):



### Հավատք գործադրել [4.1.3]

Սեմինարիաների և Կրոնի Ինստիտուտների Նպատակի «ուսուցանել» պարբերությունը հուշում է, որ արդյունավետ ուսուցիչը պետք է ունենա վստահություն Աստծո խոսքի զորության հանդեպ,

*Ծանուցում*

հավատք առ Տերը և Սուրբ Հոգին, և վստահի ուսուցիչներին: Երբ ուսուցիչները հաջողությունների չեն հասնում, դա հաճախ լինում է այն պատճառով, որ այս տարրերից մեկը բացակայում է:

**Վստահություն խոսքի զորության հանդեպ:** Ուսուցիչները միգուցե գայթակղվեն կարծել, որ ուսանողներին դուր չի գա սուրբ գրություններն ուսումնասիրելը, կամ որ նրանք չեն կարող ամեն օր ուսուցանել սուրբ գրությունները և պահպանել ուսանողների հետաքրքրությունը: Այնուամենայնիվ, ուսուցիչները պետք է հիշեն, որ սուրբ գրությունները պարունակում են «կյանքի խոսքերը» (ՎևՈՒ 84.85) և որ խոսքն ունի «ավելի զորավոր ազդեցություն» մտքի վրա, «քան սուրը, կամ որևէ այլ բան» (Ալմա 31.5):

Երեց Հենրի Բ. Այրինգը ասել է. «Ես խնդրում եմ ձեզ, ձեր համար և ուսանողների համար, հավատք ունենալ, որ նրանք կկամենան կարդալ սուրբ գրությունները, ոչ թե, որ դուք պետք է մղեք նրանց դեպի այն, այլ, որ այն կմղի նրանց դեպի այն: Տերն է գրել գիրքը: Նա ցույց է տվել Նեփիին, թե ինչպես դա անել այնպես, որ այն գրավի ձեզ: Եվ, այն կգրավի ձեր ուսանողներին» ("The Book of Mormon Will Change Your Life" CES symposium on the Book of Mormon, Aug. 17, 1990, 2):

**Հավատք առ Տերը և Հոգին:** Ավետարանի սկզբունքները պատանիներին և երիտասարդներին ուսուցանելու պարտականությունը կարող է դժվար ու անհաղթահարելի թվալ: Սակայն դա Տիրոջ աշխատանքն է. Նա կօգնի նրանց, ովքեր հավատքով կդառնան դեպի Նա: Մորմոնը ուսուցանել է. «Եվ Քրիստոսն ասել է. Եթե դուք հավատք ունենաք առ ինձ, ապա զորություն կունենաք՝ անելու ինչ որ նպատակահարմար է ինձ» (Մորոնի 7.33):

Ուսուցիչները պետք է հավատան, որ Տերը հասկանում է յուրաքանչյուր ուսանողի կարիքները և ցանկանում է օրհնել նրանց: Ուսուցիչները պետք է հավատան, որ Սուրբ Հոգին ավետարանի ուղերձը կհասցնի յուրաքանչյուր ուսանողին և կոգեշնչի կիրառել ավետարանի սկզբունքները՝ համաձայն իրենց կարիքների և պայմանների: Ուսուցիչը պետք է հիշի, որ Մխիթարիչն է, որ «առաջ է ուղարկվել՝ ճշմարտությունն ուսուցանելու» (ՎևՈՒ 50.14):



**Վստահել ուսանողներին:** Ուսուցիչները պետք է հավատան, որ պատշաճ առաջնորդությամբ և քաջալերմամբ ուսանողները կարող են հասկանալ սուրբ գրությունները, սովորել գտնել վարդապետությունները և սկզբունքները, բացատրել ավետարանը ուրիշներին և կիրառել ավետարանի ուսմունքները իրենց կյանքում: Նախագահ Ջ. Ռուբեն Քլարկ Կրտսերը նկարագրել է սեմինարիայի և ինստիտուտի ուսանողների որոշ առանձնահատկությունները.

«Եկեղեցու երիտասարդները Հոգու բաների քաղցն ունեն. նրանք փափագում են սովորել ավետարանը, և նրանք ուզում են դա անկեղծորեն, կատարյալ ձևով: . . .

«Կարիք չկա թաքնվել այս հոգևորապես փորձառու երիտասարդության ետևում և կրոն շշնջալ նրա ականջին. դուք կարող եք դեմ առ դեմ կանգնել նրա առջև և խոսել նրա հետ: Կարիք չկա քողարկել կրոնական

ճշմարտությունները աշխարհիկ բաների քողի ներքո. դուք կարող եք բացահայտ կերպով ներկայացնել նրան այս ճշմարտությունները» (*The Charted Course of the Church in Education,* rev. ed. 1994, 3, 9):

Ժամանակ առ ժամանակ ուսանողների արտաքին տեսքը, վարքը կամ ավետարանը սովորելուն ուղղված արձագանքը թվում է,թե ցույց է տալիս, որ նրանք «Հոգու բաների քաղց» չունեն: Ուսուցիչների համար հատկապես կարևոր է այս պայմաններում հավատք գործադրել Նախագահ Քլարկի ուսմունքների առնչությամբ: Երեց Հենրի Բ. Այրինգը տվել է այս վերահաստատող խոստումը. «Մեր ուսանողները միգուցե չգիտեն, որ իրենք թուլանում են քաղցից, սակայն Աստծո խոսքերը կհագեցնեն ծարավը, որը նրանք չգիտեին, որ ունեն,և Սուրբ Հոգին կհասցնի այն նրանց սրտերի խորքը» ("We Must Raise Our Sights" CES conference on the Book of Mormon, Aug. 14, 2001, 3):

Ուսուցիչը, ով փնտրում է իրականացնել ՍևԻ Նպատակը հավատք գործադրելով խոսքի զորության հանդեպ, Տիրոջ և Սուրբ Հոգու հանդեպ, և ուսանողների հանդեպ, պետք է շարունակաբար հարցնի.

Իմ ուսուցումը.

1. Օգնու՞մ է խորացնել Աստծո խոսքի հասկացողությունը և սերը դրա հանդեպ:
2. Հրավիրու՞մ է Սուրբ Հոգուն և տանում դեպի շինացում:
3. Խրախուսու՞մ է յուրաքանչյուր ուսանողի անձամբ ուսումնասիրել ավետարանը և ապրել դրա համաձայն հավատքով:
4. Օգնու՞մ է իմ ուսանողներին ավելի լավ ճանաչել, սիրել և հետևել Հիսուս Քրիստոսին:

## Մասնակցել ուսուցիչների վերապատրաստմանը [4.1.4]

Սեմինարիաները և ինստիտուտները տրամադրում են ուսուցիչների վերապատրաստման հնարավորություններ բոլոր ուսուցիչների և ղեկավարների համար: Ուսուցիչների վերապատրաստումը հիմնականում նախատեսված է ուսուցումը լավացնելու, ավետարանի գիտելիքները շատացնելու և ուսուցիչներին օգնելու համար, որ սովորեն, թե ինչպես ծառայեն սեմինարիաներում և ինստիտուտներում:

Ուսուցիչների վերապատրաստման ուղիներից մեկը ուսուցիչների վերապատրաստման պաշտոնական ժողովներն են: Ուսուցիչների վերապատրաստման ժողովները տեղի են ունենում պարբերաբար և ուսուցիչներից և ղեկավարներից ակնկալվում է հաճախել: Այս ժողովների ժամանակ մասնակիցները ուսումնասիրում և քննարկում են սուրբ գրությունները՝ իրենց գիտելիքները խորացնելու համար: Նրանք սովորում և փորձում են ուսուցման ոգեշնչող մեթոդները: Նրանք նաև կիսում են մտքեր, թե ինչպես բարելավվեն ուսանողների ցուցակագրումը, մասնակցությունը և ավարտելը. խորհրդակցում են ներկայիս կարիքների վերաբերյալ, և սովորում են, թե ինչպես կատարեն կառավարելու պարտականությունները:

Ուսուցիչների վերապատրաստման մեկ այլ եղանակ ներառում է դասարան այցելությունը և



Ծանուցում

*Ծանուցում*

դիտումները։ Ուսուցիչների համար կարող է մեծապես օգտակար լինել կոորդինատոր, ղեկավար կամ ընկերակից ուսուցիչ հրավիրելը, որպեսզի դիտեն իրենց ուսուցումը և տան օգտակար խորհուրդներ։ Հաճախ դիտողին կարելի է խնդրել տալ առանձնահատուկ խորհուրդ որոշակի ուսուցանման հմտության վերաբերյալ, որը ուսուցիչը ձգտում է զարգացնել։ Հնարավորության դեպքում ուսուցչի համար օգտակար կլինի նաև այլ ուսուցիչներին դիտելը։

Նրանք, ովքեր հավատքով են մոտենում ուսուցիչների վերապատրաստմանը, անկեղծ ցանկություն ունենալով սովորել և զարգանալ, մշտական աճի ու զարգացման փորձառություն կունենան։

## Ուսանողի պատրաստվածություն [4.2]

Սուրբ գրություններում խոսվում է պատրաստվածության և պատրաստակամության վիճակի մասին նրանց սրտերում և մտքերում, ովքեր փնտրում են հոգևոր ուսուցում։ Օրինակ, Եզրասը՝ Հին Կտակարանից մի քահանա, «պատրաստել էր իր սիրտը, որ Տիրոջ օրենքը խնդրէ եւ կատարէ» (Եզրաս Է.10)։ Գործք Առաքելոցում նկարագրվում են հավատարիմ սրբեր, ովքեր «խոսքը բոլոր հոժարությամբ ընդունեցին» (Գոր. ԺԷ.11)։ Նեփիի ժողովրդին Իր այցելության ժամանակ, Փրկիչը խրախուսեց նրանց. «Պատրաստել ձեր մտքերը էգուցվա համար, և ես գալու եմ ձեզ մոտ կրկին» (3 Նեփի 17.3)։

Որպեսզի ուսանողները զգան Սուրբ Հոգու շենացնող ազդեցությունը իրենց սովորելու փորձառության մեջ, նրանք նույնպես պետք է լինեն «պատրաստ . . . լսելու խոսքը» (Ալմա 32.6)։ Դասարանում ուսանողները պատրաստ կլինեն սովորել, երբ նրանց միտքը սթափ լինի, երբ նրանց ուշադրությունը կենտրոնացած լինի սովորելու փորձառության վրա և երբ նրանք ցուցաբերեն Հոգու կողմից ուսուցանվելու ցանկություն։ Շատ բաների թվում, որ ուսուցիչը կարող է անել օգնելու ուսանողներին պատրաստել իրենց սրտերը և մտքերը ավետարանը սովորելուն, հետևյալն են.

**Աղոթել ուսանողների համար:** Ուսուցիչները կարող են խնդրել Տիրոջը թափել Իր Հոգին իրենց ուսանողների վրա «պատրաստելու նրանց սրտերն ընդունելու խոսքը . . . ուրախությամբ» (Ալմա 16.16–17)։

**Նպաստել սիրո և հարգանքի մթնոլորտին:** Ուսանողները, ովքեր իրենց սիրված, վստահված են զգում, և գնահատված իրենց ուսուցչի և այլ ուսանողների կողմից, դասարան կգան ավելի բաց Հոգու ազդեցության համար և մասնակցելու ավելի ուժեղ ցանկությամբ։

**Հաստատել նպատակի զգացողություն:** Ուսուցիչները պետք է օգնեն ուսանողներին հասկանալ, որ նրանք հաճախում են դասերին, որպեսզի ճանաչեն Երկնային Հորը և Նրա Որդուն՝ Հիսուս Քրիստոսին, և առաջ ընթանան դեպի հավերժական կյանքը Նրա ավետարանը ուսումնասիրելու միջոցով, ինչպես այն տրված է սուրբ գրություններում և մարգարեների խոսքերում։

**Ներկայացնել հետաքրքիր, պատշաճ և շենացնող դասեր:** Երբ ուսուցիչները մշտապես պատրաստում և ներկայացնում են շենացնող դասեր, ուսանողների մոտ ակնկալիք է ձևավորվում, որ նրանք որևէ արժեքավոր բան կսովորեն ամեն անգամ դասին հաճախելիս։ Նախազահ

*Ծանուցում*

Բոյդ Ք. Փաքերը ուսուցանել է. «Եթե դուք դաս եք սովորեցնում . . ., ուսանողները չեն վերադառնա որևէ խանդավառությամբ, եթե նրանք որևէ բան չսովորեն: Նրանք պետք է որևէ բան սովորեն, որ ցանկանան վերադառնալ: Նրանք դասարան կգան ցանկանալով, նույնիսկ ձգտումով, որտեղ նրանք սնուցվում են» (*Teach Ye Diligently,* 182):

**Հրավիրել Սուրբ Հոգին դասի սկզբում:** Հաճախ լավ պատրաստված, ուսանողի կողմից առաջնորդվող հավաքը, որը ներառում է աղոթք, հիմնի կատարում և միտք սուրբ գրություններից, հրավիրում է Հոգին, միաբանում է ուսանողներին և պատրաստում է նրանց մտքերը և սրտերը հոգևոր ուսուցման համար:

**Գրավել և պահպանել ուսանողների հետաքրքրությունը:** Ուսուցիչները կարող են օգնել կենտրոնացնել ուսանողների միտքը սովորելու փորձառության վրա յուրաքանչյուր դասը սկսելով այնպիսի եղանակով, որ գրավեն ուսանողների ուշադրությունը և առջնորդեն նրանց ուսումնասիրել սուրբ գրությունները ավելի մեծ նպատակով: Օրինակ, ուսուցիչը գրատախտակին կարող է գրել խիստ հետաքրքրող հարց կամ ցուցադրել առարկա կամ նկար, որ հետաքրքրություն է առաջացնում ուսանողների մոտ, երբ նրանք դասարան են մտնում:

Քանի որ շատ ուսանողներ ունեն ուշադրության սահմանափակ տևողություն, իմաստուն ուսուցիչը եղանակներ է փնտրում նրանց հետաքրքրությունը և խանդավառությունը դասի ժամանակ մի քանի անգամ բորբոքելու համար: Սա պետք է արվի այնպես, որ կենտրոնացնի ուսանողների ուշադրությունը ուսումնասիրով սուրբ գրությունների վրա:

**Նախապատրաստել ուսանողներին լինել արդյունավետ սովորողներ:** Նախքան ուսանողներին մասնակցել հրավիրելը ուսուցիչները պետք է հստակորեն բացատրեն, թե ինչ կպահանջվի նրանցից, տան օրինակ, ժամանակ տրամադրեն ուսանողների պատրաստվելու և փորձելու համար, և այնուհետև խրախուսեն և գովեն ուսանողների ջանքերը` սովորելու գործընթացում իրենց դերը կատարելու համար: Այն ուսուցիչները, ովքեր նախապատրաստում են ուսանողներին որպես սովորողներ իրենց դերը կատարելու համար, շատ ավելի մեծ հաջողություն կգտնեն Սեմինարիաների և Կրոնի Ինստիտուտների Նպատակն իրագործելիս:

## Դասի նախապատրաստություն [4.3]

### Աղբյուրներ դասին նախապատրաստվելու համար [4.3.1]

#### *Սուրբ գրություններ*

Սեմինարիայի բոլոր չորս դասընթացները և ինստիտուտի հաստատված դասընթացներից շատերը բաղկացած են կանոնիկ գրքերի ուսումնասիրությունից: Հիմնական աղբյուրը, երբ որոշում են, թե ինչ սովորեցնել այս դասընթացների ժամանակ, հենց սուրբ գրություններն են: Սեմինարիայի և ինստիտուտի ուսուցիչներին ուղղված ելույթում Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնը ուսուցանել է. «Միշտ հիշեք, սուրբ գրություններին և ապրող մարգարեների խոսքերին համապատասխան փոխարինող նյութ գոյություն չունի: Դրանք պետք է լինեն ձեր հիմնական աղբյուրները» (“The Gospel Teacher and His Message” address to CES religious educators, Sept. 17, 1976, 3):

*Ծանուցում*



Ինստիտուտի որոշ դասընթացներ կենտրոնանում են ավետարանի թեմաների վրա, կանոնիկ գրքերի ուսումնասիրության փոխարեն: Այս դասընթացների ուսուցիչները պետք է ընդունեն նյութը, որը խորհուրդ է տրվում ինստիտուտի ուսումնական ծրագրում (ինչպես նաև սուրբ գրությունները) որպես նրանց պատրաստվելու հիմնական աղբյուրներ: Ուսուցիչները պետք է միշտ հնարավորություններ փնտրեն օգտագործելու սուրբ գրությունները և մարգարեների խոսքերը, որպեսզի պարզաբանեն և լուսաբանեն այս դասընթացում ուսուցանվող վարդապետությունները և սկզբունքները:

## *Սեմինարիայի և ինստիտուտի ուսումնական ծրագիր*

Սեմինարիայի և ինստիտուտի ուսումնական ծրագրի նյութերը պատրաստվել են որպես հիմնական աղբյուր, որ օգնեն ուսուցիչներին պատրաստել և ուսուցանել արդյունավետ դասեր: Ուսումնական ծրագիրը տալիս է պատմական տեղեկություններ սուրբ գրությունների և դրանց համատեքստի վերաբերյալ, բարդ բառերի և արտահայտությունների բացատրություններ, սուրբ գրություններում ուսուցանված վարդապետությունների և սկզբունքների վերաբերյալ Բարձրագույն Իշխանավորների մեկնաբանությունները, և խորհուրդներ, թե որ բովանդակությունը, վարդապետությունները և սկզբունքները սովորեցնել: Այն նաև խորհուրդ է տալիս գաղափարներ, թե ինչպես սովորեցնել: Երբ ուսուցիչները օգտագործում են ուսումնական ծրագիրը սուրբ գրության հատվածի իրենց ուսումնասիրության հետ միասին, Սուրբ Հոգին կարող է ոգեշնչել նրանց, մինչ նրանք հարմարեցնում են դասը իրենց ուսանողների կարիքներին:

Երեց Հենրի Բ. Այրինգը բացատրություն է տվել կապված նախապատրաստության և ուսումնական ծրագիրը ուսումնասիրելու հետ. «Նրանք, ովքեր կանչված են մարգարեի կողմից հաստատելու համար ուսուցանվող վարդապետության ճշտությունը, վերանայում են այդ ուսումնական ծրագրի յուրաքանչյուր բառը, յուրաքանչյուր նկարը, յուրաքանչյուր գծապատկերը, որը դուք ստանում եք: Մենք կարող ենք բացել ուսումնական ծրագրի զորությունը պարզապես մեր հավատքը գործադրելով, որ այն ոգեշնչված է Աստծուց: . . .

Ուսումնական ծրագրի բովանդակությանը, ինչպես նաև դրա հաջորդականությանը հետևելը կբացի ուսուցանելու մեր առանձնահատուկ պարգևները, և ոչ թե կխեղդի դրանք» ("The Lord Will Multiply the Harvest" an evening with Elder Henry B. Eyring, Feb. 6, 1998, 4–5):

## *Լրացուցիչ աղբյուրներ*

Ուսուցիչները կարող են օգտագործել լրացուցիչ աղբյուրներ, ինչպես օրինակ Եկեղեցու ամսագրերը, հատկապես գերագույն համաժողովի ուսուցումները, երբ դրանք նպաստում են սուրբ գրության հատվածը ավելի պարզ հասկանալուն: Այլ աղբյուրներ չպետք է օգտագործվեն, որպեսզի չչարաշահվեն, շշմեցուցիչ տպավորություն չթողնեն կամ մտքեր չուսուցանվեն, որոնք պարզապես չեն հաստատվել Եկեղեցու կողմից: Նույնիսկ եթե ինչ-որ բան վավերացվել կամ տպագրվել է նախկինում, այն նույնպես կարող է հարմար չլինել դասարանում օգտագործելու համար: Դասերը պետք է զորացնեն ուսանողների հավատքն ու վկայությունը:

## Որոշել, թե ինչ սովորեցնել և ինչպես սովորեցնել [4.3.2]

Դաս պատրաստելիս յուրաքանչյուր ուսուցիչ պետք է որոշի. «Ի՞նչ եմ ես ուսուցանելու» և «Ինչպե՞ս եմ ես այն ուսուցանելու»: *Ինչ ուսուցանելը* բաղկացած է համատեքստից (ներառելով պատմական տեղեկությունները, մշակույթը և ժամանակաշրջանը) և ավետարանի կարևոր ճշմարտություններից, որոնք կան սուրբ գրության հատվածում: *Ինչպես ուսուցանելը* բաղկացած է մեթոդներից, միջոցներից և վարժություններից, որոնք ուսուցիչը օգտագործում է, որ օգնի ուսանողներին սովորել (ինչպես օրինակ դասարանային քննարկումները, տեսալսողական միջոցները, գրավոր վարժությունները և փոքր խմբերով աշխատելը): *Ինչ սովորեցնել* որոշելը պետք է նախորդի *ինչպես սովորեցնելը* ընտրելուն այնպես, որ հիմնական ուշադրությունը մնա սուրբ գրությունների վրա, և ոչ թե մեթոդների կամ հմտությունների:

Դասին պատրաստվելու ընթացքում ուսուցիչները պետք է պատշաճ ժամանակ և ջանքեր տրամադրեն, երբ որոշեն, թե *ինչ ուսուցանել* և *ինչպես ուսուցանել*: Եթե դասին նախապատրաստվելիս *ինչ ուսուցանելը* գրավի գրեթե ամբողջ ուշադրությունը, ուսուցիչը բավականաչափ ժամանակ չի ունենա, որպեսզի խորհի, թե ինչպես կարող է օգնել ուսանողներին մասնակցել սովորելու գործընթացին: Հաճախ սա իր հետևանքներն է թողնում դասերի վրա, որոնք ձանձրացնող են լինում և որոնց ժամանակ ուսուցիչները չափից ավելի են լինում դասի կենտրոնում: Երբ ուսուցիչը չափից ավելի է կենտրոնանում *ինչպես ուսուցանելու* վրա, դասերը կարող են դառնալ կցկտուր, աննպատակ և անզոր:

Ծանուցում

## Որոշել, ինչ ուսուցանել [4.3.3]

Չորս հիմնական փուլեր կան, որոնցով ուսուցիչներն անցնում են, երբ նրանք պատրաստվում են, թե ինչ պետք է սովորեցնեն. Առաջինը, նրանք փորձում են հասկանալ սուրբ գրության հատվածի ենթատեքստը և բովանդակությունը: Երկրորդը, նրանք գտնում և հասկանում են վարդապետությունները և սկզբունքները, որոնք գտնվում են հատվածում: Երրորդը, նրանք որոշում են, թե որ սկզբունքներն են ամենակարևորը իրենց ուսանողների համար, որ սովորեն և կիրառեն, և չորրորդը, նրանք որոշում են, թե ինչ չափով ուշադրություն դարձնեն սուրբ գրության հատվածի յուրաքանչյուր մասին:

### *1. Հասկանալ ուսուցանվող սուրբ գրության հատվածի համատեքստը և բովանդակությունը:*

Ուսուցիչները պետք է փնտրեն հասկանալ սուրբ գրության հատվածի համատեքստը կամ պատմական տեղեկությունները և ընկղմվեն սուրբ գրության այդ հատվածի մեջ, մինչև որ բովանդակությունը քաջածանոթ կդառնա: Մեզ սուրբ գրությունների մեջ ընկղմել նշանակում է կարդալ, ուսումնասիրել, խորհել և աղոթել ոգեշնչման և հասկացողության համար, այն ամենի մասին, ինչ կարդում ենք:

Ամենաօգտակար բաներից մեկը, որ ուսուցիչը կարող է անել սուրբ գրության բովանդակությունը հասկանալու համար սուրբ գրության հատվածի բնական ընդհատումները նշելն է, որտեղ առաջ է գալիս մտքի կամ գործողության



*Ծանուցում*

փոփոխություն: Օգտագործելով ուսումնական ծրագիրը և իրենց սեփական ներըմբռնումները, ուսուցիչները կարող են այնուհետև բաժանել սուրբ գրության հատվածը ավելի փոքր մասերի կամ հատվածների խմբերի՝ հիմնված այս բնական ընդհատումների վրա: Այս ավելի փոքր մասերը կդառնան կարևոր կառուցման քարեր կամ բաղադրիչներ, որոնք ուսուցիչները կօգտագործեն հետագայում իրենց նախապատրաստության ժամանակ, որպեսզի կազմակերպեն իրենց դասի ընթացքը և թույլ կտան նրանց գոնե որոշ չափով ուշադրություն դարձնել սուրբ գրության հատվածի ամբողջ բովանդակությանը:

Մինչ այս եղանակով ընդգծում են սուրբ գրության հատվածը, ուսուցիչները կարող են նաև փնտրել զարգացնել կարևոր թվացող մարդկանց, տարածքները, իրադարձությունները և պատճառահետևանքային կապերը հասկանալու իրենց կարողությունը, ինչպես նաև բարդ բառերի կամ արտահայտությունների իմաստները: Բովանդակությունը պատշաճ ձևով հասկանալը հաճախ պահանջում է մեկ անգամից ավելի կարդալ սուրբ գրության հատվածը:

### *2. Գտնել և հասկանալ վարդապետությունները և սկզբունքները:*

Համատեքստը և բովանդակությունը հասկանալու հետ զուգահեռ ուսուցիչները պետք է զգուշությամբ գտնեն և հասկանան սուրբ գրության հատվածի վարդապետությունները և սկզբունքները և վերանայեն նրանք, որոնք որ խորհուրդ են տրվում ուսումնական ծրագրում: Եթե ուսումնական ծրագրում արդեն իսկ արված չէ սա, ուսուցիչը պետք է ջանա դուրս գրել վարդապետությունները և սկզբունքները պարզ, հակիրճ ձևով: Սա անելը օգնում է կոնկրետացնել սկզբունքները և դրանց նշանակությունները ուսուցչի մտքում: Սա նաև կօգնի առաջնորդել սովորելու գործընթացը դասի ժամանակ և թույլ կտա մեծացնել ուսանողների հասկացողությունը և ավելի կենտրոնացած գործունեությունը:

### *3. Որոշել, թե որ սկզբունքները և վարդապետություններն են ամենակարևորը ուսանողների համար, որ սովորեն և կիրառեն:*

Սուրբ գրության սովորական հատվածում գրեթե միշտ ավելի շատ նյութ կլինի, քան կարելի է իմաստալից կերպով քննարկել դասի ընթացքում: Երբ ուսուցիչները ուսումնասիրում են սուրբ գրությունները և ուսումնական ծրագիրը, նրանք պետք է որոշեն, թե որ վարդապետությունները և սկզբունքներն են ամենակարևորը իրենց ուսանողների համար, որ հասկանան և կիրառեն: Այս որոշումն ընդունելիս ուսուցիչները պետք է հաշվի առնեն հետևյալը.

**Սուրբ Հոգու հուշումները:** Երբ որոշում են, թե որ սկզբունքները և վարդապետությունները շեշտեն դասի ժամանակ, ուսուցիչները պետք է շարունակաբար փնտրեն Սուրբ Հոգու առաջնորդությունը:

**Ոգեշնչված հեղինակի միտումը:** Ուսուցիչները պետք է ձգտեն պարզել, թե ինչ է ցանկացել հաղորդել մարգարե հեղինակը: Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնն ասել է. «Եթե նրանք [հեղինակները] տեսել են մեր օրերը և ընտրել են այն բաները, որոնք ամենաարժեքավորը կլինեն մեր համար, արդյոք դա մեզ չի հուշում, թե մենք ինչպե՞ս պետք է ուսումնասիրենք Մորմոնի Գիրքը: Մենք պետք է մշտապես հարցնենք ինքներս մեզ, «Ինչու՞ է Տերը ոգեշնչել Մորմոնին (կամ Մորոնիին կամ Ալմային) ընդգրկել դա իր արձանագրության մեջ: Ի՞նչ

դաս ես կարող եմ սովորել դրանից, որ օգնի ինձ ապրել այս օրերում և ժամանակներում» ("The Book of Mormon—Keystone of Our Religion," Ensign, Nov. 1986, 6)։ Ուսուցիչները պետք է մտածեն նմանատիպ հարցեր իրենց դասին նախապատրաստվելու ընթացքում իրենց ուսուցանած ցանկացած սուրբ գրության դասընթացի համար։

Ուսուցիչները նաև պետք է հիշեն, որ մարգարեների հիմնական միտումը սուրբ գրություններում միշտ եղել է վկայել Հիսուս Քրիստոսի մասին։ Ինչպես ասել է Նեփին. «Իմ ողջ նպատակն է, որ ես կարողանամ համոզել մարդկանց՝ գալ դեպի Աբրահամի Աստվածը և Իսահակի Աստվածը և Հակոբի Աստվածը, և փրկվել» (1 Նեփի 6.4)։ Ուստի, ուսուցիչը պետք է հարցնի. «Սուրբ գրության այս հատվածը ի՞նչ է սովորեցնում Հիսուս Քրիստոսի մասին, որը կօգնի իմ ուսանողներին հասկանալ և ապավինել Նրա ուսմունքներին ու Քավությանը»։

Երբ ուսուցիչները փորձում են որոշել ոգեշնչված հեղինակի միտումը, նրանք պետք է զգույշ լինեն, որ չգնան ավելի հեռու, քան ակնհայտ է տեքստում։ Երեց Հենրի Բ. Այրինգը նախազգուշացրել է. «Ես չպիտի ձևացնեմ, թե ես գիտեմ ամենը, ինչ հեղինակները ի նկատի են ունեցել, կամ ինչ նրանք ի նկատի չեն ունեցել» ("'And Thus We See:' Helping a Student in a Moment of Doubt" an evening with Elder Henry B. Eyring, Feb. 5, 1993, 6)։

**Դարձի բերող սկզբունքներ և հիմնական վարդապետություններ:** Երբ ուսուցիչը որոշում է, թե *ինչ ուսուցանել,* նա պետք է խորհի. «Սուրբ գրությունների այս մասի բոլոր ճշմարտությունների մեջ, որոնց վրա կարելի է շեշտ դնել, որո՞նք կօգնեն իմ ուսանողներին ավելի մոտենալ Երկնային Հորը և Փրկչին և կառաջնորդեն դեպի փրկություն»։ Երեց Հենրի Բ. Այրինգը խորհուրդ է տվել. «Երբ դուք դաս եք պատրաստում, այնտեղ փնտրեք դարձի բերող սկզբունքներ։ Դարձի բերող սկզբունքն այն է, որն առաջնորդում է հնազանդվել Աստծո կամքին» ("Converting Principles" [remarks at an evening with Elder L. Tom Perry, Feb. 2, 1996], 1)։

Ուսուցիչները նաև պետք է պարզեն, թե արդյոք սուրբ գրությունների տվյալ մասը ուսուցանում է որևէ Հիմնական Վարդապետություն, որը ՍևԻ ընտրել է շեշտելու համար։ Այս վարդապետությունները ուսանողներին հասկացողություն են տալիս Երկնային Հոր ծրագրի և Եկեղեցու հիմնական համոզմունքների մասին (տես բաժին 2.7.2, «Հիմնական Վարդապետություններ», էջ 35)։

**Ուսանողների կարիքները և կարողությունները:** Որքան լավ ուսուցիչը ճանաչի և հասկանա իր ուսանողներին, ավելի հեշտ կլինի գտնել և շեշտել համապատասխան սկզբունքները, որոնք կարելի է հեշտությամբ կիրառել։ Երբ ուսուցիչները ուսումնասիրում են սուրբ գրության հատվածը, նրանք կարող են գտնել մտքեր կամ գաղափարներ, որոնք հետաքրքրական են իրենց իսկ համար կամ իրենց համար առանձնապես մեծ նշանակություն ունեն, սակայն սա կարող է ուսանողների հոգևոր պատրաստվածությունից ու հասկացողությունից առավել լինել (տես, օրինակ, Պողոսի կաթի և մսի հետ

*Ծանուցում*



«Ավետարանի երկու տեսակետներ կան. երկուսն էլ ճիշտ։ Դրանք ահռելի փոփոխություն են մտցնում ձեր ուսուցման զորության մեջ։ Մի տեսակետն այն է, որ ավետարանը ամբողջ ճշմարտությունն է։ Եվ իրոք։ Ավետարանը ճշմարտություն է։ Այդ տեսակետով ես կկարողանայի դասարանում բավականին լավ ուսուցանել ցանկացած ճշմարտություն, և ես կսովորեցնեի ավետարանը։ Մյուս տեսակետն այն է, որ ավետարանը սկզբունքներ, պատվիրաններ և արարողություններ է, որ եթե պահվեն, հաստատվեն և ընդունվեն, կառաջնորդեն դեպի հավերժական կյանք։ Սա նույնպես ճիշտ է։

Երբ ես ընտրում եմ, թե այս տեսակետներից որը պիտի գերակշռի իմ ուսուցման մեջ, ես մեծ քայլ եմ կատարում։ Եթե ես ընտրում եմ տեսակետը, որ ավետարանը ամբողջ ճշմարտությունն է, և ոչ թե այն, որ դա արարողություններ և սկզբունքներ և պատվիրաններ է, որոնք եթե պահենք, հաստատենք և ընդունենք, կառաջնորդեն դեպի հավերժական կյանք, ես արդեն իսկ գրեթե ինձ հեռացրել եմ մրցակցությունից, որ օգնեմ ուսանողին դիմադրել անպարկեշտությամբ լի ծովին»։

(Henry B. Eyring, "Eyes to See, Ears to Hear" [CES symposium on the New Testament, Aug. 16, 1984], 6)

*Ծանոթագրում*

կապված խորհուրդը, Ա Կորնթացիս Գ.2)։ Որոշ սկզբունքներ, որոնք նոր կամ հետաքրքիր չեն ուսուցիչների համար, կարող են շատ կարևոր լինել ուսանողների համար։ Ուսուցիչները պետք է հիշեն, որ իրենք սովորեցնում են ուսանողների, այլ ոչ միայն լոկ դասեր։ Նրանք ստեղծում են սովորելու փորձառություն և ոչ թե լոկ նախապատրաստում դասի կմախքը։ Ուսումնական ծրագիրը կարող է հատկապես օգտակար լինել ուսուցիչների համար, երբ որոշում են, թե որ սկզբունքները և վարդապետությունները կարող են ամենահարմարը լինել ուսանողների համար։

Երեց Ռիչարդ Գ. Սքոթը ուսուցանել է. «Համաձայն ձեր ուսանողների անհատական ունակությունների և կարիքների որոշեք, թե ինչն է ամենաառաջնահերթը։ Եթե հիմնական սկզբունքը հասկանալի է, ըմբռնելի և դարձել է ուսանողների կյանքի առաջնորդություններից մեկը, ապա ամենակարևոր նպատակը իրականացված է» (“To Understand and Live Truth” an evening with Elder Richard G. Scott, Feb. 4, 2005, 2–3)։

Մինչդեռ որոշում է, թե ինչ ճշմարտություններ շեշտել, ուսուցիչը նաև կարող է ծրագրել հակիրճ ձևով նշել սկզբունք կամ վարդապետություն, որի վրա իրենք չեն ծրագրել կենտրոնանալ, երբ առաջ են ընթանում սուրբ գրության հատվածում։ Սա Սուրբ Հոգուն կարող է հնարավորություն տալ անհատականացնել սկզբունքը, որը չնայած դասի կենտրոնը չէ, կարող է կարևոր լինել առանձին ուսանողի համար։ Ուսուցիչները պետք է նաև հիշեն, որ ուսանողները կարող են բացահայտել և ցանկանալ քննարկել որոշ ավետարանի ճշմարտություններ, որը ուսուցիչը չի նկատել կամ ծրագրել քննարկման համար։

Այս բոլոր մտորումներում ուսուցիչները պետք է փնտրեն հաստատում Հոգու կողմից։ Հոգին կօգնի նրանց ավելի լավ հասկանալ ոգեշնչված հեղինակի մտադրությունը, ուսանողների կարիքները և թե որ ավետարանական ճշմարտությունները կօգնեն ուսանողներին ավելի մոտենալ իրենց Երկնային Հորը և Փրկչին։

### *4. Որոշել, թե սուրբ գրության հատվածի յուրաքանչյուր մասին որքանով ուշադրություն դարձնել։*

Սուրբ գրության հատվածի համատեքստը և բովանդակությունը հասկանալով, այն ավելի փոքր, ըստ բովանդակության մասերի բաժանելով և որոշելով ավետարանի կարևոր ճշմարտությունները, որոնք ուսանողները պետք է սովորեն և կիրառեն, ուսուցիչները այժմ պատրաստ են որոշել, թե սուրբ գրության յուրաքանչյուր մասին որքանով ուշադրություն հատկացնել։ Ընդհանուր առմամբ, այն մասերը, որոնք պարունակում են վարդապետությունները և սկզբունքները, որոնք ուսուցիչը փնտրում է ընդգծել դասի ժամանակ, կստանա ամենաշատ ուշադրությունը։ Սա նշանակում է, որ հատվածների այս խմբերի համար ուսուցիչները կառաջնորդեն ուսանողներին հասկանալ դրանց ենթատեքստը և բովանդակությունը, գտնեն և հասկանան դրանցում եղած կարևոր վարդապետությունները և սկզբունքները, իրենց սրտերում զգալ այդ վարդապետությունների և սկզբունքների ճշմարտացիությունը և կարևորությունը, և օգնեն նրանց տեսնել, թե ինչպես նրանք կարող են կիրառել այդ ճշմարտությունները իրենց կյանքում։

Սուրբ գրության այլ մասեր կարող է ավելի քիչ կենտրոնանան ճշմարտությունների վրա, որոնք կշեշտվեն դասի ընթացքում, սակայն դրանք

*Ծանուցում*

չպիտի բաց թողնվեն կամ անտեսվեն: Ուսուցիչները պետք է ծրագրեն նաև հատվածների այս խմբերը գոնե ամփոփել:

*Նշում.* Հազիվ թե մենք նախապատրաստվելու համար ունենանք անսահմանափակ ժամանակ: Ուսուցիչները հիմնականում թույլ են տալիս մի սխալ, որ ծախսում են շատ ժամանակ կարդալով և ուսումնասիրելով և փորձելով որոշել *ինչ սովորեցնել*, որ բավականաչափ ժամանակ չի մնում, որ մտածելով նախապատրաստվեն, թե *ինչպես սովորեցնեն* այն: Ամեն դասի պատրաստության ժամանակ գալիս է պահ, երբ ուսուցիչը պետք է ասի. «Ես զգում եմ, որ ունեմ բավականաչափ հասկացողություն, թե *ինչ ուսուցանել:* Այժմ ես պետք է որոշեմ, թե *ինչպես* ես պետք է ուսուցանեմ այն արդյունավետորեն»:

## Որոշել, ինչպես ուսուցանել [4.3.4]

Ընդունված երևույթ է ուսուցիչների համար ոգևորվել սուրբ գրության հատվածով, որը նրանք պետ է ուսուցանեն և ճշմարտություններով, որոնք նրանք բացահայտել են: Ուսումնասիրելու, հասկանալու և Հոգու կողմից ուսուցանվելու համար մեծ ջանքերի միջոցով ուսուցիչները շենանում են և բնականորեն ցանկություն են զգում կիսվելու նրանով, ինչ նրանք սովորել են պատրաստվելու ընթացքում: Մինչդեռ սա կարող է պատշաճ լինել, պետք է հիշել, որ ցանկացած դասի նպատակն է, որ *ուսանողները* հասկանան սուրբ գրությունները, ուսուցանվեն Սուրբ Հոգու կողմից և քաջալերված զգան կիրառելու այն, ինչը *նրանք* սովորել են: Սա գրեթե միշտ պահանջում է ավելին, քան ուսուցիչները ասեն ուսանողներին, թե ինչ են նրանք անձամբ սովորել սուրբ գրություններից և ինչու են նրանք զգում, որ դա կարևոր է: Դա նաև ներառում է ավելին, քան որ ուսուցիչը կարդում է հատվածը, մեկնաբանություններ է անում դրա հետ կապված, ապա կարդում է մեկ այլ հատված:

Ուսանողները շենանում են, երբ նրանք առաջնորդվում են սովորելու գործընթացում, որը նման է ուսուցչի փորձառությանը, որը նա ունեցել է դասին պատրաստվելու ժամանակ: Ուսանողներին պետք է առաջնորդել ուսումնասիրել սուրբ գրությունները հասկացողություն ձեռք բերելու համար և իրենց համար ավետարանի ճշմարտությունները բացահայտելու համար: Նրանց պետք է հնարավորություններ տրվի իրենց սեփական բառերով բացատրել ավետարանը և կիսվել ու վկայել այն ամենով, ինչ իրենք գիտեն ու զգում են: Սա օգնում է բերել ավետարանը նրանց գլուխներից ցած դեպի նրանց սրտերը:

Երբ ուսանողները պարբերաբար ավետարանը այս եղանակով ուսումնասիրելու փորձառություն են ունենում, նրանք ձեռք են բերում վստահություն ինքնուրույն ավետարանը ուսումնասիրելու և Հոգով սովորելու իրենց ունակությունում: Նրանք ցանկություն են զգում իրենց կյանքում կիրառել այն, ինչ սովորում են: Նրանք նաև ավելի լավ պատրաստված են ուրիշներին բացատրելու այն, ինչին իրենք հավատում են և վկայություն բերելու ավետարանի վարդապետությունների և սկզբունքների վերաբերյալ:

Ուսուցիչները պետք է մեթոդներ ծրագրեն, որոնք կօգնեն ուսանողներին ունենալ սովորելու գործընթացի այս փորձառությունն ունենալ, երբ նրանք միասին առաջ են անցնում սուրբ գրություններով դասի ժամանակ: Երբ ուսուցիչները կազմում են իրենց դասի ծրագիրը

*Ծանուցում*

հետևյալ հարցերի պատասխանները հիմքեր են տալիս որոշելու համար, թե *ինչպես ուսուցանել*.

1. Ի՞նչ մեթոդներ կամ սովորելու համար նախատեսված վարժություններ կօգնեն իմ ուսանողներին հասկանալ համատեքստն ու բովանդակությունը, որը նրանք պետք է իմանան:
2. Ի՞նչ մեթոդներ կօգնեն ուսանողներին կարողանալ ներկայացնել և իրենց բառերով բացատրել վարդապետությունները և սկզբունքները և նրանց հնարավորություն տալ բացահայտել ուրիշները:
3. Ո՞րը կլինի լավագույն եղանակը օգնելու իմ ուսանողներին հասկանալ այս սկզբունքները և վարդապետությունները:
4. Ո՞ր մեթոդները կամ մոտեցումները կառաջնորդեն իմ ուսանողներին զգալ այս սկզբունքների ճշմարտությունը և կարևորությունը և կհրավիրեն նրանց կիսվել դրանցով և վկայել դրանց մասին:
5. Ո՞րը կլինի արդյունավետ եղանակ օգնելու նրանց տեսնել, թե ինչպես կարող են կիրառել այս սկզբունքները իրենց կյանքում և քաջալերել նրանց անել դա:

Հետևյալը որոշ նկատառումներ են ինչպես ուսուցանել որոշելիս:

**Համոզվել, որ ուսուցանելու մեթոդները ներդաշնակ են ուսուցանվող ուղերձի հետ և նպաստում են Հոգու ներգործությանը:** Երբեմն փորձելով զվարճացնել ուսանողներին կամ պահել նրանց հետաքրքրությունը, ուսուցիչները ընտրում են մեթոդներ կամ օգտագործում են հմտություններ, որոնք չեն առաջնորդում դեպի հասկացողություն և շենացում: Երբ մեթոդներ են ընտրում, ուսուցիչները պետք է խորհեն, արդյոք մեթոդը մեծացնում, թե նսեմացնում է ուղերձի իմաստը, որը պետք է օգներ ուսանողներին ընկալել: Օրինակ, ուսուցողական խաղը կարող է հաճելի և արդյունավետ եղանակ լինել ուսուցանելու համար տեղեկություն (ինչպես օրինակ Աստվածաշնչի գրքերի հերթականությունը), սակայն գրեթե հաստատ հակառակ արդյունքի կհանգեցնի, եթե վերջնական նպատակը հոգևոր զգացմունք հրավիրելն է: Փոքր խմբերով աշխատելը կարող է արդյունավետ լինել, սակայն քանի որ այն զգալի ժամանակ է պահանջում, այն միգուցե լավագույն մեթոդը չլինի պարզ ձևակերպում ունեցող սկզբունքը գտնելու համար:

Ուսուցիչները պետք է վստահ լինեն, որ ուսուցանման մեթոդները և վարժությունները նպատակահարմար են ավետարանը ուսումնասիրելու միջավայրին, չեն վիրավորի կամ նեղացնի որևէ մեկին, և կնպաստեն Հոգու ներգործությանը:



«Ավետարանի հիանալի ուսուցիչը կուսուցանի նշանակված դասընթացի նյութից մեծապես կարևորելով Հիսուս Քրիստոսի ավետարանի վարդապետությունը և սկզբունքները և ուխտերը ուսուցանելը»:

(Dallin H. Oaks, “Gospel Teaching,” *Ensign*, Nov. 1999, 79)

**Օգտագործել ուսումնական ծրագիրը:** Սեմինարիայի և ինստիտուտի ուսումնական ծրագիրը առաջարկում է խորհուրդներ *ինչպես ուսուցանելու* վերաբերյալ, որոնք իրականացնում են Ավետարանի Հիմունքների Ուսուցանումը և Ուսումնասիրությունը: Յուրաքանչյուր դասը պատրաստելիս ուսուցիչները պետք է ուշադիր վերանայեն ուսումնական ծրագիրը և ընտրեն, թե որ տեղեկությունը և մեթոդները նրանք կօգտագործեն սուրբ գրության հատվածը ուսուցանելու համար: Ուսուցիչները սուրբ գրության հատվածի համար կարող են ընտրել ուսումնական ծրագրի խորհուրդներից բոլորը

կամ մի մասը կամ հարմարեցնեն խորհուրդ տված գաղափարները իրենց դասարանի կարիքներին և հանգամանքներին։

**Հաստատել կապ և նպատակ:** Երբ ուսանողները տեսնում են, որ այն, ինչ իրենք ուսումնասիրում են սուրբ գրության հատվածում, կապված է իրենց իրավիճակների և հանգամանքների հետ, նրանք ընդհանուր առմամբ ավելի ոգևորված են ուսումնասիրում և կիրառում ավետարանի ուսմունքները։ Նրանք նաև կարող են տեսնել, թե ինչպես է սուրբ գրությունը պատասխաններ և ուղղություն տալիս, որը կարող է առաջնորդել նրանց իրական կյանքի իրավիճակներում։

Ուստի, երբ նախապատրաստվում են *ինչպես ուսուցանելուն,* ուսուցիչները իմաստուն կլինեն անդրադառնալ սուրբ գրութան հատվածում պարունակվող հավերժական ճշմարտություններին և մտածեն, թե ինչպես դրանք կարող են օգտակար և իմաստալից լինել ուսանողների կյանքում։ Սա մտքում ունենալով՝ ուսուցիչները հաճախ կսկսեն դասը համապատասխան հարցով, իրավիճակով կամ խնդրով, որը ուսանողներին կառաջնորդի սուրբ գրություններում փնտրել ավետարանի սկզբունքներ և վարդապետություններ, որ տալիս են իրենց առաջնորդություն և ուղղություն։ Երբ նրանք դասեր են նախապատրաստում, ուսուցիչները պետք է նաև ծրագրեն եղանակներ, որ պահպանեն հետաքրքրությունը և շարունակաբար ներգրավեն ուսանողներին սովորելու գործընթացում։

**Որոշել արագությունը:** Ուսուցիչները պետք է մեծ ջանքեր գործադրեն սուրբ գրության ամբողջ հատվածը մեկնաբանելու համար։ Այնուամենայնիվ, երբ որոշում են, թե որքան ժամանակ տրամադրեն դասի տարբեր հատվածների վրա, կարևոր է, որ ուսուցիչները հիշեն, որ նրանք սովորեցնում են ուսանողներին և ոչ դասեր։ Ուսուցիչները չպետք է այնքան կենտրոնացած լինեն դասի ծրագրին հետևելու վրա, որ թույլ չտան ոգեշնչման հնարավորությանը կամ ուսանողների կողմից չնախատեսված մասնակցությանը դասի ընթացքում, որը կարող է այն անհրաժեշտ դարձնել դասը լրացնելու համար։

Հաճախակի հանդիպող սխալներից մեկը, որը ուսուցիչները թույլ են տալիս այն է, որ նրանք շատ ժամանակ են տրամադրում դասի առաջին մասի վրա և հետո հապճեպ անցնում վերջին մասին։ Երբ ուսուցիչները նախապատրաստվում են, նրանք պետք է մոտավորապես հաշվարկեն, թե որքան ժամանակ կպահանջվի դասի յուրաքանչյուր մասի համար, երբ նրանք օգտագործեն իրենց ընտրած մեթոդները։ Քանի որ ուսուցիչը գրեթե միշտ ավելի շատ բան կունենա ուսուցանելու, քան ժամանակ այն ուսուցանելու համար, նրանք պետք է որոշեն, թե հատվածի որ մասի վրա պետք է շեշտը դնեն և որը ամփոփեն։

Արագությունը որոշելը վերաբերվում է ինչպես ամբողջ դասընթացին, այնպես էլ առանձին դասերին։ Օրինակ, Նոր Կտակարանի դասընթացում եթե ուսուցիչները չափից ավելի ժամանակ տրամադրեն չորս Ավետարաններին, նրանք չեն կարողանա հավասարապես մեկնաբանել ավետարանի կարևոր ճշմարտությունները, որոնք գտնվում են հաջորդ գրքերում։

Սեմինարիայի և ինստիտուտի ուսումնական ծրագրերից շատերը առաջարկում են ժամկետների հետ կապված խորհուրդներ ամբողջ դասընթացը ընդգրկելու համար։

*Ծանուցում*



*Ծանուցում*

**Կենտրոնանալ ուսանողներին օգնելու վրա, որ կատարեն իրենց դերը:** Երբ ուսուցիչները պատրաստվում են, թե ինչպես են ուսուցանելու, նրանք պետք է կենտրոնացած մնան սովորողի վրա, և ոչ թե միայն այն բանի վրա, թե ինչ է անելու ուսուցիչը: Պարզապես հարցնելու փոխարեն, թե «Ի՞նչ եմ անելու դասարանում ես այսօր» կամ «Ի՞նչ եմ սովորեցնելու իմ ուսանողներին», ուսուցիչը պետք է նաև մտածի, թե «Ի՞նչ են անելու իմ ուսանողները այսօր դասարանում», «Ինչպե՞ս ես կօգնեմ իմ ուսանողներին բացահայտել, թե ինչ պետք է նրանք իմանան»:

**Տարբեր մեթոդներ և մոտեցումներ օգտագործել:** Նույնիսկ համոզիչ ուսուցողական հմտությունը կարող է դառնալ անարդյունավետ կամ ձանձրացնող, եթե չափից շատ է օգտագործվում: Մինչդեռ ուսուցիչները չպետք է ընտրեն մեթոդներ միայն բազմազանության համար, շատ արդյունավետ ուսուցիչներ չափազանց շատ եղանակներով են ուսուցանում յուրաքանչյուր դասի ժամանակ և նաև օրեցօր: Ուսուցիչները պետք է պատրաստ լինեն փոխելու մեթոդները դասի ընթացքում, եթե ուսանողները կորցրել են իրենց հետաքրքրությունը կամ եթե այն, ինչ իրենք անում են, չի օգնում ուսանողներին հասնել ցանկալի արդյունքների:

Ուսուցման տարբեր մեթոդներ օգտագործելը կարող է նաև օգնել այն ուսանողներին, ովքեր սովորում են տարբեր եղանակներով: Ուսուցման մեթոդները կամ սովորելու վարժությունները, որոնք պահանջում են ուսանողներից օգտագործել տարբեր զգայարաններ, ինչպես օրինակ տեսնելը, լսելը և շոշափելը, կարող են օգնել մեծացնել ուսանողների մասնակցությունը և նրանց վերհիշումը, թե ինչ է ուսուցանվել:

Մինչդեռ ուսուցիչները հիմնականում պետք է ընտրեն մեթոդներ, որոնք օգտագործելը հարմար և ձեռնհաս է նրանց համար, նրանք պետք է կամենան փորձարկել նոր մեթոդներ կամ մոտեցումներ, որոնք նրանց կդարձնեն նույնիսկ ավելի արդյունավետ:

Այս ձեռնարկի հաջորդ բաժինը քննարկում է ուսուցման տարբեր մեթոդներ և մոտեցումներ, որ ուսուցիչները կարող են մտածել, երբ որոշում են, թե *ինչպես ուսուցանել:*

# Ուսուցման մեթոդներ, հմտություններ և մոտեցումներ

# 5

Ուսուցումը կոմպլեքս և բազմակողմանի հանձնարարություն է։ Ուսուցման մեթոդների կամ հմտությունների ցուցակը կպարունակի շատ մտքեր ու օրինակներ և դրանց վերաբերյալ ողջ քննարկումը կլցնի հատորներ։ Այնուամենայնիվ, հնարավոր է խմբավորել դրանք ուսուցման մեթոդների, հմտությունների և մոտեցումների որոշ հիմնական ոլորտներում, որոնք էական են արդյունավետ ուսուցման համար։ Այս բաժինը կանդրադառնա այս կարևոր ոլորտներից մի քանիսին։

Երբ որոշում ենք, թե ուսուցանելիս ինչ մեթոդներ օգտագործել, կարևոր է հիշելը, որ մեթոդները և հմտությունները միայն միջոցներ են նպատակին հասնելու համար, և ոչ թե ուսուցման նպատակներ և իրենց նպատակներ։ Ուսուցիչները պետք է ընտրեն մեթոդներ, որոնք լավագույնս կօգնեն ուսանողներին հասկանալ որոշակի սուրբ գրության հատվածի բովանդակությունը, վարդապետությունները, և սկզբունքները և որ կխեշտացնեն սովորելը և կիրառելը։ Որոշակի կարողություն կամ հմտություն օգտագործելու նպատակը մտքում պահելը կօգնի ուսուցիչներին իրագործել այն ավելի իմաստալից ձևով։ Նաև կարևոր է հիշել, որ առանց Հոգու նույնիսկ ամենաարդյունավետ մեթոդները և մոտեցումները հաջողության չեն հասնի։

## Հարցեր [5.1]

Արդյունավետ հարցեր տալը ամենակարևոր հմտություններից մեկն է, որ ուսուցիչը կարող է զարգացնել։ Հարցերը կարող են ներգրավել ուսանողներին սուրբ գրությունները հասկանալու գործընթացի մեջ և օգնել նրանց գտնել և հասկանալ ավետարանի կարևոր ճշմարտություններ։ Հարցերը նաև օգնում են ուսանողներին խորհել, թե ինչ ազդեցություն ունի ավետարանը նրանց կյանքի վրա և մտածել, թե ինչպես նրանք կարող են կիրառել ավետարանի սկզբունքները այժմ և հետագայում։ Արդյունավետ հարցեր տալը կարող է խրախուսել ուսանողներին հրավիրել Սուրբ Հոգուն իրենց սովորելու փորձառությանը իրենց ընտրության իրավունքը գործածելու և սովորելու գործընթացում իրենց դերը կատարելու միջոցով։

Արժե մեծ ջանքեր գործադրել, զգուշությամբ ստեղծելով հարցեր դասի նախապատրաստության ժամանակ, որոնք կառաջնորդեն դեպի հասկացողություն և կներգրավեն ուսանողների մտքերն ու սրտերը, մինչ նրանք կսովորեն։ Երբ հարցեր են ծրագրում, ուսուցիչները պետք է առաջինը որոշեն նպատակը, որի համար նրանք հարցնում են որոշակի հարցեր (օրինակ, ուսուցիչը կարող է ցանկանալ, որ ուսանողները բացահայտեն սուրբ գրության հատվածի տեղեկությունը, մտածեն



«Հարցեր տալը և դրանց պատասխանելը բոլոր ուսումնասիրությունների և բոլոր ուսուցումների սիրտն են»։

(Henry B. Eyring, "The Lord Will Multiply the Harvest" [an evening with Elder Henry B. Eyring, Feb. 6, 1998], 5–6)

*Ծանոթագրում*

հատվածի իմաստի մասին կամ կիսվեն վկայությամբ սկզբունքի ճշմարտացիության վերաբերյալ)։ Ուսուցիչը այնուհետև պետք է մտածելով կազմի հարցը, մտքում ունենալով այդ նպատակը։ Զգուշությամբ ընտրված մի քանի բառերը կարող են մեծ տարբերություն առաջացնել, թե արդյոք հարցը կհասնի իր նպատակին, թե ոչ։

Ուսուցիչները պետք է ձգտեն նախապատրաստել և տալ հարցեր, որոնք խթան են հանդիսանում մտածելու և զգացմունքներ ունենալու համար։ Նրանք հիմնականում պետք է խուսափեն հարցերից, որոնց կարելի է պատասխանել պարզապես «այո» կամ «ոչ», կամ որտեղ պատասխանը շատ ակնհայտ է, որ ուսանողներին չի խթանում մտածել դրա մասին։ Ուսուցիչները պետք է նաև խուսափեն հարցերից, որոնք կարող են տարաձայնություն առաջացնել, եթե դա կարող է զայրացնել ուսանողներին և վիճաբանություն ստեղծել դասարանում, որը կվշտացնի Հոգուն (տես 3 Նեփի 11.29)։

Երբ դասարանում հարցեր են տալիս, կարևոր է, որ ուսուցիչները ժամանակ տան ուսանողներին իրենց պատասխանի վերաբերյալ մտածելու համար։ Երբեմն ուսուցիչները հարց են տալիս, սպասում են մեկ կամ երկու վայրկյան, և այնուհետև, երբ ոչ ոք անմիջապես չի պատասխանում, խուճապի են մատնվում և իրենք են տալիս պատասխանը։ Արդյունավետ հարցերը, ինչևիցե, հաճախ պահանջում են մտածել և խորհել, և ուսանողներին կարող է ժամանակ պետք լինել սուրբ գրություններում պատասխանը գտնելու համար կամ իմաստալից պատասխան ձևակերպելու համար։ Երբեմն կարող է օգտակար լինել ժամանակ տալ ուսանողներին գրի առնել պատասխանները նախքան արձագանքելը։

Հիսուս Քրիստոսը՝ Մեծ Ուսուցիչը, օգտագործել է տարբեր տեսակի հարցեր, որ խրախուսի ուրիշներին խորհել և կիրառել Իր ուսուցանած սկզբունքները։ Նրա հարցերը զանազան էին կախված այն բանից, թե ինչ էր Նա ուզում առաջ բերել նրանց կյանքում, ում Նա ուսուցանում էր։ Որոշ հարցեր խրախուսեցին Նրան լսողներին մտածել և անդրադառնալ սուրբ գրություններին պատասխանների համար, ինչպես օրինակ, երբ Նա հարցրեց. «Օրենքումն ի՞նչ է գրված, ի՞նչպես ես կրդում» (Ղուկաս Ժ.26)։ Որոշ հարցեր նպատակ ունեին հրավիրելու պարտավորություն, ինչպես երբ Նա հարցրեց. «Ինչպիսի՞ մարդ եք դուք պարտավոր լինել» (3 Նեփի 27.27)։

Մինչդեռ հարցերի լայն տեսականի կա, որ ուսուցիչները կարող են հարցնել, հարցերի չորս ընդհանուր տեսակներ կան, որոնք հատկապես կարևոր են ավետարանը ուսուցանելիս և ուսումնասիրելիս.

1. Հարցեր, որ հրավիրում են ուսանողներին *տեղեկություններ փնտրել*
2. Հարցեր, որ առաջնորդում են ուսանողներին *վերլուծություններ կատարել հասկանալու համար*
3. Հարցեր, որ *առաջ են բերում զգացմունքներ և վկայություն*
4. Հարցեր, որ *խրախուսում են կիրառել*

## Հարցեր, որոնք հրավիրում են ուսանողներին *տեղեկություններ փնտրել* [5.1.1]

*Փնտրելու* հարցերը օգնում են ուսանողներին կառուցել սուրբ գրությունների իրենց հիմնական հասկացողությունը, հրավիրելով նրանց

Ծանուցում

փնտրել սուրբ գրության հատվածի բովանդակության հետ կապված կարևոր մանրամասներ: Քանի որ փնտրելու հարցերը խրախուսում են ուսանողներին տեղեկություններ փնտրել սուրբ գրությունների տեքստում, օգտակար կլինի նման հարցերը տալ նախքան հատվածների կարդալը, որտեղ գտնվում են պատասխանները: Սա կենտրոնացնում է ուսանողների ուշադրությունը և թույլ է տալիս նրանց բացահայտել պատասխանները սուրբ գրություններում:

*Փնտրելու* հարցերը հաճախ ներառում են նմանատիպ բառեր, ինչպես օրինակ *ով, ինչ, երբ, ինչպես, որտեղ* և *ինչու*: Հարցերի որոշ օրինակներ, որ հրավիրում են ուսանողներին *փնտրել տեղեկություն*, ներառում են.

- Համաձայն Մատթեոս ԺԹ.22, *ինչու՞* հարուստ պատանին տրտմած գնաց:
- Ա Թագավորաց ԺԷ.24-ում *ինչպե՞ս* Իսրայելի մարդիկ արձագանքեցին, երբ նրանք տեսան Գողիաթին: *Ինչպե՞ս* արձագանքեց Դավիթը 26 հատվածում:
- *Ի՞նչ* խորհուրդ տվեց Ալման իր որդի Շիբլոնին Ալմա 38 գլխում, հատվածներ 5–15:

Փնտրելու հարցերի պատասխանները պետք է հիմնական հասկացողությունների հիմք հաստատեն, որի վրա այլ տիպի հարցերը կարող են այնուհետև կառուցել ավելի մեծ հասկացողություն և կիրառում հրահիրելով: Փրկչի հարցը, թե «Մարդիկ ինձ համար ո՞վ են ասում, որ մարդի Որդին լինի» (Մատթեոս ԺԶ.13) առաջ բերեց պատմական տեղեկություններ: Նրա աշակերտների կողմից տրված պատասխանները նախապատրաստեցին նրանց ավելի խորը ու ավելի տանջալից հարցին. «Իսկ դուք ո՞վ եք ասում ինձ համար, թե լինիմ» (Մատթեոս ԺԶ.15):



## Հարցեր, որ առաջնորդում են ուսանողներին *վերլուծություններ կատարել հասկանալու համար* [5.1.2]

Վերլուծությունների հարցերը հաճախ տրվում են այն բանից հետո, երբ ուսանողները արդեն ծանոթացել են հատվածներին, որոնք ուսումնասիրում են: Դրանք կարող են հրավիրել սովորողներին փնտրել սուրբ գրությունների ավելի լայն և ավելի խորը հասկացողություն: Դրանք կարող են օգնել ուսանողներին քննել հարաբերությունները և օրինաչափությունները կամ հայտնաբերել հակադրություններ սուրբ գրություններում: Վերլուծությունների հարցերը գրեթե միշտ ունենում են մեկից ավելի հնարավոր պատասխան:

Վերլուծությունների հարցերը հիմնականում ծառայում են այս նպատակներից գոնե մեկին: Դրանք կարող են օգնել ուսանողներին.

- Ավելի լավ հասկանալ սուրբ գրությունների ենթատեքստը և բովանդակությունը:

*Ծանուցում*



- Գտնել ավետարանի սկզբունքները և վարդապետությունները:
- Զարգացնել այդ սկզբունքների և վարդապետությունների ավելի խորը հասկացողություն:

**Օգնել ուսանողներին ավելի լավ հասկանալ սուրբ գրությունների համատեքստը և բովանդակությունը:** Վերլուծությունների հարցերը կարող են օգնել ուսանողներին մեծացնել սուրբ գրության տեքստի և իրադարձությունների իրենց հասկացողությունը, օգնելով նրանց քննել հատվածներ դրանց պատմական և մշակութային տեղեկությունների համատեքստից կամ այլ սուրբ գրությունների հատվածների լույսի տակ: Այսպիսի հարցերը կարող են օգնել նաև ուսանողներին պարզաբանել բառերի կամ արտահայտությունների իմաստները և աջակցել նրանց վերլուծել պատմության մանրամասները ավելի շատ իմաստը հասկանալու համար: Այս գործընթացը նախապատրաստում է ուսանողներին կարողանալ գտնել սկզբունքները և վարդապետությունները:

Այս տիպի հարցերի օրինակները պարունակում են.

- Ինչպե՞ս է Հիսուսի բացատրությունը Մատթեոս ԺԳ.18–23-ում օգնում մեզ հասկանալ Նրա ուսմունքները 3-8 հատվածներում:
- Ի՞նչ տարբերություններ եք դուք տեսնում հրեշտակի ցուցումներին ուղղված Լամանի և Լեմուելի արձագանքին և Նեփիի արձագանքի միջև (տես 1 Նեփի 3.31, 4.1–7):
- Ի՞նչը հանգեցրեց էջերը կորցնելուն, որ մղեց Տիրոջը խորհուրդ տալ Ջոզեֆ Սմիթին, որ նա «մարդուց չպետք է ավելի շատ վախենար, քան Աստծուց» (ՎևՈՒ 3.7):

**Օգնել ուսանողներին գտնել ավետարանի սկզբունքները և վարդապետությունները:** Երբ ուսուցիչները բարելավում են սուրբ գրությունների համատեքստի և բովանդակության իրենց հասկացողությունը, նրանք ավելի լավ են կարողանում գտնել սկզբունքները և վարդապետությունները, որ դրանք պարունակում են: Վերլուծության հարցերը կարող են օգնել ուսանողներին եզրակացություններ կատարել և պարզ արտահայտել սուրբ գրության հատվածում եղած սկզբունքները կամ վարդապետությունները (տես բաժին 2.5.1, «Գտնել վարդապետությունները և սկզբունքները», էջ 26):

Այս հարցերի որոշ օրինակներ ընդգրկում են.

- Ի՞նչ սկզբունք է լուսաբանվում Նեփիի հաջողության շնորհիվ, երբ նա, չնայած մեծ դժվարություններին, ձեռք է բերում արույրե թիթեղները (տես 1 Նեփի 3–4):
- Ի՞նչ վարդապետություններ մենք կարող ենք սովորել Առաջին Տեսիլքից Աստծո էության վերաբերյալ (տես ՋՍ—Պ 1.15–20):
- Ի՞նչ դաս մենք կարող ենք սովորել Փրկչին դիպչելու այն ջանքերից, որոնք գործադրվեցին կնոջ կողմից, որ խնդիրներ ուներ արյունահոսության հետ կապված (տես Մարկոս Ե.24–34):

**Օգնել ուսանողներին զարգացնել ավելի խորը հասկացողություն սկզբունքների և վարդապետությունների վերաբերյալ:** Ի լրացում սկզբունքները և վարդապետությունները *գտնելուն*, ուսանողները պետք է *հասկանան* դրանք նախքան դրանց իմաստալից կիրառումը: Հարցերը, որոնք առաջնորդում են որոշակի սկզբունքի կամ

վարդապետության իմաստի պարզ հասկացողությանը, որ քաջալերում են ուսանողներին մտածել սկզբունքի վերաբերյալ ժամանակակից համատեքստում, կամ որ հրավիրում են ուսանողներին բացատրել սկզբունքի վերաբերյալ իրենց հասկացածը, հատկապես օգտակար են: Ստորև տրվում են մի քանի օրինակներ.

- Ի՞նչը կարող է փաստել, որ մենք սիրում ենք Աստծուն մեր ողջ «զորությամբ, մտքով և ուժով» (Մորոնի 10.32):
- Ինչու՞ միշտ աղոթելը կօգնի ձեզ ձեռք բերել հոգևոր ուժ, որը անհրաժեշտ է նման գայթակղությունները հաղթահարելու համար, ինչպես ուրիշների հետ անբարյացակամորեն խոսելը կամ այնպիսի ժամանցի մասնակցելը, որը անարգական է Հոգու համար (տես ՎևՈՒ 10.5):
- Ի՞նչ վարքագծեր և առանձնահատկություններ դուք կտեսնեք ինչ-որ մեկի կյանքում, ով կառուցում էր Քրիստոսի հիմքի վրա (տես Հելաման 5.1–14):
- Օգտագործելով այն, ինչ մենք սովորեցինք Ալմա 40-ում, ինչպե՞ս դուք կբացատրեք հարության վարդապետությունը մի ընկերոջ, ով մեր հավատքից չէ:

### Հարցեր, որոնք *առաջ են բերում զգացմունքներ և վկայություն* [5.1.3]

Որոշ հարցեր օգնում են ուսանողներին *մտածել* ավետարանի սկզբունքների և վարդապետությունների մասին և *հասկանալ* դրանք, մինչդեռ այլ հարցեր կարող են օգնել նրանց անդրադառնալ հոգևոր փորձառություններին և առաջնորդեն ուսանողներին ավելի խորությամբ *զգալ* ավետարանի սկզբունքի ճշմարտացիությունը և նշանակությունը իրենց կյանքում: Շատ անգամներ այդ զգացմունքները ուսանողների սրտերում առաջացրել են ուժեղ ցանկություն ավելի հավատարմորեն ապրել ավետարանի սկզբունքով: Դիմելով ԵԿՀ կրոնական ուսուցիչներին Երեց Հենրի Բ. Այրինգը անդրադարձ է այս տիպի հարցերին, երբ նա ասել է.

«Որոշ հարցեր առաջ են բերում ոգեշնչում: Մեծ ուսուցիչները հարցնում են դրանք: . . . Ահա մի հարց, որը ոգեշնչում կարող է չհրավիրել. «Ինչպե՞ս է ճանաչվում ճշմարիտ մարգարեն»: Հարցը հրավիրում է պատասխան, որը մի ցուցակ է, որը գալիս է սուրբ գրությունների հիշողություններից և կենդանի մարգարեների խոսքերից: Շատ ուսանողներ կարող են մասնակցել պատասխանելով: Շատերը կարող են տալ գոնե հնարավոր խորհուրդ: Եվ մտքերը կխթանվեն:

Սակայն մենք կարող ենք նաև տալ հարցը այս ձևով, մի փոքր տարբերությամբ. «Ե՞րբ եք դուք զգացել, որ դուք գտնվում եք մարգարեի ներկայության մեջ»: Դա կհրավիրի անհատներին իրենց հիշողություններում զգացմունքներ փնտրել: Հարցնելուց հետո մենք պետք է իմաստությամբ սպասենք մի րոպե նախքան որևէ մեկին խնդրելը, որ պատասխանի: Նույնիսկ նրանք, ովքեր չեն խոսում, կմտածեն հոգևոր փորձառությունների մասին: Դա կհրավիրի Սուրբ Հոգին» (“The Lord Will Multiply the Harvest,” 6):

Այսպիսի հարցերը հրավիրում են ուսանողներին անդրադառնալ անցյալին, «իրենց հիշողություններում զգացմունքներ փնտրել», և մտածել իրենց հոգևոր փորձառությունների մասին կապված քննարկված ավետարանի վարդապետության կամ սկզբունքի հետ: Հաճախ այս

*Ծանուցում*



*Ծանուցում*

հարցերի արդյունքում ուսանողները կիսվում են զգացմունքներով և փորձառություններով կամ վկայություն են բերում վարդապետության կամ սկզբունքի վերաբերյալ: Այս հարցերը օգնում են ավետարանը ուսանողների մտքից հասցնել նրանց սրտերին: Եվ երբ նրանք *զգան* իրենց սրտերում ավետարանի վարդապետության կամ սկզբունքի ճշմարտացիությունը և կարևորությունը, նրանք ավելի հավանական է, որ կկիրառեն այն իրենց կյանքում:

Ահա հարցերի որոշ օրինակներ, որ կարող են առաջ բերել զգացմունք և վկայություն.

- Ե՞րբ եք դուք զգացել խաղաղություն և ուրախություն, որ գալիս է ինչ-որ մեկին ներելուց:
- Մտածեք այնպիսի մի ժամանակի մասին, երբ Տերը առաջնորդել է ձեզ որոշումներ կայացնելիս, քանի որ դուք ապավինել եք Նրան, և ոչ թե վստահել եք ձեր սեփական հասկացողությանը (տես Առակաց Գ.5–6): Ինչպե՞ս եք դուք օրհնվել սա անելով:
- Եթե դուք անձամբ կարողանայիք արտահայտել ձեր երախտագիտությունը Փրկչին ձեր համար կատարած Իր զոհաբերության համար, ի՞նչ կասեիք Նրան:
- Ի՞նչ է ձեր կյանքում փոխվում նրանից, որ պատահեց Սրբազան Պուրակում:
- Ե՞րբ եք դուք տեսել, որ ուրիշները հավատարմորեն արձագանքեն փորձության պահերին: Ի՞նչ ազդեցություն է դա թողել ձեր վրա:

*Զգուշացնող խոսք*. Այս բնույթի հարցերի պատասխանները կարող են մասնավորապես անձնական և գաղտնի լինել: Ուսուցիչները պետք է համոզված լինեն, որ ուսանողները երբեք չեն հարկադրվում պատասխանել մի հարցի, կիսվել իրենց զգացմունքներով կամ փորձառություններով, կամ վկայություն բերել: Բացի դրանից ուսուցիչները պետք է օգնեն ուսանողներին հասկանալ անձնական հոգևոր փորձառությունների սրբազան բնույթը և խրախուսեն նրանց պատշաճորեն կիսվել այդ փորձառություններով (տես ՎևՈՒ 63.64):

### Հարցեր, որոնք *օգնում են կիրառել* [5.1.4]

Ավետարանը ուսուցանելու հիմնական նպատակն է օգնել ուսանողներին կիրառել սուրբ գրություններում գտնվող սկզբունքները և վարդապետությունները և որակվել ստանալու համար այն օրհնությունները, որոնք խոստացված են նրանց, ովքեր հավատարիմ են ու հնազանդ: Ուսանողները, ովքեր կարողանում են տեսնել, թե ինչպես են իրենք նախկինում օրհնվել ավետարանի սկզբունքներով ապրելով, ավելի շատ կցանկանան և ավելի լավ պատրաստված կլինեն հաջողությամբ կիրառել դրանք ապագայում: Հարցերը կարող են կարևոր դեր խաղալ, որ օգնեն ուսանողներին տեսնել, թե ինչպես կարող են կիրառել այս սկզբունքները իրենց այժմյան իրավիճակներում և մտածել, թե ինչպես նրանք կարող են կիրառել դրանք ապագայում:

Ահա հարցերի մի քանի օրինակներ, որ կարող են օգնել ուսանողներին մտածել հատկապես այն մասին, թե ինչ եղանակներով նրանք

Ծանուցում

կարող են կիրառել սկզբունքները և վարդապետությունները իրենց սեփական կյանքում.

- Ի՞նչ փոփոխություններ դուք պետք է անեք, որ Հանգստյան օրը սուրբ պահեք, որպեսզի դուք կարողանաք ավելի լիարժեք ձևով անբիծ պահել ձեզ աշխարհից (տես ՎևՈՒ 59.9–13):
- Ի՞նչ է մարգարեն խորհուրդ տվել, որին դուք կարող եք հետևել ավելի մեծ ճշգրտությամբ (տես Ալմա 57.1–27):
- Ինչպե՞ս կարող է սկզբունքը, որ *եթե մենք նախ փնտրենք Աստծո արքայությունը, մենք կօրհնվենք մեր կյանքի մնացած ոլորտներում,* օգնել ձեզ որոշել հաջորդ երկու կամ երեք տարիների ձեր նպատակների և զբաղմունքների հերթականությունը (տես Մատթեոս Զ.33):

## Դասարանային քննարկումներ [5.2]




Իմաստալից դասարանային քննարկումները կարևոր դեր են խաղում ավետարանը ուսուցանելում և ուսումնասիրելում: Դասարանային քննարկումները առաջ են գալիս, երբ ուսուցիչները խոսքով հաղորդակցվում են ուսանողների հետ և ուսանողներն էլ խոսքով հաղորդակցվում են իրար հետ այնպես, որ նպաստում է սովորելուն: Հաջող քննարկումը կարող է օգնել ուսանողներին սովորել կարևոր հարցերի պատասխանները փնտրելու կարևորությունը և ուրիշների մեկնաբանությունները, գաղափարները և փորձառությունները լսելու և դրանցից սովորելու արժեքը: Դա կարող է նաև օգնել ուսանողներին հասնել դասարանում կենտրոնանալու և մասնակցելու այն մակարդակին, որի արդյունքում հաճախ ավելի խորությամբ են հասկանում քննարկվող ավետարանի վարդապետությունները և սկզբունքները, ինչպես նաև ավելի մեծ ցանկություն է առաջանում նրանց սրտերում կիրառել բաները, որ սովորում և զգում են:

Ահա որոշ մտքեր, որոնք կօգնեն ուսուցիչներին ունենալ ներգրավվող և ոգեշնչող դասարանային քննարկումներ.

**Ծրագրել քննարկումը:** Ինչպես ուսուցման այլ մեթոդները, քննարկումը պետք է ուշադիր նախապատրաստել և այնուհետև վարել Հոգու ազդեցության ներքո: Ուսուցիչը պետք է մտածի, թե ինչպես քննարկումը կօգնի ուսանողներին հասկանալ այն, ինչն իրենք պետք է սովորեն, որ հարցերը կառաջնորդեն դեպի այդ նպատակը, ինչպես տալ այդ հարցերը ամենաարդյունավետ եղանակով և ինչպես արձագանքել, երբ ուսանողի պատասխանը քննարկմանը անսպասելի ուղղություն է տալիս:

**Խուսափել որպես ուսուցիչ պետք եղածից ավելի մեկնաբանություններ տալուց:** Այն ուսուցիչները, ովքեր պետք եղածից ավելի մեկնաբանություններ են կատարում քննարկվող թեմայի շուրջ, կարող են խոչընդոտել մասնակցություն ցուցաբերելու ուսանողների ջանքերին, քանի որ նրանք գիտեն, որ իրենց ուսուցիչը հաճախ անհամբերությամբ տալիս է պատասխանը: Ուսուցչի կողմից կատարված պետք եղածից ավելի մեկնաբանությունները կարող են այնպիսի

*Ծանուցում*

տպավորություն ստեղծել ուսանողների մոտ, որ իրենց մասնակցությունը այդքան էլ կարևոր չէ և պատճառ հանդիսանա, որ նրանք կորցնեն իրենց հետաքրքրությունը:

**Հրավիրել բոլոր ուսանողներին մասնակցել:** Ուսուցիչները պետք է ձգտեն գտնել եղանակներ, որ պատշաճ կերպով հրավիրեն բոլոր ուսանողներին մասնակցել իմաստալից քննարկումներին, նույնիսկ նրանց, ովքեր տատանվում են մասնակցել բազմաթիվ պատճառներից ելնելով: Ուսուցիչները պետք է զգույշ լինեն, որ չամաչեցնեն ուսանողներին նրանց կանչելով, երբ գիտեն, որ ուսանողը պատրաստ չէ պատասխանելու համար:

Երբեմն ուսանողը կամ մի քանի ուսանողներ հակված են իշխելու դասարանական քննարկման ժամանակ: Ուսուցիչները պետք է առանձին հանդիպեն նման անհատների հետ, շնորհակալություն հայտնեն նրանց մասնակցելու ցանկության համար, արտահայտեն, թե որքան կարևոր է խրախուսելը, որ բոլոր դասարանի անդամները մասնակցեն և բացատրեն, թե ինչու իրենց կարող է ամեն անգամ արտահայտվելու հնարավորություն չտան, երբ նրանք առաջարկեն պատասխանել:

**Ուսանողներին դիմել անուններով:** Ուսանողներին անուններով դիմելը, երբ հրավիրում եք պատասխանել հարցին կամ մեկնաբանություն անել, օգնում է նպաստել սովորելու համար սիրո և հարգանքի մթնոլորտ ստեղծելուն:

**Մի վախեցեք լռությունից:** Երբեմն, երբ արդյունավետ հարց է տրվում, ուսանողները միգուցե միանգամից չպատասխանեն: Այս լռությունը չպետք է անհանգստացնի ուսուցչին, եթե այն չափից ավելի երկար չի տևում: Երբեմն ուսանողներին հնարավորություն է պետք մտածել, թե ինչ հարց է իրենց տրվել և ինչպես նրանք կարող են պատասխանել այդ հարցին: Այսպես մտածելը կարող է Սուրբ Հոգու ցուցումները մատչելի դարձնել:

**Վերաձևակերպել հարցը:** Երբեմն ուսանողները կարող է դժվարանան պատասխանել հարցին, քանի որ հարցը պարզ չէ: Ուսուցիչը պետք է վերաձևակերպի հարցը կամ հարցնի ուսանողներին, թե արդյոք նրանք հասկանում են հարցը: Ուսուցիչները պետք է խուսափեն մի շարք հարցեր տալուց, առանց ուսանողներին համապատասխան ժամանակ տրամադրելու, որ բավականաչափ խորությամբ մտածեն պատշաճ պատասխան ձևակերպելու համար:

**Ուշադիր լսեք և հարցեր տվեք:** Ուսուցիչները երբեմն այնքան մտահոգված են, թե հաջորդը ինչ են ասելու կամ անելու, որ նրանք ուշադրություն չեն դարձնում, թե ինչ են ասում ուսանողները: Ուշադիր դիտելով և լսելով ուսանողներին ուսուցիչները կարող են որոշել նրանց կարիքները և քննարկումը անց կացնել Սուրբ Հոգու առաջնորդությամբ: Ուսուցիչները կարող են ճշտել, թե արդյոք նրանք հասկանում են ուսանողների պատասխանները, տալով նմանատիպ հարցեր. «Կարո՞ղ եք ինձ օգնել հասկանալ, թե դուք դրանով ինչ ի նկատի ունեք» կամ «Կարո՞ղ եք ինձ համար օրինակ բերել, թե դուք ինչ նկատի ունեք»: Նման հարցեր տալը հաճախ կիրավիրի ուսանողին ավելի շատ կիսվել իրենց մտածածով և զգացածով և հաճախ հրավիրում է վկայության հոգին այդ պատասխանի մեջ: Ուսուցիչները պետք է նաև հիշեցնեն ուսանողներին լսել իրար և չխոսել, երբ մեկը խոսում է:



«Ուսուցիչներ նշանակեք ձեր մեջ, և թող բոլորը միանգամից խոսնակ չլինեն. այլ տվյալ պահին թող մեկը խոսի, և թող բոլորը լսեն նրա ասածները, որ բոլորի խոսելուց հետո, բոլորը կարողանան միմյանցով շենանալ»:

(Վարդապետություն և Ուխտեր 88.122)

**Վերահղել ուսանողի մեկնաբանությունները կամ հարցերը:** Շատ անգամներ դասարանային քննարկումները հետևում են օրինաչափությանը, որտեղ ուսուցիչը հարց է տալիս, ուսանողը պատասխանում է, և հետո ուսուցիչը ավելացնում է իր մտքերը ուսանողի պատասխանին նախքան հաջորդ հարցը տալը: Քննարկումները կարող են շատ ավելի իմաստալից, աշխույժ և արդյունավետ դառնալ, երբ ուսուցիչը վերահղում է պատասխանը կամ մեկնաբանությունը մի ուսանողից մնացած ուսանողներին: Պարզ հարցերը, ինչպես օրինակ. «Ի՞նչ կավելացնեք դուք դրան» կամ «Ի՞նչ եք դուք մտածում այդ մեկնաբանության վերաբերյալ», կարող են ստեղծել օրինաչափություն, երբ ուսանողները պատասխանում են ուսանողներին: Սա հաճախ մեծապես նպաստում է սովորելու փորձառությանը: Սովորաբար, եթե ժամանակը սահմանափակ չէ, բոլոր ուսանողները, ովքեր ցանկանում են մեկնաբանություն անել, պետք է խոսելու հնարավորություն ունենան:

**Դրական ձևով ընդունել պատասխանը:** Երբ ուսանողը պատասխան է տալիս, ուսուցիչը պետք է որոշ ձևով ընդունի այն: Սա կարող է լինել պարզ «շնորհակալություն» ասելը կամ պատասխանի վերաբերյալ մեկնաբանություն անելը: Երբ սխալ պատասխան է տրվում, ուսուցիչը պետք է զգույշ լինի, որ չամաչեցնի ուսանողին: Արդյունավետ ուսուցիչը կարող է կառուցել ուսանողի պատասխանի այն մասի վրա, որը ճիշտ է կամ լրացուցիչ հարց տալ, որը թույլ կտա ուսանողին կրկին մտածել իր պատասխանի շուրջ:

## Միասին կարդացեք սուրբ գրությունները դասարանում [5.3]

Սուրբ գրությունները դասարանում կարդալը կարող է օգնել ուսանողներին ծանոթանալ և ավելի լավ հասկանալ հատվածները, որոնք նրանք ուսումնասիրում են: Դա կարող է նաև օգնել նրանց դառնալ ավելի վստահ սուրբ գրությունները ինքնուրույն կարդալու իրենց կարողության վրա: Ուսուցիչները պետք է զգույշ լինեն չամաչեցնել նրանց, ովքեր լավ չեն կարդում կամ շատ ամաչկոտ են: Ուսանողները, ովքեր գերադասում են բարձրաձայն չկարդալ, չպետք է պարտադրվեն դա անել, այլ ուոուցիչները պետք է քաջալերեն նրանց մասնակցել այն եղանակներով, որոնք ավելի հարմար են իրենց: Օրինակ, նախօրոք կարճ սուրբ գրության հատված ուսանողին հանձնարարելը, որպեսզի նա կարողանա պարապել այն կարդալը, կարող է պատշաճ եղանակ լինել այդ ուսանողի համար դասին մասնակցելու առումով:

Դասարանում սուրբ գրությունները միասին կարդալու համար մի քանի եղանակներ կան.

- Թող ուսանողները բարձրաձայն կարդան կամ առանձինառանձին, կամ միասին:
- Թող ուսանողները կարդան իրար համար:
- Թող ուսանողները մտքում կարդան մի հատված:
- Հանձնարարեք տարբեր ուսանողների կարդալ պատմության մի քանի անհատների խոսքերը:

*Ծանուցում*

- Բարձրաձայն կարդալ ուսանողների համար, մինչ նրանք իրենց սուրբ գրություններով հետևում են։

## Ուսուցչի մատուցումը [5.4]

Մինչդեռ սովորելու գործընթացում ուսանողների ակտիվ դեր կատարելու կարևորությունը շատ մեծ է նրանց սուրբ գրությունները հասկանալու և կիրառելու համար, դա չի լրացնում ուսուցչի կողմից պատշաճ կերպով տեղեկություն ներկայացնելու կարիքը այն ժամանակ, երբ ուսանողները լսում են։ Այս ձեռնարկի նպատակներից ելնելով այն ժամանակները, երբ ուսուցիչը խոսում է և ուսանողները լսում են, կկոչվի «ուսուցչի մատուցում»։ Երբ պատշաճ ձևով է օգտագործվում, ուսուցչի մատուցումը կարող է խթանել ուսուցման մյուս մեթոդներին։ Եթե չարաշահվում է, ինչևիցե, այս ուսուցչի վրա կենտրոնացած գործունեությունը կարող է նվազեցնել ուսուցանելու արդյունավետությունը և սահմանափակել ուսումնասիրելու և հավատքի միջոցով սովորելու ուսանողների հնարավորությունը։

Ուսուցչի մատուցումը կարող է շատ արդյունավետ լինել, երբ ամփոփում են մեծ քանակությամբ նյութ, ներկայացնում են տեղեկություն, որը նորություն է ուսանողների համար, անցում է կատարվում դասի մի քանի մասերի միջև կամ եզրակացություններ են արվում։ Ուսուցիչը պետք է բացատրի, պարզաբանի և լուսավորի, որպեսզի ուսանողները ավելի պարզ հասկանան սուրբ գրության հատվածի համատեքստը։ Ուսուցիչը նաև պետք է շեշտի կարևոր վարդապետությունները և սկզբունքները և հորդորի ուսանողներին կիրառել դրանք։ Հավանաբար ամենակարևորն այն է, որ ուսուցիչները կարող են վկայել ավետարանի ճշմարտությունների մասին և արտահայտեն իրենց սերը Երկնային Հոր և Նրա Որդու հանդեպ։

Ուսուցչի մատուցումն օգտագործելիս, ինչպեսև ուսուցման այլ մեթոդներ կիրառելիս, ուսուցիչները պետք է շարունակաբար գնահատեն, թե ինչպես են ուսանողները ընդունում այն, իրենք իրենց նմանատիպ հարցեր տալով. «Արդյո՞ք իմ ուսանողները հետաքրքրված ու կենտրոնացած են» և «Նրանք հասկանու՞մ են, թե ինչ է ներկայացվում»։ Վերջում այս կամ ցանկացած այլ մեթոդի արդյունավետությունը որոշվում է նրանով, թե ուսանողները Հոգով են սովորում, հասկանում են սուրբ գրությունները և ցանկանում են կիրառել այն, ինչ սովորում են, թե ոչ։



Հետևյալ գաղափարները կարող են օգնել ուսուցչին օգտագործել այս մեթոդը ավելի արդյունավետորեն։

**Ծրագրել դասի ուսուցչի մատուցման մասերը:** Սովորաբար ուսուցիչները ուշադրությամբ պատրաստում են դասի այլ մասերը, սակայն նույն ուշադրությունը չեն դարձնում դասի այն մասերի վրա, որտեղ նրանք պետք է ամենաշատը խոսեն։ Ուսուցչի մատուցման հետ կապված մտահոգություններից մեկն այն է, որ ուսանողները կարող են հեշտությամբ դառնալ միայն պասիվ մասնակիցներ սովորելու փորձառության ժամանակ։ Ուստի, ուսուցչի մատուցումը նույնպես պետք է ուշադրությամբ ծրագրել և նախապատրաստել, որը ներառում է որոշելը,

*Ծանուցում*

թե ինչպես սկսել և ինչպես զարգացնել ուսուցումը տրամաբանական եղանակով:

Ուսուցչի մատուցումն օգտագործելիս, ուսուցիչները պետք է խորհեն, թե որտեղ է ուսանողների համար հատկապես կարևոր ակտիվ դեր կատարել: Հիմնականում, երբ դասը զարգանում է սուրբ գրության հատվածի համատեքստը և բովանդակությունը հասկանալուց դեպի սկզբունքների և վարդապետությունների բացահայտում, քննարկում և կիրառում, ուսանողների ակտիվ դեր կատարելու կարևորությունը մեծանում է:

**Միավորել ուսուցչի մատուցումն այլ մեթոդների հետ:** Ուսուցչի մատուցումը դասարանում արդյունավետ օգտագործելու համար անհրաժեշտ է օգտագործել այն որպես ընդհանուր դասի ծրագրի մի մաս, որը միավորում է այլ մեթոդներ և մոտեցումներ ուսուցման մեջ: Մատուցումը պետք է բավականաչափ ճկուն լինի, որ թույլ տա փոփոխություն, երբ ակնհայտ դառնա, որ ուսանողները ձանձրացած կամ շփոթված են: Այս դեպքում, նույնիսկ երբ ուսուցիչը խոսում է, ուշադրությունը մնում է ուսանողների վրա և սովորելու վրա, և ուսուցիչը կարող է անհրաժեշտության դեպքում հարմարեցումներ կատարել: Ինչ-որ մեկը մի անգամ նմանեցրել է ուսուցչի մատուցումը մարգարտե մանյակի թելին: Մարգարիտները ուսուցչի օգտագործած բազմաթիվ մեթոդներն են (հարցեր, քննարկում, խմբակային աշխատանք, տեսաձայնագրային ներկայացումներ, և այլն), սակայն դրանք ամրացվում և միավորվում են ուսուցչի հրահանգների և բացատրության միջոցով: Առանձին թելը գրավիչ մանյակ չի կազմում:

**Օգտագործել պատշաճ բազմազանություն:** Ուսուցչի մատուցման մեջ բազմազանություն ներկայացնելու եղանակներ կան: Ուսուցիչները կարող են խուսափել նույնատիպությունից փոխելով ձայնի ելևէջները, տոնը և բարձրությունը և սենյակում տեղից տեղ գնալով մատուցման ընթացքում: Կարող է նաև բազմազանություն լինել ներկայացվող նյութի մեջ: Օրինակ, ուսուցիչները կարող են իրար հետ կապել պատմությունները, օգտագործել պատշաճ հումոր, անդրադառնալ նկարներին կամ այլ բաների, որոնք ցուցադրված են դասարանում և վկայություն բերել: Ուսուցչի մատուցման պատշաճ բազմազանությունը պետք է միշտ մեծացնի սուրբ գրությունները հասկանալու և կիրառելու ուսանողների ունակությունը:



## Պատմություններ [5.5]

Պատմությունները կարող են օգնել ամրացնել ուսանողների հավատքը առ Հիսուս Քրիստոսի ավետարանը: Դրանք կարող են առաջ բերել հետաքրքրություն և օգնել ուսանողներին հասկանալ ավետարանը փորձված փորձառությունների միջոցով: Պատմությունները կարող են նաև հատկապես արդյունավետ լինել, երբ օգնեն ուսանողներին հասկանալ ավետարանի սկզբունքները, որոնք ներկայացվում են սուրբ գրության հատվածում: Ավետարանի սկզբունքը ժամանակակից համատեքստում պարզաբանելով, ի լրացումն սուրբ գրության համատեքստի, պատմությունները կարող են օգնել ուսանողներին հասկանալ, թե ինչպես է ավետարանի սկզբունքը կապված իրենց կյանքի հետ, ինչպես նաև օգնում է նրանց ցանկություն զգալ կիրառել այն:

*Ծանուցում*

Երեց Բրյուս Ռ. Մակքոնկին ուսուցանել է. «Իհարկե կարելի է պատմել հավատք առաջ բերող ժամանակակից պատմություն, որը պատահել է մեր տնտեսությունում: . . . Իրոք, սա պետք է ամբողջությամբ քաջալերվի: Մենք պետք է ամեն ջանք գործադրենք, որ ցուցադրենք, որ նույն բաները տեղի են ունենում Սրբերի կյանքում այսօր, ինչպես տեղի են ունեցել հավատարիմների մեջ հնում: . . .

Հավանաբար հավատք առաջացնող պատմություններ ներկայացնելու կատարյալ օրինաչափություն է սովորեցնել այն, ինչ գտնվում է սուրբ գրություններում և հետո կնքել այն կենդանի իրականությամբ, պատմելով նմանատիպ և հավասարազոր բան, որ պատահել է մեր տնտեսությունում և մեր մարդկանց հետ և, ամենակարևորը, մեր հետ որպես անհատներ» ("The How and Why of Faith-Promoting Stories," *New Era,* July 1978, 4–5):

Ուսուցիչները կարող են կիսվել պատմություններով մարգարեների կյանքից և Եկեղեցու պատմությունից, ինչպես նաև պատմություններ գերագույն համաժողովի ելույթներից և Եկեղեցու թերթերից: Նրանք կարող են նաև կիսվել իրական պատմություններով իրենց սեփական փորձառությունից: Սովորելու համար ամենաիմաստալից և ազդեցիկ փորձառությունները առաջ են գալիս, երբ ուսուցիչները հրավիրում են ուսանողներին կիսվել պատմություններով իրենց սեփական կյանքից, որոնք ցույց են տալիս, թե ինչպես են նրանք օրհնվել ավետարանի սկզբունքով ապրելով:

Որոշ նախազգուշացումներ և խորհուրդ պետք է նշվի պատմություններ օգտագործելու հետ կապված:

- Եթե պատմություններ պատմելը դառնում է ուսուցման գերակշռող մեթոդը կամ հմտությունը, հենց պատմությունները կարող են դառնալ դասի կենտրոնը, նվազեցնելով իրական ժամանակը, որ պետք է ծախսվեր սուրբ գրությունների վրա և ծածկելով վարդապետությունները և սկզբունքները, որոնք դրանք ուսուցանում են:
- Ուսուցիչների սեփական կյանքի պատմությունների չափից ավելի օգտագործումը կարող է հանգեցնել սեփական անձը մեծարելուն և տպավորություն ստեղծվի, որ ուսուցիչները «իրենք իրենց բարձր են դնում՝ իբրև մի լույս աշխարհի համար» (2 Նեփի 26.29):
- Մինչդեռ պատմությունները կարող են լուսաբանել և կենդանացնել սուրբ գրությունների ուսուցումը և օգնել ուսանողներին զգալ Հոգու զորությունը, դրանք երբեք չպետք է օգտագործվեն էմոցիաներ առաջացնելու համար:
- Ուսուցիչները պետք է զգույշ լինեն, որ չգունազարդեն ճշմարիտ պատմության փաստերը այն ավելի հուզիչ կամ տպավորիչ դարձնելու համար:
- Եթե պատմությունը իրական չէ, ինչպես օրինակ զվարճալի պատմությունը, որը բացահայտում է նպատակը, պատմության սկզբում պետք է պարզ ասել, որ այն իրական չէ:

## Փոքր խմբերով քննարկումներ և հանձնարարություններ [5.6]



Երբեմն օգտակար է դասարանը զույգերի կամ փոքր խմբերի բաժանելը, որպեսզի ուսանողները կարողանան մասնակցել սովորելու գործընթացին կամ քննարկմանը միասին: Փոքր խմբերով վարժությունները հաճախ կարող են ավելի մեծ թվով ուսանողների թույլ տալ մասնակցել և կարող են ապահով մթնոլորտ ստեղծել, որտեղ ուսանողները կարող են իրար հետ կիսվել զգացմունքներով, մտքերով և վկայությամբ: Այս վարժությունները կարող են նաև հնարավորություններ տալ ուսանողներին ուրիշներին ուսուցանել ավետարանը և օգնել պատրաստել նրանց ուսուցանել ավետարանը հետագայում: Փոքր խմբերով քննարկումները կարող են արդյունավետորեն ներգրավել նրանց, ովքեր թվում է, թե կորցնում են հետաքրքրությունը և կենտրոնացվածությունը, ինչպես նաև ուսանողներին թույլ են տալիս զարգացնել շփվելու հմտություններ և ամրացնել պատշաճ հասարակական և հոգևոր հարաբերություններ: Դրանք կարող են նաև վստահություն առաջացնել զուսպ ուսանողների մեջ, նպաստելով, որ նրանք ավելի իմաստալից մասնակցություն ցուցաբերեն:

Երբ ուսանողները աշխատում են զույգերով կամ փոքր խմբերով, կարող է օգտակար լինել մտքում հետևյալը պահելը.

- Նախքան ուսանողներին փոքր խմբերի բաժանելը ուսուցիչները պետք է պարզ ցուցումներ տան, թե ինչ է ուսանողներից ակնկալվում անել վարժության ժամանակ: Հաճախ օգտակար է լինում գրատախտակին այս ցուցումները գրի առնելը կամ գրված նրանց բաժանելը, հնարավորություն տալով ուսանողներին կրկին անդրադառնալ դրանց վարժության ժամանակ:
- Փոքր խմբերով ուսուցողական վարժությունները, որոնք առնչություն ունեն ուսանողների կյանքի և պայմանների հետ, հիմնականում առաջ են բերում ավելի մեծ հետաքրքրություն և մասնակցություն:
- Յուրաքանչյուր խմբի համար ուսանող առաջնորդ նշանակելը, ինչպես նաև ժամանակի որոշակի սահմանափակումը օգնում է խմբին չշեղվել: Երկարատև խմբակային վարժությունները հաճախ հանգեցնում են նրան, որ խմբերը ավարտում են տարբեր ժամանակներում և կարող են անկարգություն առաջ բերել դասարանում:
- Հիմնականում ուսանողները մասնակցում են վարժությանը ավելի մեծ հետաքրքրությամբ, եթե ուսուցիչը նախօրոք հրավիրում է նրանց պատրաստվել կիսվել կամ սովորեցնել դասարանին մի բան, ինչը նրանք սովորել են վարժությունից: Սա նաև հնարավորություններ է տալիս ուսանողներին փորձել սովորեցնել ավետարանը ուրիշներին:
- Ուսանողները հաճախ ավելի լավ են աշխատում խմբերով, երբ նրանք ուսումնասիրում են սուրբ գրությունները, կարդում են մեջբերումներ կամ կատարում են մեկ այլ առաջադրանք անհատապես, նախքան միասին հավաքվելը:

*Ծանուցում*

- Հինգ կամ ավելի ուսանողներ ունեցող խմբերում յուրաքան-չյուրի իմաստալից մասնակցությունը կարող է դժվարանալ: Բացի դրանից, մեծ խմբերը հիմնականում ավելի շատ դժվա-րություններ են ունենում չշեղվելու հետ կապված:
- Փոքր խմբերով աշխատելը միգուցե լավագույն մեթոդը չլինի պարզ հարցերին պատասխանելու համար, ուսանողներին խմբերի բաժանելու համար պահանջվող ժամանակի պատճա-ռով:
- Երբ խմբերով սովորելու վարժությունները չափից շատ են օգտա-գործվում, դրանք կարող են ավելի քիչ արդյունավետ դառնալ:

Փոքր խմբերով քննարկումների կամ հանձնարարությունների ժամա-նակ ուսանողները կարող են շեղվել վարժության նպատակից, անդ-րադառնալ անձնական խնդիրների կամ լրջորեն սովորելու ջանքեր չգործադրեն: Ուսուցիչը, ով շարունակում է ակտիվորեն մասնակցել խմբից խումբ անցնելով և հետևելով ուսուցողական վարժությանը, կարող է օգնել ուսանողներին չշեղվել և առաջադրանքից շատ բան սովորել:



## Գրավոր վարժություններ [5.7]

Ուսուցիչները պետք է հրավիրեն ուսանողներին մասնակցել գրավոր վարժություններին, ինչպիսին են գրառումներ կատարելը, օրագիր կազմելը, աշխատանքային թերթիկները, անձնական մտորումները և շարադրությունները: Երբեմն ուսանողներին մտքեր առաջ բերող հարցերի գրավոր պատասխանել հրավիրելը օգնում է խորացնել և պարզաբանել նրանց մտածելը: Ուսանողներին հրավիրելը, որ գրավոր պատասխանեն հարցին նախքան իրենց մտքերը դասարանի հետ կի-սելը նրանց ժամանակ է տալիս կազմակերպել իրենց գաղափարները և ոգեշնչումներ ստանալ Սուրբ Հոգուց: Ուսանողները կարող է ավելի հակված լինեն կիսվելու իրենց մտքերով, երբ նրանք նախ գրել են դրանք, և այն ինչ նրանք կկիսեն, հաճախ կլինի ավելի իմաստալից: Այլ բաների շարքում, գրավոր հանձնարարությունները ուսանողնե-րին հնարավորություններ են տալիս անձամբ մասնակցել, ոգեշնչում ստանալ, պատրաստվել ուսուցանել և կիսել իրենց զգացմունքները ուրիշների հետ, ընդունել Տիրոջ ձեռքը իրենց կյանքում և արտահայտել վկայություն: Երբ ուսուցիչները որոշում են, թե որ գրավոր վարժու-թյուններն են նպատակահարմար սովորելու փորձառության համար, նրանք պետք է մտածեն այս սկզբունքի վերաբերյալ, որը կիսել է Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը. «Գրի առնելը այն, ինչը մենք սովորում, մտածում և զգում ենք մինչ մենք ուսումնասիրում ենք սուրբ գրությունները, խոր-հելու մեկ այլ միջոց են և հզոր հրավեր Սուրբ Հոգու համար՝ շարու-նակաբար ուսուցանվելու համար» (“Because We Have Them before Our Eyes, New Era, Apr. 2006, 6–7):

Գրավոր վարժությունները այն ուսանողների համար, ովքեր ավելի փոքր են կամ ում ունակությունները ավելի սահմանափակ են, պետք է հարմարեցվեն, որ օգնեն նրանց հաջողության հասնել: Օրինակ, ուսու-ցիչը կարող է պատրաստել լրացնել բացթողումները վարժություն, որ-տեղ տեղեկության մեծ մասը տրված է ուսանողներին և նրանցից քիչ բան է պահանջվում: Ուսուցիչները կարող են օգնել այս ուսանողներին կենտրոնացնելով գրավոր հանձնարարությունը սուրբ գրությունների

կարճ հատվածների վրա կամ հատուկ հարցերի վրա և նրանց բավականաչափ ժամանակ տան հանձնարարությունը լրացնելու համար:

Ուսանողները ընդհանուր առմամբ ավելի շատ են օգտվում գրավոր վարժություններից, երբ.

- Ուսուցիչները ապահովում են պարզ, գրավոր ցուցումներ, որոնց ուսանողները կարող են շարունակաբար անդրադառնալ հանձնարարության ողջ ընթացքում:
- Վարժությունը կենտրոնացնում է նրանց մտքերը ավետարանի ճշմարտությունների վրա, որոնք վերաբերվում են իրենց անհատական պայմաններին:
- Վարժությունը աջակցում է նրանց անձամբ կիրառել այդ ճշմարտությունները:
- Ուսանողներին իրենց ուսուցիչները օգնում և աջակցում են գրավոր վարժության ողջ ընթացքում:
- Ժամանակը սահմանված է վարժության դժվարությանը համապատասխան:
- Ուսանողները հրավիրված են բացատրել, կիսվել կամ վկայել մի բանի վերաբերյալ, որ իրենք սովորել են վարժությունից:
- Ուսանողները վստահ են, որ գրավոր վարժությունները, որոնք կենտրոնանում են անձնական զգացմունքների կամ նվիրումների վրա, չեն կիսվի ուրիշների հետ, ներառյալ ուսուցչի, առանց ուսանողի թույլտվության:
- Վարժությունը դասի ծրագրի իմաստալից մասն է կազմում և չի տրվում որպես «զբաղված աշխատանք» կամ որպես պատիժ վատ արարքի դիմաց:
- Այլընտրանքային մեթոդներ կամ ձայնագրող մտքեր ու գաղափարներ են պատրաստված նրանց համար, ովքեր դժվարություններ ունեն գրելու հետ կապված: Նրանք կարող են ներառել մեկ այլ ուսանողի գործել որպես քարտուղար, կատարելով ձայնագրային ձայնագրություն և այդպես շարունակ:
- Գրավոր վարժությունները չեն չարաշահվում:

*Ծանուցում*

## Գրատախտակ [5.8]

Լավ նախապատրաստած գրատախտակը կարող է լինել ուսուցչի նախապատրաստության հիմքը և դասարանում լրացնել նպատակի զգացողությունը: Դասի ժամանակ գրատախտակը արդյունավետորեն օգտագործելը կարող է նախապատրաստել ուսանողներին սովորել և առաջ բերել իմաստալից մասնակցություն, հատկապես նրանց համար, ովքեր հակում ունեն տեսողական սովորելու: Երբ օգտագործում են գրատախտակը, ուսուցիչները պետք է հիշեն գրել բավականաչափ ընթեռնելի ու մեծ, որ բոլորը տեսնեն, համոզվելով, որ նյութը լավ է տեղավորված, կանոնավոր ձևով և հեշտությամբ է կարդացվում: Որտեղ գրատախտակը մատչելի չէ, թղթի մեծ կտորը կամ պաստառը կարող են ծառայել նույն նպատակին:



*Ծանուցում*

Գրատախտակի վրա ուսուցիչը կարող է գրել դասի հիմնական նպատակները կամ սկզբունքները, տալ վարդապետության կամ իրադարձության գծապատկերը, քարտեզներ գծել, պատկերել հերթականության գրաֆիկ, ցուցադրել կամ նկարել որոշ բաների նկարներ, որոնք գտնվում են սուրբ գրություններում, կազմել աղյուսակներ, որոնք ցույց են տալիս պատմական իրադարձությունները, կազմել ցուցակ բաների, որոնք գտնվում են սուրբ գրություններում, երբ ուսանողները գտնում են դրանք կամ անել բազմաթիվ այլ վարժություններ, որոնք կնպաստեն սովորելուն:

## Առարկաներ և նկարներ [5.9]



Հաճախ դժվար է ուսուցանել ավետարանի անշոշափելի հայեցակետերը: Առարկաներ և նկարներ օգտագործելը կարող է արդյունավետ եղանակ լինել ուսուցիչների համար օգնել ուսանողներին հասկանալ հոգևոր սկզբունքները: Օրինակ, ծանոթ առարկան, ինչպես օճառը, կարող է օգնել ուսանողներին հասկանալ ավելի վերացական սկզբունք, ինչպես ապաշխարությունը: Փրկիչը հաճախ անդրադարձել է աշխարհիկ առարկաների (ինչպես հացը, ջուրը, մոմերը և հացահատիկը), որ օգնի Իրեն լսողներին հասկանալ հոգևոր սկզբունքները:

Առարկաները և նկարները կարող են օգտագործվել, որ օգնեն ուսանողներին պատկերացնել, թե ինչպիսին են եղել մարդիկ, վայրերը, իրադարձությունները, առարկաները և խորհրդանիշները սուրբ գրություններում: Բեռների (տես Մատթեոս ԺԱ.28–30) մասին լոկ խոսելու փոխարեն ուսուցիչը կարող է մի բեռ բերել դասարան, ցույց տալ նկար կամ ցուցադրել այն գրատախտակի վրա: Ուսանողները պետք է շոշափեն և հոտ քաշեն ծաղիկից, երբ նրանք կարդում են «դաշտի շուշանների» մասին (Մատթեոս Զ.28–29): Նրանք կարող են համտեսել հացը:

Առարկաները և նկարները, ներառյալ քարտեզները և աղյուսակները կարող են արդյունավետ լինել, երբ օգնեն ուսանողներին պատկերացնել, վերլուծել և հասկանալ սուրբ գրությունները, հատկապես երբ դրանք օգտագործվում են քննարկում անցկացնելու համար: Ցուցադրված առարկա կամ նկար ունենալը, երբ ուսանողները մտնում են դասարան, կարող է նպաստել սովորելու մթնոլորտին և ուսանողների մեջ առաջ բերել հետաքրքրության հոգին:

Երբ օգտագործում եք առարկաներ կամ նկարներ, պետք է զգույշ լինել երկու բաներից: Առաջինը, դրանք պետք է միշտ ակնառու դարձնեն դասի նպատակը և ոչ թե շեղեն դրանից: Երկրորդը, սուրբ գրության պատմության իրադարձության միջավայրը և մանրամասները միշտ պետք է աղբյուր լինի դասարանային քննարկման համար, այլ ոչ թե արվեստագետի բացատրությունները իրադարձության կամ պատմության շուրջ:

## Տեսալսողական և համակարգչային ներկայացումներ [5.10]

*Ծանուցում*

Սուրբ գրությունները լի են այնպիսի պատմություններով, որտեղ Տերն օգնում է Իր զավակներին հասկանալ Իր ուսմունքները տեսնելու և լսելու միջոցով (տես 1 Նեփի 11–14, ՎևՈՒ 76, Մովսես 1.7–8, 27–29)։ Երբ տեսալսողական և տեխնոլոգիական միջոցները պատշաճորեն և արդյունավետորեն են օգտագործվում, կարող են օգնել ուսանողներին ավելի լավ հասկանալ սուրբ գրությունները և սովորել ու կիրառել ավետարանի ճշմարտությունները։



Տեսալսողական միջոցները կարող են պատկերել սուրբ գրությունների կարևոր իրադարձությունները և կարող են օգնել ուսանողներին պատկերացնել և փորձառություն ձեռք բերել այս իրադարձությունների հետ կապված։ Այս աղբյուրները կարող են ներկայացնել, թե ինչպես են մարդիկ կիրառում ավետարանի սկզբունքները իրենց դժվարությունները և խնդիրները հաղթահարելու համար և կարող են հնարավորություններ տալ Հոգուն վկայություն բերելու ճշմարտության մասին։

Համակարգչային տեխնոլոգիան թույլ է տալիս ուսուցիչներին ցուցադրել տեսագրություններ. ներկայացնել կարևոր հարցեր, պատկերացումներ կամ Բարձրագույն Իշխանավորներից մեջբերումներ, կամ ընդգծել սկզբունքներ և վարդապետություններ, որոնք ներկայացվել են դասի ժամանակ։ Համակարգչային ներկայացումները նույնպես կարող են օգտագործվել հիմնականում նույն ձևով, ինչպես գրատախտակը կարող է օգտագործվել՝ նշելու դասի կարևորագույն նպատակները, ներկայացնել սուրբ գրության հղումները և տեսողական ուսուցում ապահովել զույգերով, խմբով կամ անհատական սովորելու գործունեության ժամանակ։ Այս ձևով տեխնոլոգիան օգտագործելը կարող է օգտակար լինել ուսանողների համար, ովքեր սովորում են տեսողական եղանակով և կարող է օգնել ուսանողներին դասավորել և ավելի լավ հասկանալ այն, ինչ նրանք սովորում են։

Տեսալսողական, համակարգչային կամ այլ տեխնոլոգիական միջոցները օգտագործելը պետք է օգնի դասերը դարձնել պարզ, հետաքրքիր և հիշվող և չպիտի խանգարի ուսանողներին զգալ Հոգու ազդեցությունները։

Տեսալսողական ներկայացումները կարող են լավագույնս օգնել ուսանողներին սովորել և կիրառել ավետարանի սկզբունքները, երբ դրանք օգտագործվում են մտքեր և զգացմունքներ առաջ բերելու համար և ընկղմում են ուսանողներին սուրբ գրության տեքստի մեջ։ Կարող է օգտակար լինել գրատախտակին առանձնահատուկ բաներ գրելը, որոնց վրա ուսանողները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն կամ հարցեր, որոնց վերաբերյալ նրանք կարող են մտածել, մինչ նրանք կդիտեն կամ կլսեն ներկայացումը։ Նաև կարող է արժեքավոր լինել ներկայացման ընթացքում դադար տալը հարցեր տալու համար

*Ծանուցում*

կամ տեղեկությունը շեշտելը, որը կօգնի ուսանողներին: Շատ անգամներ տեսալսողական աղբյուրի միայն կեսն է անհրաժեշտ ուսուցչի նպատակը իրականացնելու համար: Ուսուցիչները, ովքեր միավորում են այլ մեթոդներ, ինչպես օրինակ քննարկման և գրի առնելու վարժությունները զանգվածային լրատվամիջոցների և տեխնոլոգիայի օգտագործման հետ համատեղ կմեծացնեն հավանականությունը, որ ավետարանի սկզբունքները կհասկացվեն: Հնարավորության դեպքում տեսալսողական ներկայացման ենթագիրը օգտագործելը կարող է մեծացնել ուսանողների հասկացողությունը և մտապահելու հնարավորությունը, հատկապես նրանց համար, ովքեր լսելու հետ կապված խնդիրներ ունեն:

Երբ դասի ժամանակ օգտագործում են տեսալսողական միջոցներ կամ համակարգչային տեխնոլոգիաներ, ուսուցիչները պետք է պարագաները նախապատրաստեն նախքան դասի սկսվելը և համոզվեն, որ այն լավ է աշխատում: Նրանք նաև պետք է համոզվեն, որ բոլոր ուսանողները կկարողանան լսել ներկայացումը և տեսնել այն իրենց նստած տեղերից: Նախքան դասը ուսուցիչները պետք է պատրաստեն տեսալսողական կամ համակարգչային միջոցները, որ ճիշտ տեղից սկսվեն, երբ պետք լինեն դասի ժամանակ: Նաև կարող է լավ միտք լինել ուսուցիչների հիմար փորձել ելույթի համար նախատեսված տեխնոլոգիան օգտագործելը նախքան դասի ժամանակ այն օգտագործելը:

## Ուղեցույցներ [5.10.1]

